



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

21265
21266

39(=9157)
4-82 19

2010

40366-ար.

835.

ԱԲՐԱՀՈՅ ԼԻՆԿՈԼՆ

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ԱԶԱՏՈՂՔ.

Ե Ր Ե Խ Ա Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Ր
ՊԱՏՐՈՒԹՅՈՒՆ Ա Շ Ա Վ Ա Ր
1004 1881 ՊԱՏՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՑՄԵՑ Վ. ՔՈՖՄԱՆ:

ԹԱՐԳՄ. ՄԻՐԶԱ. ՏԵՐ-ԱԱՐԳՄԵԱՆՑ.

Ճ Ո Ւ Ճ Ի.

Միքղաջան Մականեսի. Յակովեանցի Տպարանում:

1888.

ԵՐԿՐՈՒ ԽՊԾՔ.

ԺԼՈՒՎԱ ՊԱՇՄԱՋԱՅ

ԱՐԱՅԱՆ ՎՎՈՒՄ 1120

Դозволено Շենզурою Տիֆլիսъ, 26

Іюля 1888 г.

ՏԱՐԱՎԻՐՈՒՄ-ԴՐԱ ԱՐԱՅԱՆ ՎՎՈՒՄ

45406

Առանձնապես համարյական համար Ա-մահուրդ


.8821

Скоропечатия книгопродавца М.Мугдусіакопова, въШушѣ.

Գեռ 1885 -ին թարգմանելով գրքոյնս, զանազան արգելառիթ հանգամանքներից ստիպուած՝ չկարողացայ իւր ժամանակին լոյս ընծայել: Թէպէտ մենք ունինք Լինկօլնի և մի ուրիշ թարգմանութիւնը «Շար. Մունթ'ի»-ից օր. Սատիլդա Տէր-Վիքայէլեանցի, բայց նկատելով, որ այդ թարգմանութիւնը չէ տալիս մեզ Աբրահամ Լինկօլնի կեանքի այն մանրամասն և չետաքրքիր պատմութիւնը, ինչ որ տալու է իմ թարգմանածը «Հօֆման»-ից, հարկ համարեցի առանց տպագրութեան չթողնել նրան:

Առանձնապէս հայ երեխաներին նուիրելով իմ ներկայ վաստակը խնդրում եմ նրանց կարգաւայս գրքոյնը և աշխատել հետեւ Աբրահամ Լինկօլնի օրինակին, գործել նրա նման բարի և առաքինի գործեր . . . :

Մ. Տ. Ա.



լեան ժամի եօթին, այսինքն թատրոնական ներկայացումից ուղիղ մի ժամ առաջ՝ ժողովուրդը խումբ դիմում էր Վաշինգթոնի գլխաւոր թատրոնը։ Աերջապէս գուները բացուեցան և ժողովրդեան խուռն բազմութիւնը շտալեց տեղ վերցնելու։ Այդ երեկոյ ամեն մարդ ցանկանում էր թատրոնում լինել և աշխատում էր լաւ տեղ բռնել։

Շուտով թատրոնը լցուեցաւ. այլ ևս նըստելու տեղ չկար. Նատ հարուստ մարդիկ բաղդաւոր կը համարուէին, եթէ նրանց յաջողուէր գտնել գոնէ այնպիսի տեղ, ուր կարելի լինէր կանգնել ներկայացման ամբողջ ժամանակամիջոցին։

Միայն մի օֆեակ՝ աջ կողմի երկրորդ կարգում՝ դեռ ևս դատարկ էր։ Բոլորի աչքերն անդադար այդ կողմն էին նայում և ագահութեամբ դիտում դատարկ օֆեակը։

— Սրգեօք կը գայ նա. շշնջալով. հարցըց մի կարգին հաղնուած տիկին իւր կողքի նըստածին։

— Ես հաւատացած եմ, որ նա կը հասնի, յարեց վերջինս. — մինչև սկսուիլ դեռ հինգ րոպէ կայ, իսկ նա այդքան ուշանալու գործ չունի։

— Անշուշտ կը գայ, հաւատացըց միտքի պարոն, մանաւանդ որ ահա յայտարութեան մէջ գրուած է։ Սակայն այս այլու միանալու մասը անկախ է այս անձինքի մասը։ Սակայն նրան կարող են ուշացնել անառ կրնկալ գործերը կրկնեց ափինը։ Այս չեթէ թումանալի որ նա չէր գալ ։ Այս առաջնական մասը միշտ լցուած է սրահը և աշխատաւոր ամբողջ ցանկանում է տեսնել իւր ծերունուն։

— Ո՛հ, քանի սև գլուխներ կան այնպեզ։

— Եւ ինչպէս գոյնզգոյն ։ Համաց առաջնական մասը գոյն ծերունուն։

— Խեղճէր նրանք յիրաւի եկած են փառաւ բանելու իրանց ազատչին ։ Ինչ բան հարու Ոլդ Արքին ուռամի ուռամամալի։ Սիս ուրախութեան աղաղակը խառնուելով երաժշտութեան խլացուցէք ձայնի հիման կըտրեց կանանց զրոյցը։ Կարծես գահին պահանջման պատրաստվում էին փլչելու։ Այս անձին կերջապէս բացուեց գուուը։ Եւ օֆեակում երևացին երկու կինուեւ երկու մարդ։ Աերջին ներից մեծը համեսփօրէն գլուխ անալով հանագիսականներին՝ նստեց իրան համար Այսաւուկ պատրաստուած գահուքի վրայ։ Միւսները տեղաւորաստուած գահուքի վրայ։ Միւսները տեղաւորաստուեցան նրա շուրջը։

Ներս մտնողը, որին ամբոխն այդպէս կիառ-
քով ընդունեց՝ Աբրահամ Լինկօլննէր, Հիւսի-
սալին Ամերիկայի Միացեալ Նահանգների նա-
խագահը, Հարաւայինների յազթողը, սարուկ-
ների ազատողը, ժողովրդի սիրելին, որը նրան
անուանում էր Old Abe—ծերունի Եբ (Անե
Աբրահամ անուան կը ճատածը):

Այսօր, այս փառաւոր յաղթութեան օրը,
ժողովուրդը կրկնակի սիրով և փառաբանու-
թեամբ դիտում էր իւր հերոսին: Նեգրները,
որինց ներկայութիւնն առանց ուշադրու-
թեան չմնայ շեղ հագնուած տիկնոջից, չէին
զսպվում: Նրանց առջև նստելով շատ սպի-
տակ մարդիկ՝ արգելք էին լինում նրանց տես-
նելու նախագահին. սակայն շուտով նրանք
այս դժբաղդութեան առաջն առին, այնէ՛ հեր-
ժով մէկը միւսի ուսերի վրայ բարձրանալով՝
կարողացան բոլորը տեսնել: Այդ միջոցին նը-
րանք չէին խնայում իրանց սպիտակ կոկորդը
չգելու, բարձրացնելու: Նրանց սպիտակ ատամ-
ները փալում էին հաստ, կարմիր և ուրա-
խութեան ծիծաղից լայն բացուող զրժունք-
ների միջից:

(*) Պէնդ այսանդ շատ տեղ կը հանդիպնաք է՛ Աբրահամ
և էր անուննեցին, որոնք մի և նոյնն են:

Յիրաւի ու եղբայրները, ինչպէս տիկինն
առաջ նկատեց, մի բանի համար պիտի փառա-
ւորէին նախագահին: Ինչպէս մի ժամանակ
Աստուած Մովսէսին ասաց, «Ես տեսի իմ
ժողովրդի թշուառութիւնը Եգիպտասում և
ուղարկեցի քեզ Փարաւանի մօտ, որ գու նրան
գերութիւնից ազատես», — այսպէս էլ կար-
ծես ներքին ձայնն ասում էր Աբրահամ Լին-
կօլնին, «Ես տեսի իմ ժողովրդի չարչարան-
քը և քեզ ընտրեցի, որ նրան ստրկութիւնից
ազատես»: Այդպէս ահա Լինկօլնը լսելով իւր
ներքին ձայնը՝ անյողդողդ կերպով հետեւում
էր իւր սուրբ նպատակին: Որտեղ միան նա կա-
րող էր, որտեղ միայն գէպքը յաջողաւմ էր,
այնտեղ նա գործում էր ընդդէմ ստրկու-
թեան: Որա համար ստրկատէրերը խիստ ատում
էին նրան և ուրիշ անուն չէին տալիս, բայց
էթէ «Նեգրների նախագահ»: Այս անուրմանը
Նրանք երդվում էին, որ սպատաստ են
աւելի Միացեալ Նահանգների հետ ունեցած
հաղորդակցութիւնը կտրել քան իրանց մի
ստրկին անգամ ազատութիւն տալ: Ստրկու-
թիւնը վերացնելու գործում նրանք տեսնում
էին իրանց անկումը, որը սպառնում էր մին-
չև անգամ իրանց գործութեան, և այդ պատ-

ճառով վճռել էին մինչեւ վերջին շունչը դիմադրել: Նրանք, առհասարակ, պնդում էին, որ ոչ նախագահը և ոչ Օրէնսդրական ժողովը իրաւունք չունին այդ գործի մէջ խռունուելու, յայտնելով որ այդ պարզ ընտանեկան հարց է, որ չի պատկանում կենդրոնական իշխանութեան իրաւասութեանն անդամ: Նրանք այս ասում էին այն ժամանակ, երբ էին կօլնը դեռ ևս նախագահ չէր, այլ ներկայանում էր իբրև բարձրագոյն ժողովի անդամ:

Լինկօլնն իմանում էր, որ հարաւային նահանգների սպիտակ բարոնները շատ ժանանց եւ բանուորների աշխատանքը գնահատելու և շատ հպարտ նրանց իրանց բարեկամ կամ եղբայր ճանաչելու, այլ ճանաչում են նրանց իբրև ստոր արարածներ: Դրա համար նա իւր խօսքի վրայ հաստատ մնաց և միանդամալն յայտնեց. «Ես նախապատիւ կը համարեմ այստեղ սպանուիլ, քանի թէ թողնել, որ դեռ ևս մարդկանց հետ վարուին՝ ինչպէս անասունների հետ»: Եւ այդ լոկ խօսք չէր: Դեռ դրանից քիչ առաջ, ստրուկների մի ուրիշ պաշտպան կիսամեռ էր եղել ստրկատերերի նահանգի պատգամաւորներից: Երբ որ Լինկօլնը նախագահ էր ընտրուել հարա-

ւալինները ստրկութեան վերացման հարցի ժամանակ Միաց. Նահանգների գէմ կանգնեցին և մտածեցին բաժանուիլ նրանից. այդ պատճառով էլ բացուեց պատերազմը:

Չորս տարի շարունակ տևում էր պատերազմը, ինչպէս Հարաւում, այնպէս էլ Հիւսիսում, և անհամար զոհեր էր տանում: Վերջապէս արդար կողմը յաղթանակը տարաւ և ոչ միայն ագատուած նեգրները, այլ և բոլոր ժողովուրդը շնորհակալ էին լինում. Լինկօլնից նրա համար, որ նա մարդկութեան միջից սըրբեց նրան խայտառակող արատը:

Նայեցէք նրա տիպարին: Ճշմարիտն ասած, նրան կարելի չէ գեղեցիկ անուանել. գէմքը առաջին հայեցացից խիստ է երեսում, կընճռուս և աւելի նման մուժ-կարմիր գոյնի: Մի ֆրանսիացի նրան առաջին անգամ տեսնելիս հանաքով ասել է. «այսպիսի մի քաջի գէմ ամեն տեսակ յարձակում թուլատրուած է»: Գլուխը երկարաձեւ և այլանդակ՝ երկու ահագին ուռած ականջներով, մազերը կարճ, և խիտ ու քստմնած, որոնք չէին հնագանդում ոչ սանրին, ոչ խոզանակին: Մարմնի հետ համեմատելով գլուխն ինքնըստինքեան փոքր էր երեսում, և նա գլխի փոքրու-

թեամբն էր միայն կանագանվում շատ մարդիկներից: Նրա ձեռները այնքան երկարն էին, որ հասնում էին մինչև ծնկները, իսկ ձեռքերի թաթերն այնքան հաստ ու պարար, որ աւելի նմանվում էին որևէ մեքենայի, և այդ պատճառով նա չէր կարողանում ձեռնոցներ հագնել:

Հետեւաբար ինկօլնը բաւականին տգեղ էր և նրանով գրաւելու համար մարդ արտաքոյ կարգի ճաշակ պէտք է ունենար:

Նայեցէք նրա աչքերին, ինչքան մեծ մեծ են, մուժի և միշտ տիսուր, կարծես նրա սրտի մէջ մի խոր և անբուժելի վէրք կայ: Բայց երբ որ նա խօսում էր—երբ խօսում էր ժողովրդի հետ յատկապէս ողորմելի ստրուկների կրած չարչարանքի մասին, նրա աչքերը փայլում էին աննկարագելի կրակով, դէմքն ուրախանում էր և նրա ամենահասարակ խօսքը հնչվում էր այնպիսի ճշտութեամբ և համոզիչ ձայնով, որ ազդում էր բոլոր սրտերի վրայ: Իսկ բերանը ինչպիսի բարութեամբ, ինչպիսի գողար շնչառութեամբ էր բացվում: Եթէ երկար նայէիր նրա բերանին, կը կարծէիր թէ՛ նա նոյն բոպէին կրկին պիտի բացուի և լսողին քաղցը ու փաղաքշական խօսքեր

նուիրէ: ինպատճ պատճ ենուած մայիս ապ Ահա այդ յարգելի մարդը 1865 թ. Սւագ Ուրբաթ օրը զիջանելով ընդհանուրի ցանկութեան՝ երևաց իրան մեծարող ժողովրդի առաջ: ինունամ զայզելով ու ու զայզելո՞ւ եւ ահա բեմի ետևից հնչեց երկրորդ զանգակը. երաժշտական խումբը լուեց, վարագոյքը բարձրացաւ: Ներկայացնում էին «Մեր ամերիկական դարբինը» վերնագրով կտտակերգութիւնը: Բոլորի հայեացքը դարձաւ դէպի բեմը: Բեմի վրայ՝ նախագահի աջ կողմը՝ մութանկիւնում կանգնած էր մի երիտասարդ դեղին, մռալլ յօնքերով: Նրիունքները ամուր սեղմուած էին և գրեթէ ծածկուած խիտ և սև բեխերով: Նրա աչքերի գծագրութեան մէջ արտայալտվում էր զարհուրելի վճռողականութիւն: Նա ըստ երեւութիւն պատկանում էր բարձր դասակարգի: Հագած էր սեւ ոչ—հասարակ ֆրակ, նոյնպիսի սեւ անդրավարտիք, շողուղուն կօշիկներ խթաններով (շպօր): Միայն մազերը անկարգ խառնուած էին և ոչ մի կերպ չէին բարձարվում միւս ներդաշնակութեանց հետ: Պատճ ու ու անուայս եւ ու փառնան Ո՞վ էր այսօմարդը: Ամյամիւնուած նոր Սայդերասան էր Ուիլկս Բուլմ անունով, որ

բաւական ծանօթ էր այս թատրոնին, նրա դրսին ուներսին. որովհետև այս քեմի վրայի խաղում էր պեռմինչը մինչը պատերազմի սկիզբը: Նրան վաղուց յալտնի էր և այն մութ միջանցքը, ուր նա երկար ժամանակից իվեր կանգնած էր: Նոյն իսկ պատերազմի սկզբից նա ձգեց թատրոնը և անցաւ ժշշամու բանակը: Բայց ինչ էր անում նա այնտեղ և ինչու էր թափառում: Նրա ձեռքին կար վեցշեայ ատրճանակ. իսկ գոտու տակ երկայն դաշոյն: Նա աչքերը յառել էր նախագահի սենեակի դրան և ուշադրութեամբ նայում էր այդ տեղին: Ահա նաև նստած է»: Հշնջում էր ինքն իրան երփասարդը: — Դու պէտք է ումեռնիս, թէալ տալ ինձ համար կեանք արժէ: Առաջին գնդակը եթէ չի դիպչի, երկրորդը կը դիպչի և գուշակը մեռնիս: Եւ դպա ոճքագործակը դառնան: լսվում էր մի ներքին ձայն: Բայց նա ուշադրութիւն չէր դարձնում այդ ձայնին. չէ որ նա գուր տեղը չէր այստեղ փակուել: այնքան ժամանակ մութ սրահում: Ոչ, նա իւր բարեկամ հարաւայիներին տուած խօսքը յետ: չէր առնիլ, որովհետև նա նրանց երդմաբ հա-

բատացրել էր: որ կինկօլնը կը մեռնի իւր գովեառը ինքը վրէժինդիր եղած կը լինի նրանից յաղթուած Հարաւի փոխարէն: առ կրկին նա ձեռը տանում է դէպի դաշոյնը փորձելու համար թէ՝ արդեօք հեշտութեամբ է պատեանից գուրս գալիս, յետու զգուշութեամբ և հանդարտութեամբ բանումէ դուռը և գողիգող մտնում: բայց նոյն ըոպէին դարձեալ յետ է մզվում, որովհետև կինկօլնը աթոռով նրան հրում է: Հէնց այդ ժամանակ բարձը ծափահարութիւները և կեցցէների» որոտընդունութիւները վարձատրում էին ողերաստներից մէկին: Հարաւի յաղթութեան աւետիքը տալուն համար, երբ ձայնն ընդհատուեց ոճքագործութեան տիսուր գործողութեամբ: Անիծեալ երկշնուր նա հայհոյում է ինքն իրան. այժմ ինչպէս յաջող ժամանակն էր նրա զժացած ուրախութիւնը վիշացնելու ժամանակ: Կրկին նա իւր աչքերը նեեռում է դրան ծակին: Բայց ժամանակն անցնում է: շուտով ժամի տակուն և մէկը կը լրանայ: և ներկայացումը կը վերջանալ: Առաջ ու առ անա կամափյժմ պէտքէ մեռնի, կամ երբէք պձուում է ինթուպը: և երկրորդ անգամ յամօտե-

նում դրան ծակին. այդ անգամ նրան ոչինչ
չի արգելում։ Նա կանգնում է նախագահի
բարձր թիկնոցով ծածկուած գահովքի ետևը։
Չափ ձեռքով նա բռնում է դաշունը, իսկ
աջով—ատրճանակը։ Նրան ոչ ոք չի նկա-
տում։ Նա այնպէս ուղիղ նշանում է, ինչպէս
առհասարակ նայում է մարդ հրացանի ուղղու-
թեամբ։ Տայ մայ ըստ ըստ նույն բարձրը
։ Տըլք, . . . և մի ակնթարթում տիրում է
զարհուարելի խոռովովթիւն։ Թերապանները Ալբ-
ուում են և խաղն ընդհատվում է։ «Ի՞նչ ան-
տանալ էր այս Ո՞վ էր սալանորդը» կանչում են
մարդիկ։ «Ո՞վ Աստղած, ի՞նչ անբաղդութիւն»։
ողբալով աղաղակում են կանալքը։ Բոլորն
ահից բարձրանում են և շփոթուածաղիս ու-
ղէն ընկնում։ Եւ յանկարծ ամիրում է
մեռելալին տիրութիւն։ . . . Այս մզմի
Մի երիտասարդ գաշունը ձեռին զարմանա-
լի ճարպկութեամբ ցատկում է նախագահի ա-
թոռի ծալքից օժեակի վրայ։ Ի ո՞ւ մզմի
Նրա կրունկների խթաններին փաթաթու-
ելով աղաղակ դրած աղաղալին դրօշը՝ նրան
վայր են ձգում նախագահի մօտ։ Նա կրկին
վեր է թռչում տեղից, շատապով կտրում է դա-
շունով դրօշի կտրը։ և անհետանում մութ-

սրահի մէջ։ Այս ոյսու և խցանու սահ ոչ
Յետով բոլորն իսկոյն լսում են արագ քայ-
լերով փախչող ձիու ոտների տոփիւնը։ Այս Յ
Ինչու ոչ մէկը ըբռնեց ոճրագործին։ ա Ին-
չու նրան ժամանակ տուին ձի նստելու և
փախչելու։ Ոճրագործութիւնն այնքան արագ
կերպով կատարուեց, որ ատրճանակի արձակ-
ման և փախուստի առաջին քայլի ժամանակա-
միջոցը երկու րոպէ անգամ չտևեց. և այդքան
բազմութիւնը սարսափից բռնուելով՝ չկարո-
ղացաւ ուշքի գալ և մտածել, որ այդ անգի-
տութեամբ գործած մի յանցանք չէր։ Մի
զինուորական աստիճանաւոր միայն, որ Լին-
կոլնից աւելի մօտ էր նստած, այնքան մի-
այն կարողացաւ, որ գնդակն արձակելուն պէս
բռնեց ոճրագործի Փրակի ծալըից, բայց Բումը
ձգելով ատրճանակը յատակի վրայ՝ աշխատում
էր դաշոյնը բռնողի կուրծքը խրել, սակայն
ձեռքին դիպաւ. և նա ծանր վէրք ստանալով՝
թողեց Փրակի ծալը։ Այս մի ակնթարթում
պատահած գէպքից օգուտ քաղեց ոճրագործը
և, ինչպէս լիշեցինք, դուրս ցատկեց, փախաւ։
Բոլոր հանդիսականները լալով և խորին
ցաւակցութեամբ խմբուեցան նախագահի շուր-
ջը։ Գնդակն անցել էր գլխի միջից—մտել
2

Էր ձախ ականջով և դուրս եկել աջողքուն նա
ընկալու առանց ձայն-ծպնդուն հանելու Եւ
թէ պէտ կեանքը, Այսինքն շունչը, վերջնաւ-
կանավեմ չէր կտրուել դեռ ամբողջ ինն ժա-
մուայ մէջ, սակայն ուշքից նոյն վայրկեանին,
Էր ընկել ։ Վայր առաջ առաջ առաջ առաջ առաջ
— Լաւ կը լինէր, որ նա եկած չինէր.
ողբում էր նախագահին անհամբերութեամբ
սպասող տիկինը։
— Ոչ ոք չի կարող խոյս տալ ճակատագրից։
— սփոփում էր նրան դրացին։
— Բայց իմացէք, որ նա չէր կամենում
թափրոն գալ ։ Ընդմիջեց մի պարոն։ այս
— Նրան գեռ գալուց առաջ խնդրեցին
զգուշանալ։ Խմկ նա խնդրողներին միամտաց-
նելու համար հանեց գրապանից նամակների մի
կապոց եւ ասաց։ «Պարոններ, ահաւասիկ մի
ամբողջ նամակների կամոց, որոնցից ամեն
մէկն ինձ սպասնում է սպանութեամբ։ Իմ
ջղերը պիտի հալուէին, եթէ ես սկսէի դրանց
վրայ մտածել։ Այդ պատճառով ես միանգա-
մայն հեռացրի ինձանից այդ տեսակ մտքերը՝
այս ենթադրութեամբ թէ եթէ կան, արդարեւ,
այնպիսի փոքրութիւն մարդիկ, որոնք մտածում
են իմ կեանքին վնասելու, դրա ու համար

ինձ սպանելու միջոցներն այնքան շատ են,
որ ինչքան Ել կամենամ, գարձեալ չեմ կարող
խոյս տալ ճակատագրից։ Ինչու համար զուր
տեղն ինձ պէտք է տամանջեմ, քանի որ իմ
կեանքն Աստուծոյ ձեռին է աւ կա ու ի ։
— Թող այդպէս լինի։ Կըկին խօսեց առա-
ջին պարոնը, բայց չարագործի համար քիչ
գնդակ կայ։ Այս ու այս այլ այլ այլ այլ ։
— Միայն հարկաւոր է նրան բռնել։ Ճայն
տուին մի քանիսը։
— Հեռու չի գնալ նա, խօսեց մի երրորդը։
— Նատ բան խօսուեցաւ, շատ հառաջանքներ
լսուեցան, շատ արտասուք թափուեցան, մին-
չե որ գնդակահարին հարեւան տունը տա-
րին, որտեղ եւնա մեռաւ առաւօտեան ժամը
ուժին։ Ուրաքան ու
անախագահինեւ ստորագրեալ ները, այնու-
ամենայնիւա կրկար ժամանակ այս յեղափոխու-
թիւնը դիտող հանդիսականներ չմնացին թատ-
րոնին մէջ։ Հենց որ ուժագործը վախաւ Փթեակի-
ետեւ, նրանցից շատերն առաջին կարգում
նստողների վրայից ցատկեցին և թափուեցան
չարագործի վրայ վայրենի աղաղակով և անեծք-
ներով. միհարկէ նրանք չէին կարող հասնել
նրան, բայց և այնպէս վազում էին ետեփցը

Նրանցահանդիպեցին ուղիղ ձիաւորներ և այլ աշխատանքներ կամ առաջ է քաղնում, հարցըին ձիաւորները: Այս կողմը՝ նախագահին սպանողի ետևից: Նա ուր և դէպի որ կողմն է գնացել: Ահա այս ձախ կողմով: Նա ինչպիսի՞ ձիու վրայ է նստած: Աւ ձիու: Լաւ, դէ գուք գնացէք տուն: Մենք կամենսւմ ենք հասնել նրա ետեւից և բռնել: Միենոյն է լաւ է գուք տուն վերադառնաք. մենք նրան կը բռնենք և անպատիմ չենք թողնիլ. Հաւատացած եղէք: Սևերը լաց ու կրծով լետ գարձան: Շուտով ալս զարհութելի բօթն ամբողջ երկրում տարածուեց: Քանի մարդիկ, որոնք մինչև անգամ նախագահի երեսը չէին տեսել, ողբըսմ, էին նրա մահը: Նրա հերժանական գործերն իրան Համար ընդհանուր մեջ ստեղծեցին: Լայնատարած Միացեալ նահանգների ամեն անկիւնից դիմում էին Հազարաւոր մարդիկ վերջին ողջոյնը տալու անմոռանալի նախագահին: Սպիտակները և սևերը, արք և կանայք խմբերով դիմում էին դէպի կապի տուլիոն, ուր դրած էր սպանուածի

մարմինը: ու յօւնք ու ծիւնու պարագանել և այսպիս Ապրելի 19-ին Վաշինգտօնում կանգնաւորվում էր ազգայութեան մամարտիրումի հանդիսաւոր թաղումը: Թափանօթների աղաղակները և զանգակների ձայները հնչվում էին արդառաւուած ամբողջ Միացեալ նահանգներում: Այդորբացած երկրի ձայներն էին: Վահանականական և արքունական գործերը դադարած էին. սև դրօշակները վկայում էին իւրաքանչիւրի սրտին տիրող տխրութիւնը: Հազարաւոր յուղարկաւորների և միլիոնաւոր լացողների նախագահ Լինկոլնը հանգիստ պառկած էր կազնի ծառից շինած դագաղի մէջ՝ Ստրինգֆիլդ կոչուած տեղում, որի մենաւոր և գեղագրական գիրքը չափազանց սիրելի էր նրան իւր կենդանութեան ժամանակ:

Բայց ոճրագործը:

Նա իրաւ հեռու չէր գնացել: Նստարանից վայր իջնելով՝ Բուսը փաթաթեց իւր գլխի վէրքը և, չնայելսվ գրան՝ ամբողջ գիշերը ձիու վրայ նստած քշում էր առանց նեղութեան: Բայց նա երկար չկարողացաւ դիմանալ ցաւին. թեքուեց դէպի հեռու գտնուող գիւղի հիւրանոցը և ուզեց ապաստանուիլ ալդաեղ, իբրև իրան Համար մի յարմար գաղտնա-

րանում։ Սակայն քանի որ այնտեղ նա մտածում
էր իւր ուժերը կազդուրելով և ճանապարհը շա-
րունակելու, յանկարծ նոյն իսկ տեղում նրա
ետուից հասան և նա լուսահատութիւնից ին-
քըն իրան գնդակահար արաւ հենց այն մարդ-
կանց առջև, որոնք շրջապատել էին նրան
գաղտնարանի մէջ։ Այսպէս դյուր ծաղողոյն
ծաղորար պահպանողն ա մատուց-
մագուց մէջ նայալի դյուրիցօք և այժ-
մայսրան ուժութեացու բոյքու միայն միշտ
բուռոյ դուռը առջև առիջարար դու-
ծախոս ուժքում զմային շարադրան դիմ-
ում զն գրարար ծանձի սիսուն զմրաբ դէ
և զուռանն զի նարան ծաւուր քյափանից
դէ վյազմ ըմպատից զգդիք մաֆարարուր
չիւնանի մունի ուժարածի դիմ մայս-
ութացացուն առուն պահանջներ։

թմբած զմամայդք միւժիմասոց զնամնի աղյու-
սոյ և զմենք պահպան զրաբկան բժիշն ընալու-
սան հմուր լուսի զանու այսմից զմեւունաս
մատի եւրազուց լիացամու մասու բժիշնացքի
ժանրաց մայս ըմբառ լուսից լուսի
բարձրաց ապահ ըմբից զանու մաս բայ-
զան դէ իբր ՀԱՅՐԵՆԻ ՏԱՆ ՄԵԶ։
Ամենի պահպանուած լուսի դու մի միաժամա-
կայութ ըմբու դէ մաս զանիր ուժութամբ վայգն
«Ամենից հարուստ է այն մարդը, որ ունի
ամենաքիչ պահանջներ» — ասում է մի կտրիճ։
Արբահամ Լինկոլնի ծնողները թէպէտ ու-
եին մի փոքրիկ փայտաշն տուն և հեռու
արևմտեան անտառներում մի կտոր հող, սա-
կայն նրանք աղքատ էին ապրում, որովհետեւ
հողագործութիւննա այն ժամանակ գեռ չկար
ալդ կողմերում։ Իսկ գումարած սիս սկզբ
Արբահամի հալլը՝ Թոպվաս Լինկոլն 1806
թ. բնակվում էր Կենտուկկիա նահանգում։ Նա
ինքն իրան համար տուն շինեց։ Հաստ և խիտ
ծառերով լի անտառը նրա կողքին ցէր։ Նրա
կացնի ուժգին հարուստից ընկնում էին ահա-
գին ծառեր։ Առաջ նա կտրատելով ծառի բո-
լոր չորերը և ճիւղերը՝ տաշեց կացնով հաս-
տոցները, սղոցեց նրանցից համահաւար եր-

կարութեամբ քառանկիւնի գերաններ, ծակեց նրանց միջից հարկաւոր ծակերը դռններ և լուսամուտներ շինելու համար. յետոյ գետնի մակերևոյթից տասն ոտնաչափ բարձրութեան վրայ շինեց ծածկոցը, ծածկեց նրան շեղով, իսկ տան ներսը շինեց փալտէ յատակ:

Ներքին տեսարանը գերազանցում էր արտաքինին իւր վրայ կրող հնարագիտութիւններով: Պատերից Թովմասը կախ էր արել կարգով: Արհեստաւորի ամենակարևոր գործիքներ կացին, մկրատ և այլն: Երկփողեան գեղեցիկ պտուակը լարմարեցրած էր դրան վրայ և շատ բանելուց մաքուր սրբուել էր: Ինչպէս արդ տունը, նոյնպէս և նրա մէջ գտնուած բոլոր սեպհականութիւնը՝ կահկապիքը՝ մահճակալ, սեղան, նստարաններ և ամաններ, ինչպէս լիշեցինք, Թովմասնինքն էր շինել իւր ձեռքով: Ամանները նրանն շատ չէին հարկաւորվում, որովհետեւ գիւղականների կերպակուրը կուսական աշխարհում միայն որսի խորոված էր, սմինդը հաց և կաթ, այլու և խակ սմինդը մսով եփած բանջարի նման: Տարին լրանալուց յետոյ կահկարասիքի հարստացնելու կարևորութիւնը պղացուեցաւ: Հարկաւոր էր մի օրօրոց ևս աւելացնել, որի

մէջ պիտի քնէր փոքրիկ աղջիկը: Երկու տարուց յետոյ հայրը նրա համար մահճակալ շինեց: իսկ օրօրոցը մնաց Միացեալ Նահանգների ապագայ նախագահին Աքրահամ Ակնկօլնին:

Բարի մայրը, երեխային օրօրելով նրա մահատագրի համար ոչ մտածում էր, ոչ գուշակում: Նա—մայրը նրան օրօրոցում մեծացնելով երբէք չէր մտածում նրա համար, չէր մտածում և նրա ապագայի համար. նա հասարակին էր՝ զարգացած, փորձուած խելքով, պարզ և հեղ սրտով: Գրեթէ ուժ տարի շարունակ փոքրիկ էրը, ինչպէս անուանում էին նրան, չէր դուրս գալիս հայրենի տնակից, և այդ ժամանակից սկսում էր միանգամայն մօր բնաւորութեանը նմանուիլ: Այդ ժամանակ Ամերիկայում գեռ ևս հասարակական ուսումնարաններ չկային: Բայց ծնողները կամենում էին, որ իրանց պրդին որի մէջ նրանք Ակատում էին չափազանց կենդանին և զգայուն խելք, սովորէր որեւէ միքան, միայն թէ հեռու մնար կացնի գործածութիւնները: Հայրը դժբաղդաբար կարդալ և դրել չգիտէր: մայրը կարդալ իմանում էր, բայց գիտու երբէք չէր ձեռնարկել ու

Գրեթե՝ մի քառորդ ժամ տեղով ճանապարհի տարածութեան վրայ՝ կինկօլնեան ընտանիքից հեռու ընակվում էր մի արհեստաւոր՝ ջաքարիա Որէնէլ անունով, որ բաւականին դրել և կարգալ գիտնալով և սիրելով երեխաներին՝ պահում էր մի փոքրիկ մանկական տառմնարան։ Նա թէ և պատկանում էր կաթօղիկ դաւանութեան, սակայն Երի ծնողները վճռեցին տալ նրան իրանց որդին կարգացնելու։

Ուսումնարանի ճանապարհն անցնում էր մի հարուստ կալուածատիրոջ տնկարիութեան (ալբանտացիա) միջով։ Առաջին անգամ մայրն ինքը տարաւ երեխալին ուսումնարան, երկրորդ օրը նրան ուղեկցեց քոյրը, իսկ յետոյ նրան բաց էին թողնում մենակ։ Նա գնում էր ուսումնարան ոչ թէ առաօտները, այլ կէսօրներից յետոյ, որովհետեւ մինչեւ այդ ժամանակ արհեստաւոր՝ ջաքարիան ուսումնարանի պատճառով իւր սեպհական գործը թողնել չէր կարող։

Մի անգամ էր ըստ սովորականին անցնում էր ծառերի տակով, յանկարծ մի ահագին շուն կտրեց նրա ճանապարհը, յիշաւի նրա ձեռքի հացի կտորը խլելու մտքով։ Երեխան աշխատում

էր անցնելու բայց շունը հաջում էր նրա վրայ և չէր թողնում։ Նա սկսեց թագուն լաց լինել, չհամարձակելով ձայն հանել, մինչեւ որ տեսաւ ստրուկներից մէկին և կանչեց նրան։ «օգնեցէք, շունը կամենում է ինձ կծել»։ Նեգը վագեց և շարժեց փայտը շան վրայ, որ ինքն իրան կոնծկոնծում էր և կամենում էր յարձակուել հակառակորդի վրայ, բայց փառաւոր ծեծ ուտելով՝ փախաւ։

Այս բոլորը տեսնում էր կալուածատիրոջ որդին, բայց թագնուելով հովանոցի տակ՝ անծանօթ երեխայի գրութիւնը ծանրացնելու պատճառ էր դառնում։ Նա տեսաւ թէ՝ մինչպէս ծեծուեց իւր սիրելի շունը, տեսաւ նոյնպէս թէ ով էր ծեծողը, և յետոյ ձայն հանեց։ Նա իւր ձեռքի խարազանով յարձակուեց նեղութիւն վրայ և սկսեց անխնայ կերպով հարուծել նրա գլխին և մէջքին, որից մէս ընկաւ նեգը։ Փոքրիկ աշբը սաստիկ վախեց և այնպիսի մի ճշպով փախաւ, որ կարծես ետևիցն աւագակներ էին վրայ հասնում։ Հալը տեսնելով որդուն այլպէս շփոթուածեւ շնչարգել եղած գէպիրեն վագելիս՝ հարցրեց պատճառը։ Խակնա միայնակ ասաց, որ վախել է։

Համասազն մուտքայի գոյաց գոյաց ոյ

բայց Երեկոյեան, Երբ նա պառկեց քնելու, ամեն թան պատմեց մօրը: Մայրը նրան հանգստացրեց, որ շունը չի կամեցել իրան անպատուելու, այլ միան կամեցել է ձեռքի հացից թաժին ստանալու: Բայց յետոյ խիստ կերպով յանդիմանեց չարերիտասարդին, և որդուն պատուիրեց, որ չմոռանայ շնորհակալութիւն անելու նեգրին առաջին իսկ անգամ նրան տեսնելուցին: Երեկոյ առաջին իսկ անգամ անգամ նրան տեսնելուցին: Երեկոյ առաջին իսկ անգամ անգամ նրան տեսնելուցին:

Հետեւեալօրը կիւրակի էր, և Երբ ուսումնարան չգնաց: Երկուշաբթի նա ապահով կերպով գնաց և վերադարձաւ, չհանդիպելով՝ ոչ թշնամուն և ոչ քարեկամին: Երեքշաբթի նա տեսաւ իւր սե պաշտպանին, մօտեցաւ նրան, շնորհակալութիւն արաւ և տուաւ նրան իւղ՝ քսած հացի մի պատառ: Նեգրը վերցրեց հացը և մի փաղաքշական ժայիտ արձակելով սկսեց ուտել: Այդ րոպէից սկսած ծերունի նեգրը և փոքրիկ Երը միմեանց մտերիմ քարեկամ դարձան: Նեգրը միմեանց մտերիմ քարեկամ դարձան:

Նրանք յաճախ հանդիպում էին միմեանց: Երը չափազանց ուրախանում էր, Երբ նեգրը առաջքերը պէշած: Նայում էր նրան այլընարանի խոշոր տառերին և կարծես ուզում էր նրանց հնչիւններն արտասանել:

Մի անգամ Երը մի անսովոր հպարտութեամբ վագեց փոր, ու քարեկամի մօտ և առաջին անգամ այլընարանի բոլոր տառերը կարդաց, պառանց գժուարութան և կանոնաւոր եղանակի և ուզեց կարդացածը նրան սովորցնել: Յանկարծ, որտեղից որ է, դուրս եկաւ երիտասարդ կալուածատէրը և յարձակուեց երեխակի վրայ:

— Անպիտան տղայ. ինչ ես խօսում արդադեղ այդ սե խաբեբայի հետ և դրան գործից գցում կորիր այս րոպէին, թէ չէ քեզ շանը կուտացնեմ:

Երը ճարպկութեամբ և արագ քայլերով փախաւ: Նրան աւելի ևս երկիւղ տալու համար երիտասարդը սկսեց լեզուի ճալթոցով դրդել շանը հաշելու:

Հազիւ զունչն իրան քաշած՝ Երը վագեց տուն և պատմեց հօրը ինչ որ այն րոպէին պատահել էր իրան: Առաջին անցքի մասին, որ պատահել էր շան հետ, Թովմասը տեղեկացաւ իւր կողից: Նա գնաց հարեանի մօտ գանգատուելու երիտասարդ երկրագործի անկարգութեան վրայ: Բայց հարեանը նրան յանդուգն պատասխան տուաւ, այնպէս որ նրանք վերջը միմեանց հետ թշնամացան:

Ա. Ենուշետեսակընատը Անտաչիարողացաւ գնալ
Զաքարիայի ու Ռութեմնարանը, և որովհետեւ թըշա-
նամի Հարթեաննա արգելում էր Արան իմրեալըլ Հ-
լանտացիայովանցնելու իսկ ուրիշ տեղով ճա-
նապարհ չկաթը, Թրահամարդ ճնողներն ատի-
պուեցան տալ նրան մի ուրիշ հարեանի Ան-
լեբան Խեզել անունով, որը թէւ հեռուաէր ի-
րանցից, բայց ունէր մի փոքրիկ մասնաւոր ու-
սումնարան Թժքաղդաբարնա կարողանում էր
սովորցնել իւր աշակերտներին միայն կարդալ
և գրել այն ևս կիսատապատ:

Ունենալ անբարիշտ և չար հարեան աշա-
փականց անտանելի է անտանելի է մանա-
ւանդ վայրենի երկրում, ուրիքի քնակիչներ
կան յունիկեմն այէտք է Համբերութիւն ունե-
նալ, մտերմաբար վարուիլ միմեանց հետ աւ-
ամեն մի թեթև քանի սկենը չըդնելէ Թով-
մատ Ախնօնինը աւենելով իւր մօտիկ հարեանի
հապարտ կալուածատիրոջ թշնամութիւնը մտա-
ծեց ծախել իւր հողը և փոխադրուել մի ու-
րիշ տեղ սակայն երկար ժամանակ գնող ըլ-
պատահեց Աերջապէս ցանկացող դուրս եկաւ
և առաջարկեց նրան տառը տակառ օղի և
քսան դօլլար փող և նա համաձայնուեց:

1816 թ. աշնանը փոքրիկ խմբակը ցածր-

Նում էր որէալի Նիւսիսահնա Նահանգի
հայրաւային մասը պայուղիս ու այս ամբողջ աշխա-
- Մայրը և աղջկը նօտանձ էին սալլի մէջ հայրը գնում էր ոտով Հրացանն ու մախն Ախնկ
էր հարկադրուած էր վարել մի թեթև պաշ-
տօն այսէ քշել ձրաներն այնտեղով ուղի ճա-
նապարհը հարթ և աներկիւդ է այս ան այ-
- Վանանդաւոր ճանապարհորդութիւնից յետոյ
չուղի ընտանիքը վերջապէս հանաւ մեծ և
գեղեցիկ Օհէօ գետի ափից Յոգնած ուղեղի-
ները շատ ուշադրութիւն չդարձրին նրա գե-
ղեցկութեան վրայ միայն ուրախացան որ մօ-
տացել են ճանապարհորդութեան կէտին Նը-
րանք ապահովանցան գետի միաւ ափը լանտի
վրայ և շարունակեցին իրանց ճանապարհը վեր-
ջապէս հասին պարզ վճիռ առուակին էր լորեց
լորեց ջրով փայտէ գաւաթը և տուաւ իւր
ծարաւ քրոջը Զուրը լաւ էր երեսում և առ-
հասարակ առուակի շուրջը շատ դուր եկաւ
նրանց:

Վճուուեց հէնց այդտեղ մնալ այդ կենդա-
նագրական և անտառային և գաշտային գե-
ղեցիկ տեղում:

Ամենից առաջ հարկաւոր էր կրկին տուն
շինել Այս անգամ Թովմաս Լինկոլնը օգնա-

կան ունէր. նա տուաւ կացինը իւր փոքրիկ
որդու ձեռքը և սովորցրեց նրան կտրել հաստ
ծառերի ճիւղերը: Քոյրը հաւաքում էր ճիւ-
ղերը և բերում տնատեղի մօտ. իսկ մարը
տնալին գործերով էր պարապվում:

Երեք օրից յետոյ Լինկոլնեան ընտանիքն
այլ ևս բաց երկնքի տակ չէր գիշերում: Տու-
նը պատրաստ էր: Էրի համար վերեսում շի-
նած էր մի փոքրիկ ննջարան, ուր նա գիշերը
սանդուղքներով էր բարձրանում: Մահճակալի
կամ անկողնի համար գեռ ոչինչ խօսք չկար.
Նա պառկում էր մի ցնցոտի վերմակի տակ և
այս դրութեան մէջ ալնպէս քաղցը և հան-
գիստ քնում էր, ինչպէս փափուկ անկողնում,
որովհետեւ նա ամբողջ օրը բանում էր և չէր
զգում ոչ նեղութիւն, ոչ վիշտ:

միջնորդի դժվարություն ճառած քանի ուժից
առաջ դժվարություն առաջ դժվարություն
միջնորդի դժվարություն առաջ դժվարություն

միջնորդի դժվարություն առաջ դժվարություն
առաջ դժվարություն առաջ դժվարություն
կիրսկին կոհսսկան ԱնՏՍՈՒԻՄ.

Հիւսիսային Ամերիկայի հեռուարեւմտեան
կուսական անտառներում չկային եկեղեցիներ.
Ճկար և տօնացոլց, որից կարելի լինէր իմա-
նալ կիրակի և տօն օրերը: Այստեղ, ուր եր-
կիրը գեռ հազիւ էր սկսում բնակիչներ ու-
նենալ, ուր այդ պատճառով դեռ կարդ ու
կանոն չէին մտցրած: և ամենուրեք հոչչակա-
ւոր և բազմամարդ գիւղեր և բնակալաններ
պիտի դառնալին քաղաքակրթուած մարդկանց
համար, չկային ոչ դատաստանատեղեր, ոչ ու-
սումնարաններ և ոչ ժողովուրդ, հետեաբար
չկային և ծխական քահանաներ: Միայն եր-
բեմն մի քարոզիչ (պասար) այցելում էր այդ
ահագին տարածութեան վրայ բնակուող գիւ-
ղական բնատնիքները, տալիս էր նրանց ս. հա-
ղորդութիւն, մկրտում էր նրածին մանուկ-

ներին, որոնք ծնուած էին լինում իւր վերջին բացակայութիւնից յետոյ, պսակում էր նշանուած ամոլներին և օրհնում էր մեռածների գերեզմանները:

Ոչ պակաս խստութեամբ էր պահվում կիրակին և մշակների տանը. ոչ կացինն էր փայտ կտրում, և ոչ սայլի ակնն էր սլանում, մարդիկ հանգստանում էին տաղաւարներում և այլ ևս իրանց օրուայ հոգսերով չէին խանգարում իրատ անժառի խաղաղութիւնը:

Արբահամ Լինկոլնը իւր բոլոր կեանքում մեծ հրճուանքով էր լիշում այդ կիրակիների ինքնաստեղծ գեղեցկութիւնը իւր հալրենի յարկի տակ:

Այդպիսի կիրակիները առանձնապէս խորը թափանցել էին նրա լիշողութեան մէջ:

Թրանից յետոյ, հէնց որ նա սովորեց կարգին կարդալ կալեք Խեղելի ուսումնարանում, արդէն կարող էր ինքը մօր օգնութեամբ ընթերցանութեան մէջ կատարելագործուիլ: Նրա նպատակն էր անցել այն մեծ գրքի վրայ (Աստուածաշունչ), որին շատ էր սիրում մայրը, և աշխատում էր նրանով յառաջադիմութիւն ցոյց տալ: Մօր մահից մի և կէս տարի առաջ երեխալի նպատակն իրագործուեց.—մի անգամ

մայրը տուաւ նրան ընթերցարանը և ըացաւ նրա համար Մովսէսի և այլուած մոհենուսակարն մութիւնը, որի կարդալու հերթը պիտի միւս կիրակի ընկնէր իսկ այդ օրը դեռ երկուշաբեմի էր: Ամեն օր նաջանասիրութեամբ մովսա ըում էր դասը. նրան օգնում էր մայրը, առանց հօր մասնակցութեան և այդպիսով պատրաստու վում էր կիրակնօրեալ ցանկալի պործը: Երբ որ շաբաթ երեկոյ եղաւ նա զուարճութեամբ և ուրախութեամբ կրկնեց էգուց կիրակի վարուերը:

Միւս առաւտօտ արեն արդէն շլուամտից ընկել էր տան ներսը, երբ տանեցիք հանապ քուած էին նախաճաշիկին: Համեստ սեղանից յետոյ հայրն ըստ սովորականին վերցրեց պահատուհանից Աստուածաշունչը և դրաւ կնոջ առջե սեղանի վրայ: Եւ ինչքան դարմացաւնա, երբ կինն այդ դիրքը տուաւ որդուն և նա հպարտութեամբ և ուրախութիւնից փալլունդ աչքերով սկսեց անսխալ, վարժ և հասկանաւլի կերպով կարդալ գրքի գլուխը մինչև վերջը: Քոյլին անգամ գովում էր նրա կարդալը: բայց նրա համար այդ խոշոր տառուերը և տեղ կերը մի մի առակներ էին թւռում: այս հունինթերցանութիւնից յետոյ մայրն սկսեց հաս-

սարակ բարբառով պատմել.. կարդացածք, ի միջի այլոց նա ցոյց տուաւ և այն, որ Աստուած հպարտներին չի սիրում և ընտրում է նրանց, որոնք համեստ, խաղաղ սրտի հետ ունին և մտքի լուս Յետոյ նա պատմեց թէ ինչպէս Խըրայէլացւոց ազգը գերութեան մէջ մոռացաւ ճշմարիտ Աստծուն և այն և այլն:

— Այս, վրայ բերեց հայրը, — Աստուած չի ուզում, որ մի մարդ միւսին գերի լինի: Բոլոր մարդիկ միմեանց մօտ պէտք է լինին հաւասար, ինչպէս եղբայրներ: Եթէ խլես մարդու ազատութիւնը, անշուշտ նա կը լիմարանայ, կը բժանայ, և կ'սկսի աւելի անբան կենդանու նմանուիլ, քան մտածող և զգացող մարդու:

— Ինչո՞ւ համար, հայր, այնքան շատ ըստը րուկներ կան այնտեղ, ուր առաջ մենք էինք բնակվում, նկատեց Երբ: — Միթէ միստէր Դէվիսը չի իմանում, որ Աստուած ստրկութեան գոյութիւնը չի ուզում:

— Դբաղդաբար նա շատ լաւ իմանում է, պատասխանեց հայրը, բայց յայտնի անսատուած է Աստուայ կամքի վրայ խօսելու ժամանակ: Նրա ժլատութիւնը և հպարտութիւնը արդէն յաղթող են դարձել: Բայց կը գայ

ժամանակ, Երբ Աստուած խեղճ եւանմեղ գերիների համար մի նոր Մովմէս՝ կուղարկէւ: Երեխայի աչքերն այրվում էին: ու այսուհետու Երեխայի աչքերն այրվում էին:

— Հայր, ասաց նա, ես այնքան պիտի գործեմ, որ Երբ գօրեղանամ» շար ստրկատէրերից առնեմ ազատեմ բոլոր գերիները: Եւ իմանում ես առաջ որին կազատեմ:

— Ուրիշն արդեօք:

— Բարի Տօմին, որ ինձ պաշտոպանեց շանից:

Հայրը և մայրը զարմացած իրար նախցին:

Նրանց ուրախացընեց որդու մեծ գնահատութիւնը:

— Գուցէ Աստուած մի ուրիշին ընտրեց այդ պաշտօնի համար, հանաքով ասաց մայրը, այն ժամանակ դու մի այդպիսի մեծ արդիւնք բնաւ չես կարող վաստակել:

Հայրը լուռ վերկացնել տեղից, Աստուածաշնչը դրաւ տեղը և յետոյ հանեց պահարանից պահանով կապկպած մի փոքրիկ ծրար, որ իրան հետ վերջին անգամ բերել էր քաղաքից:

— Ես քեզ համար ընծալի եմ բերել, ասաց նա որդուն. — այս ես պահում էի քեզ տալու, Երբ գու բոլորովին կը վարժուէիր կարդալու բայց այսօթ այսպէս լաւ կարդացիր: որ ու Երկար սպասելու տեղիք չունիմ:

Նա կտրեց պարանը, վերցրեց մոխրագոյն թղթի փաթաթը՝ երևում էր մի փոքրիկ գրքոյկ։ Սա յատնի կրօնական պատմութիւն էր «Աղօթք Քրիստոնէի» վերնագրով։

Թէ ինչքան ուրախ էր երեխան, ալդ ամեն ոք կարդդ է իմանալ, որ մանկութիւնից գործ է ունեցել գրքի հետ։ Այս առաջին գիրքն էր, եթէ չհաշուենք այն անպէտք այբբենարանը, որ առաջնա կարդում էր։ Բայց նա ցանկանում էր շատ գրքեր ունենալ, որպէս զի յայտնի ուսմունական և խելօք մարդ դառնար։

Զերմ շնորհակալութեամբ նա ընդունեց հօր ձեռքից ժանգագին, ընծան և նոյն խոկ ըուպէին անհետացաւ, նա կանենում էր այդ իրան զարգացնող և սիրած առարկայի հետ մի քիչ պարապուել։

Մենք գարձեաբ հանդիպում ենք նրան անտառում կուչ եկած մի ահագին եղենի ծառի տակ, ուր նա աշխատում էր որոշել նախադասութիւնները և ըմբռնել բառերի միտքը։ Նրան շրջապատող ծառերի վրայ ոստուտում էին ժողովունները՝ մէկից դէպի միւսն անցնելով և դաւլաւելով իրանց գեղեցիկ և անոյշ երգերը. բայց նա նրանց ուշքէ էր դաւճնում։ Քամին բարձրանում էր ճառերի ծայ-

թերը շարժվում և վըշըշում էին, և նա դարձեալ անշարժ ու անլուր էր։ Վերջապէս նա յոգնեց, վայր ձգեց գիրքը և սկսեց մտածել կարդացածի վրայ։ Յաճախ նա կորցնում էր մտքի թելը և էլի գտնում։ Առաւօտները կարդում էր նա և ընթերցանութիւնից յետոյ միշտ լիշտում հին բարեկամ Տօմին. իրան շանից ազատողին, որի պատկերը դեռ պտտում էր նրա երեսակայութեան մէջ։ Յանկարծ նրա մտքերը երազ են դառնում և նա քնում է, երազի մէջ տեսնում է այլուած ժուռիլ և Մովսէսին, և ահից զարթնում, երբ երազում մօտենում էր իրան Մովսէս։

Եւ իրաւ անտառը կրակով պատել էր. կայծակը գրեթէ անընհատ փայլատակում էր և նրա սարսափելի ճայթիւններն անհետանում էին խիտ անտառի խորքերում։

Թափիվում էին անձրեւի խոշոր կաթիլներ։ Երբ գիրքն առած վազեց տուն յորդ անձրեւից ազատուելու։

Այդ կիրակին խոր տպաւորութիւն գործեց Լինկոլնի ըմբռնող մտքի և երիտասարդ սրտի մէջ, տպաւորութիւն, որ նրա վերջին տարիներում անգամ չէր մոռացվում։

Վորցնելու ձեր որդուն:

Հետևեալ օրն Եբը վերցրեց առաջին դասը. Լինկոլնեան ընտանիքում բարի գործի յետաձգելը չկարէ.

Որովհետեւ գիւղականների մէջ թանաքի, գրչի և թղթի գործածութիւնը շատ քիչ էր, դրա համար Եբը սկզբում գծում էր տառերը տախտակի վրայ կաւիճով կամ ածուխով: Նա այնպէս ձգտում էր իւր նոր գործին, որ Եբը մի ըոպէ թոյլ էր տալիս իրան հանգստանալու ալդ ժամանակ ևս գետնի վրայ տառեր էր քաշում փալտով: Նատ կարճ միջոցում հեշտութեամբ սովորեց նա տառերի ձեւերը և ինչքան բաղդաւոր էր, Եբը առաջին անգամ գետնի վրայ քանդակագրեց իւր անունը Abraham Lincoln — Աբրահամ Լինկոլն:

Նա կամենալով աւելի ևս մաքուր գրել՝ դտաւ անտառում մի մեծ գրիչ, կտրեց նրան մի կերպ իւր գրչահատով, յետոյ իրան համար թանաք պատրաստեց մուրից և սկսեց փորձեր անել կեչի ծառի կեղեւի վրայ: Ուսուցիչը դուրվեց նրա արած գիւտը: Ժամանակին Եբը միանգամայն օգուտ քաղեց ալժմեան թղթի և գրչի գործածութիւնից. Նա սկսեց գրել աւելի և աւելի գեղեցիկ, այնպէս որ ուսու-

ցիչն ինքն էլ չխմացաւ թէ աշակերտն իրանից ինչպէս գերազանցեց: Ծնողները հպարտացել էին իրանց որդւով. հարևանները գովում էին նրան, իսկ նա միևնույն հեզ և խոնարհ Աբրահամն էր:

Այդ ժամանակ Լինկոլնեան ընտանիքը ծանրը և անսպասելի մի հարուած ստացաւ. Երեխանները զրկուեցան իրանց մօրից և հայրը — կնոջից, որը վաղուց սկսել էր թեթև կերպով հիւանդանալ, բայց ոչ ինքը և ոչ միւսները ոչինչ ուշադրութիւն չէին դարձրել, որովհետեւ այս մի և նոյնը նրան առաջ էլ էր պատահել և նա միշտ ինքն իրան առողջացել էր կարճ միջոցում: Եբը նա վատառողջ եղաւ, բժիշկ չկար, որ օգնութեան կանչէին: Նա խմում էր մի ինչ որ խոտի ջուր, մի հասարակ բժշկի խորհրդով, սակայն ոչինչ օգուտ չունեցաւ: Յանկարծ նա զգաց իւր մահուան ճգնաժամը և իւր ամուսնուց ու որդկանցից բաժանուելու սե բաղդին մօտեցաւ — ժուան նրանցից դէպի յափտենականութիւնը: Նրանք գրեթէ խելագարուեցան ձախորդութեան այս դէպից: Մանօթ հարևաններն անգամ ցաւում էին և չէին իմանում ինչ կերպով միիթարեն այդ թշուառ ընտանիքին:

Ամենից առաջ հայրնուշքի եկաւ և մտածեց կնոջ թաղման համար. նա բերաւ թուղթ, դրիչ և թանաք և յանձնեց որդուն դրել քահանային, որ ինչքան կարելի է շուտով գալ և հանգուցեալի մարմինը ամփոփէ հողի մէջ: Եթզ իւր կեանքում առաջին անգամը հարկադրուեց մի ալզպիսի նամակ դրել և մինչեւ իւր մահը չմոռացաւ թէ ինչ զգացումով դրեց նա իւր արդ առաջին նամակը: Մի քանի հասարակ բառերով խնդրեց նա յարգելի քահանային դալ և թաղել իւր մօրը, այն մօրը, որ միշտ սրտանց կը յարգէր նրան—քահանային:

Օրն օրից անցնում էր և քահանան չկար. երսի նամակը չէր հասել նրան:

Լինկօլնի տանը տիրում էր խորին լոռութիւն նա առաջուալ պէս բան էր անում կացնով, սղոցով և դուրով, բայց իւր գործն այլ ևս ուրախ երգերով չէր վերջացնում. միայն երբեմն երբեմն սրտի խորքերից մի խուլ հառաջանք էր արձակում: Նա դադաղ էր սպառաստում իւր բազմամեալ սիրելիի—իւր կնոջ համար, իւր որդուց մօր համար: Եթզ նա դրեց գիտկը հասարակ, բայց մաքուր շինած դադաղի մէջ, երեխաները ծածկեցին նրան

կանաչ խոտերով և հոտաւետ ծաղիկներով: Եթի սիրած մեծ եղենի ծառի տակ, որի շուաքում նա իւր թանգագին գրքերի հետ ուրախ ժամեր էր անցկացրել, քանդեցին գերեզմանը բաւականաչափ խորութեամբ, որպէս զի պահպանեն այնտեղ հանգուցեալի գիտակը գաղանների ճանկերից մինչև քահանայի գալը: Թէև քիչ մարդիկ կային դագաղիվրայ, բայց նրանց սրտերում մեծ յարգանք և զգացմունք կային, քան շատ ուրիշ ազգականների և ծանօթների, որոնք հրաւիրուած էին հանգուցեալի յուղարկաւորութիւնը փառաւոր և շքեղ կացուցանելու:

Որովհետեւ քահանան չէր եկել, դրա համար էլ քարոզ չխօսուեց. և ինչ հարկ կար, քանի որ ամեն մի յուղարկաւոր գիտէր, թէ ինչպիսի բարի, աշխատասէր կին և մայր է եղել հանգուցեալը, ինչպէս է սիրել իւրայիններին և ինչպիսի բարեկամութեամբ վերաբերուել դէպի ուրիշները. կուսական անտառում այս բայց գերեզմանը երևելի գիտնականներից աւելի խօսուն էր: Ամենքն աղօթեցին գերեզմանի վրայ, ծածկեցին հողով և տիրութեամբ վերադարձան իրանց տները:

Աբրահամը ևս տուն դարձաւ. նա լաց չէր

եղել, բայց դէմքն այնպիսի մի տիրութիւն էր պատել, որ տեսնողը անշուշտ կիամնար թէ ինչպէս է այդ առաջին ձախորդութիւնը թափանցել նրա երիտասարդ սրտի մէջ։ Զարմանալին այն է, որ այս տիրութեան գիծը մնացել էր նրա դէմքի վրայ մինչև իւր կեանքի վախճանը։

Անցաւ ամբողջ երեք ամիս և յանկարծ եկաւ քահանան։ Նա բացակայութիւնից վերադառնալով՝ նոր էր ստացել նամակը։ Նա գովեց Եքի յառաջադիմութիւնը, բայց երեխային չուրախացրեց այդպիսի մի յարգելի մարդու գովասանքը։ Քահանայի գալը և գերեզմանի վրայ մաղթանք կատարելը կրկին նորոգեցին փոքր ինչ ապաքինած վերքը։



V

ՀԱՇՏԱՐԱՐ.

Կնոջ մահից մի տարի յետոյ Թովմաս Ակնկոլնը պսակուեց կենտուկկացի մի ալրի կնոջ հետ՝ Սէլլի Զօնսօն անունով։ Սա ևս լաւ կին էր, ունէր մի քանի լաւ յատկաւթիւններ և բարեխզգնութեամբ աշխատում էր որբերի համար ինչպէս. հարազատ մայր առանձնապէս հոգ էր տանում նա շնորհալի Աբրահամի պագալ կրթութեան վրայ։

Նրա բաղդից, մի պարոն Կրօֆօրդ անունով այդ նշանաւոր կերպով աճող գաղթականութեան մէջ մի մասնաւոր ուսումնաբան բացաւ և ամեն կերպ բարեկարգեց նրան։ Խերացաւ և ամեն կերպ բարեկարգեց նրան։ Խերացի խորթ մայրը իւր սիրելի որդին յանձնեց այդ մարդուն կարգացնելու։ Եքը պըդէն տամն երեք տարեկան էր, բայց ինչպէս լիշեցինք նա միայն սովորում էր կար-

դալ և գրել, իսկ հաշուել նա իմանում էր միայն ընականապէս՝ այնքան, ինչքան հարկաւոր էր տնալին հաշիւների համար։ Այժմ վերջապէս ժամանակ էր սովորել հիմնաւոր կերպով, և նա սկսեց սովորել այնպիսի ջերմեռանդութեամբ և աշխատասիրութեամբ, որ կարճ միջոցում ուսումնարանի առաջին աշակերտը դարձաւ։ Նա դրանով ամենեին չէր հպարտանում, այլ ամենքի հետ բարեկամացար էր վարվում և միշտ պատրաստ էր թէ գործով և թէ խորհրդով օգնել իրանից թոյլ ընկերներին։ Այդպիսով նա նրանց մէջ հեղինակութիւն ունեցող մի անձ դարձաւ, ամենքըն էլ հաւատում էին նրա բոլոր խօսքերին։ Միայն մէկն էր նրա վրայ նախանձում, բայց Եբը նրա հետ ևսքաղաքավարութեամբ էր վարվում։ Այդ տղային ուսումնարանի աշակերտներն անուանում էին «կաղ Դաւիթ»։ սա այդ ուսումնարանի առաջին աշակերտն էր մինչև այն ժամանակ, երբ Եբը իւր աշխատասիրութեամբ նրա տեղը կտրեց, և հէնց դրա համար էր, որ նա չէր կարող նրան լաւ աչքով նայել։

Աբրահամի համար հեշտ էր իւր թշնամուն ծաղրելով լուսահատութեան հասցնել, մանա-

ւանդ որ բոլոր ընկերները իւր կողմն էին անցել, բայց նա շատ լաւ էր հասկանում, որ ոչ ոք իրաւունք չունի ուրիշի անձնական պակասութեան վրայ ծիծաղել։ «Ինչպէս կը լինէր ինձ համար, ասում էր նա, եթէ ինձ «Երկայնականց» անուանէին. կամ իմ երկայն, անձոռնի ձեռներին նայելով՝ «կապիկ» անուանէին»։

Կաղ Դաւիթը ձեռքի ոլժով իւր ընկերներից ոչ մէկին չէր հասնիլ, մանաւանդ Աբրահամին, որին նա իւր ոլժով և գործով այնքան համապատասխան էր, ինչքան գորտը կը ուռնկին։ Այդ պատճառով էլ ոչ ոք չէր մտածում վրէժինդիր լինելու նրանից։

Նա մի անգամ գիտութեամբ գնաց անտառը, որտեղ նրա ընկերնից մէկը—Եղիազարը, որին նա նոյնապէս չէր սիրում, ժակարդ էր սարքել կզնաքիսների համար։ Դեռ նոր էին նրանք իրար հետ կոռւել, և նա ուրախ էր, որ ինքն ալդ դէպքում նրան վրէժինդիր կը լինի։

Վաղ առաւօտեան երիտասարդ գագանոբար վազեց իւր թակարդներին նայելու, նա ուրախութիւց վեր թռաւ, երբ տեսաւ որ առաջինը բռնուել է, վազեց նրա մօտ և զգուշու-

թեամբ մտիկ տուաւ. բայց ինչքան եղաւ նրա սրտի նեղութիւնը, երբ փոխանակ ազնիւկը զ-նաքիսի մի սատկած «քոռ. մուկ» գտաւ: Նա տհամութեամբ դէն ձգեց մուկը և վագեց երկ-րորդ թակարդի մօտ — և ահա բռնուած է: Նրա լուսը կենդանացաւ: Երկրորդ գիւտն ինձ կը վարձատրէ», մտածում էր նա, և հանեց — սկիւռի պոչ: Նրա ձեռները կրկին թռւլացան: Երրորդ թակարդից նա արդէն ոչինչ չէր սպա-սում: Նա միայն գլուխը շփում էր՝ թէ ով կը լինէր արդեօք նրա հետ այդպէս կատակ անողը, կամ չլինի թէ սկիւռն իսկապէս բըռ-նուել է և սոկուելով փախել, թռնելով միայն պոչը թակարդի մէջ: Եղիազարն այդպիսով մի քիչ հանգստացաւ: Յետոյ նա գնաց երրորդ թակարդի մօտ և զգուշութեամբ բաց արաւ, որովհետեւ նա էլ էր բռնուած երկում, բայց տեսնելով մի անսովոր որս՝ ակամայ աչքերը դարձրեց. դա մի թղթի կտոր էր՝ վերան գը-րած գուռ էշ ես՝ բաւերը: «Այդու կաղ ան-պիտան. լաւ, ես քեզ այնպիսի էշի ականջներ ցոյց տամ, որ երկար չմոռանաս»: Ինքն իրան այսպէս խօսելով մեր լիմարացած որսորդը և թռողթը կտոր կտոր անելով՝ օդի մէջ ցրուեց: Երբ դասն սկսուեց՝ Եղիազարն իսկոյն գնաց

իւր տեղը նստեց, առանց իւր բարկութիւնը նկատել տալու, իսկ կաղ Դաւթիթը մի առան-ձին շողոքորթութեամբ պտտում էր նրա շուր-ջը. այս անսովոր կերպով շուտ վերադառնալը նրա համար շատ կասկածելի էր երեսում: Մոխ-րագոյն աչքերի լաճախ չարութեամբ փալելը և դժուարութեամբ պահուող ծիծաղը ցոյց էին տալիս Դաւթին, որ Եղիազարի կասկածն իրա-կանութիւն է ստանում: — Թակարդի վրայ այդ-պէս բաներ անելն իսկապէս Դաւթի գործն էր: Դասատուութիւնը վերջացաւ: Նրանք ըստ սովորութեան վերկացան տեղերից մաղթանք կարգալով, որ սովորաբար լինում էր Աւետա-րանից՝ «Խուլ և համրի բժշկութեան» գլու-խը: Նատ կարելի է, որ Եղիազարն այդ ժա-մանակ մտածում էր կաղ Դաւթի վրայ, որով-հետեւ ուսումնարանի դռնից դուրս գալուն պէս նրան դուրս քաշեց ընկերների միջից ասելով՝ «Եւ նա նրան ժողովրդից բաժանեց....»:

Կաղ Դաւթի գրութիւնը վատացաւ: Եղի-ազարն առանց կանգ առնելու շարունակեց. «Եւ մատները կոխեց նրա ականջը»: Այս ա-սելով նրա ականջներից ալնպէս քաշեց, որ երեսը կարմրեց ինչպէս մի մատուտակ: Նա-լողները բարձրաձայն ծիծաղեցին: Յանցաւորը,

այնուամենալիւ, ուշքը հաւաքեց, բարձր աղաղակեց, սկսեց հալիզուել, ծեծուիլ զօրեղ հակառակորդեց, և յայտնի չէր թէ բանը ինչով կը վերջանար, եթէ Աբրահամը վրայ չը-հասնէր: Նա մնացել էր ուսումնարանում վարժապետի հետ խօսելու. հէնց որ լսեց կոռուի ձայնը, իսկոյն իմացաւ թէ բանը ինչումն է: Եղիազարն աշխատում էր ապացուցանել, որ ճշմարտութիւնը իւր կողմն է:

— Ինչ որ գու նրան արիր, իւր արարքի փոխարէնն էր, — վճռեց ուսումնարանի պատգամախօսը, բայց գու որ արածովդ սուրբ գործի խօսքն ունայն գործադրեցիր, այդ շատ վատ է, այդ սրբալլծութիւն է:

Տիրեց ընդհանուր լուսութիւն: Կաղ Պատիթը լուսաջինն էր, որ լուսութիւնն ընդհատեց:

— Բայց ես վարժապետին կասեմ:

— Գու այդ չես անիլ. վճռաբար պատասխանեց նրան Եբը, ասպա թէ ոչ՝ ինձանից ևս մի քանի ապահնել կ'ստանաս:

Այդ բոլորին սիրելի դատաւորի յարդանքեց և նրա ձեռների յատկութիւնից երկիւղ կը ելուց՝ Պատիթը լռեց, շատ լաւ իմանալով, որ ընկերներից ոչ ոք իրան չափատի օգնէր:

Դէհ, այժմ ձեր գործը վերջացած է, շարու-

նակեց դատաւորը, միմեանց ձեռք տուէք, հաշտուեցէք և այսուհետեւ գոնէ խաղաղ մնացէք: Եղիազարը ձեռքը մեկնեց, բայց Պատիթը չէր ուզում իւր ձեռքը նրան տալ: Միայն Եբի սպառնացող հայեացքը և նրա յայտնի առաջարկութիւնը՝ «ընդունել վճռածը» ստիպեցին նրան կատարելու:

Այդ օրից սկսած Եբին «հաշտարար» անունըն էին տալիս. միայն կաղ Պատիթը նրան առանձնապէս չէր յարգում յայտնի պատճառով:

Աբրահամն ունէր Պէորդ Վաշինգթոնի համառօտ կենսագրութիւնը. նա իմանալով որ վարժապետն ունի ուրիշ աւելի մեծը և ընդդարձակ գրածը՝ խնդրեց նրանից կարճ ժամանակով տալ իրան այդ գիրքը:

— Զշտապես, ասաց վարժապետը՝ գիրքը նրան տալով, կարգա ծանը և ուշադրութեամբ:

Մի քանի օրից յետով Եբը գիրքը յետ ըերաւ տիսուր դէմքով:

— Կարդացի՛ր, հարցըց զարմացած վարժապետը:

— Ո՞չ, գժբաղդութիւն է պատահել գրքին:

— Ի՞նչ գժբաղդութիւն:

— Ես գիրքն ինձ հետ տարի անտառը....:

—Եւ այնտեղ մոռացար:

—Ո՛չ, ես դիտմամբ թողեցի, որ ձեռքիս ունենամ, և նրան լաւ տեղ դրի—մի հին ծառի փչակում, բայց այս առաւօտ գնացի և գետնի վրայ թրջուած գտայ:

—Ոչինչ, կը չորանայ:

—Ես իսկոյն նրան արեգակի տակը դրի, չորացաւ, բայց բոլորովին փչացել է:

—Ցաւալի՛ է, ցաւալի՛:

—Ազնիւ վարժապետ. ես շատ ցաւեցի, որ ձեզ վնաս եմ հասցրել, բայց և ցաւում եմ, որ չեմ կարող վճարել գրքի գինը: Ձեզ մօտ չկամ արդեօք որևէ գործ ինձ լանձնելու, որպէս զի նրանով պարտքից ազատուեմ:

—Այսօր ես ցորեն պիտի հնձեմ. եթէ ճաշցից մինչև երեկոյ ինձ օգնես հնձելու, գրքի գինը գուրս կը գայ բոլորովին:


Եբն այլ ևս ոչինչ ասելիք չունէր: Այդ երեկոյ նա կարող էր գիրքը իւր օրինաւոր սեպ-հականութիւնը համարել:

Նա ունէր խոհեմ, ազնիւ և ճշմարտասէր բնութիւն: Նա իւր գլուխն ազատելու համար սուտ չէր ասիլ, որովհետեւ ստախօսութիւնը նրան շատ ատելի էր: Բայց այնուամենալիւ գրքի վերաբերութեամբ բոլոր ճշմարտութիւ-

նը չասաց վարժապետին: Նա չասաց, որ դիրքը գտել է ծառի տակ՝ մամուռի և տերեների մէջ թաղուած, այնպէս որ ոչ միայն թըրջուել էր, այլ և ցեխուտաւել էր: Բայց արդեօք գիրքն ինքը գուրս թուաւ ծառի փչակից և թաղուեց, — այդ շատ պարզ հասկանալի էր իրան: Ո՞վ կարող էր այդպիսի մի սատանայութիւն անել, եթէ ոչ յալտնի թշնամի կաղ Դաւիթը: Ուրիշն ամենեւին չէր կարող գերքը գտնել:

Եբն այդ լիմարին այնպէս ճնշել գիտէր, որ նա ստիլուած էր լինում խոստովանելու ամեն բան: Բայց նա, Դաւիթը, նրան հաւատացրեց, որ ինքն ամենեւին գիտաւորութիւն չի ունեցել գիրքը փչացնելու, այլ միայն նրան վախեցնելու և ման ածելու մտքով է արել. այդ էլ նրա համար, որ երբ Եղիազարը քաշել է նրա ականջից, ինքն ասել է թէ՛ իւր արարքի փոխարէնն է:

Բարի Եբը հաւատաց նրան: Եւ արդարեաւիթը չէր կարող գուշակել՝ թէ անձրկ կը գայ և գիրքը կը փչացնէ:



ողիք որ պատճեամ ունի կանոնի պատճեամ որ
ունի մը մը և պատճեամ ինու ունի և մը ու
ունի մը ու որ ունի ունի ունի ունի ունի ունի
գուշակ ունի ունի ունի ունի ունի ունի ունի
ունի ունի ունի ունի ունի ունի ունի ունի ունի
VI

ԱՐՄԱՆ ՃՍՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ.

Մի տարուց աւելի էր՝ Աբրահամը չէր յաճա-
խում միստէր կրօֆօրդի ուսումնարանը։ Նա
իմանում էր, որ կուսական անտառում բնա-
կուողի համար արդքան ուսումը բաւական է.
իսկ հայրը նրան խորհուրդ էր տալիս իւր կա-
րողութիւնից վեր աշխատել ծփուտ քաղելու
ամեն բանից։

Եթէ էրը գիմնազիօնի և մինչանգամ հա-
մալսարանի ուսանողների պէս վարուէր, այն
ժամանակ նա ուսումնարանը թողնելով՝ շատ
շուտ կարող էր մոռանալ ինչ որ սովորել էր։
Իհարկէ այն ժամանակ նա կամ փայտահատ
էր մնար, կամ հիւսն և երբէք նախագահ
չէր գառնալ։ Բայց նա բոլորովին ուրիշ կերպ
վարուեց. — իբրև մարդ՝ ցանկացաւ իւր արդիւն-
քը ցոյց տալ մարդկանց և շարունակեց կար-

դալ հ'ըտեղ կամ երբ ազատ ժամանակ էր ճա-
րում։ Մի և նոյն ժամանակ նա հարկադրուած
էր ինքն իրան համար և կերակուր հայթայ-
թել և՛ գրքեր առնելու փող վաստակել։

Նրա գործելը իւր կամքին էր։ Այսպէս է
լինում միշտ ամեն մի աշխատասէր մարդ։

Կուսական անտառուներում Խնդիանա նահան-
գը շինութիւնների համար ամենալաւ փայ-
տերի մի անսպառելի աղբիւր էր. իսկ մեծ մեծ
քաղաքներում մինչև Հարաւ փայտեղէնի պա-
կասութիւն էր։ Լինկունեան տան հարեան
միստէր Պիտար մեծ հարստութիւն էր ձեռք
բերել իւր սեղհական ծախքովը փայտ կտրել
տալով և հարաւալին նահանգները տանել ծա-
խելով։ Աբրահամը նրա ջերմեռանդ փայտա-
հատներից մէկն էր։ Նրա ահագին և ուժեղ
ձեռները լաւ տոկոսաբեր դրամագլխի էին
նմանվում։

Աբրահամը իւր ճակատագրից բաւական էր։
Ուսումնարանում ստացած կրթութիւնը ո՞րուե-
ղից չէր կարող նրա համար փող վաստակել։
Բայց նա աշխատում էր աւելի հարեանների
համակրութիւնը և յարգանքը վայելել։ Ում
որ պէտք էր լինում նամակ գրելու, դիմում էր
Աբրահամին և սա սիրով կատարում էր նրանց

Խնդիրը: Նա միշտ աշխատում էր ուրիշների
միրտը թափանցել և կատարեալ կերպով: ու-
սումնասիրել նրանց: Նրա այստեսակ վարժուն-
քը շատ օգտակար ունեցաւ իրան
համար:

Միստէր Պիտոր, իբրև հմտու գործիչ, շատ
լաւ դիտում էր, որ Աքրահամն աւելի բարձր
գիտութեան և զարգացման տէր միանձնա-
ռորութիւն է, քան թէ մի հասարակ փայտա-
հատ: Մի անդամ Պիտոր նրան իւր մօտ կան-
չեց և հարցրեց:

— Ի՞նչպէս էք կենցաղավարվում, Ե՛ք:

— Ենորհակալ եմ, ողորմած տէր, շատ լաւ
ենք:

— Ի՞նչպէս է թւում ձեզ ձեր արհեստը:

— Ոչինչ — ինձ համար, անբաւական չեմ ոչ
մի բանից:

— Դուք, լսել եմ, պարապվում էք և կար-
գալով և լաւ գիտէք գրելը:

— Մի քիչ, ողորմած տէր:

— Ուրեմն չէք նեղանում ձեր արդակիսի կըը-
թուած ժամանակ փայտահատ ես լինել:

— Քանի որ ես դրանով եմ հայ աշխատում,
էլ ինչու պէտք է նեղանամ կամ անբաւական
լինեմ:

— Այդ խելօքութիւն է: Բայց դուք քանի
տարեկան էք:

— Փետրվարին ես կը լինեմ տասնինն տա-
րեկան:

— Միան: Կարելի է շատ լինէք. դուք մեծ
էք երեսում և ուժեղ, ինչպէս հասակաւոր մարդ,
բայց և նայեցէք ձեր հասակակիցներին, ինչ-
քան վտիտ են նրանք ձեղ մօտ: Դուք ցան-
կութիւն չէք ունենալ արդեօք ուրիշ երկիր
ճանապարհորդելու:

— Ճանապարհորդելու. ես վաղուց տքնում
եմ այդ մասին:

— Այն. բայց լաւ պէտք է մտածէք. դա
զբոսանք չէ. ես խօսում եմ Միստիսիլի վրա-
յով գէպի նոր — Օրլէան փայտեր տանելու հա-
մար: Գործը մեծ է և ծանր:

— Այդ ոչինչ. ես գործից չեմ վախենում:

— Այդ է որ կարող էք լաւ փող վաստա-
կել:

— Աւելի լաւ:

— Եւ գիտէք ինչ կայ. ես ամեն մարդու այդ
գործը երբէք չեմ հաւատալ, բայց թէ առողջ
և գործունեալ մարդու: Բանը նրանումն է, որ
հարկաւոր է ոչ միայն փայտ տանել նոր-օր-
լէան, այլ և այնտեղ ինչքան կարելի է, աշ-

խատել ձեռնտու գնով ծախելու։ Դրա համար հարկաւոր է մեծ ճարպկութիւն և հմտութիւն ունենալ. իսկ եթէ ոչ, չես կարող ոչ մէկը և ոչ միւսը հարրու ժառիլ հյունէլ։ Ես ոչ մի կերպ չեմ կարող վաղօրօք ցոյց տալ կամ սովորցնել թէ ինչպէս և ինչ պէտք է անել—այդ աւելի տեղական հանգամանքներից է կախուած։ Միայն հարկաւոր է ծանօթանալ այդտեղի պայմանների հետ և աշխատել, որքան կարելի է շուտով օգուտ քաղել գործից։
—Հասկանում եմ. անհոգ եղէք բոլորովին. ես ամեն մարդու ապրանքս չեմ թողնիլ։

—Այնուհետև դուք կարգին գումար կը վաստակէք, այնպէս որ ձեր ձեռքը երբէք այդպիսի մի գումար ընկած չի լինիլ։ Օրէանը մեծ քաղաք է։ Նատ բան կայ այնտեղ տեսնելու և գնելու. այնտեղ հեշտ միջոցով կարելի է նաև հարստանալ, և գրանումդ փող ունենալով՝ ամեն ինչ....։

Միստէր Պիտոր իւր խօսքն ընդհատեց և խորամանկութեամբ նայեց երիտասարդի վրայ կուցած յօնքերի տակից։ Աբրահամը շատ լաւ էր հասկանում. նա յուցուեց և չկարողացաւ պատասխան տալ, միայն բոլորը լսեց բարկացած որտով, և կամենում էր դառնալ, բայց

Պիտոր բարեկամաբար ձեռքը դըաւ նրա ուսին և քաղցը ժպիտով ասաց.

—Մի բարկանաք ինձ վրայ, Ե՛ք. Ես միայն այս ասում եմ խօսքի համար. եթէ վաղուց ձեզ ազնիւ երիտասարդ չճանաչէի՝ երբէք ինձ մօտ չէի կանչիլ։

Եբք գեռ բոլորովին լուռ էր, բայց այնքան էլ բարկութեամբ չէր նայում։

—Հա, ուրեմն այժմ մնում է ձեզ միայն ընկերի համար մտածել. ում պէտք է ընտրէք արդեօք։

—Եղիազար Զօնսին, նա արդէն նոր-Օրլէ-անում եղած է։

—Բայց իմացէք որ, նա թէկ լիմար չէ, այնուամենայնիւ ես միանգամայն առևտուրի գործը նրան չեմ հաւաքած և միայն Զօնսը թող գալ ձեզ հետ, վնաս չունի։ Նրան այս բոպէին ուղարկեցէք ինձ մօտ և դուք գնացէք տուն, ձգեցէք այսօր իսկ ձեր կացինը. պէտք է ամեն բան կարգի դնել և պատրաստուել։

Աբրահամը վերադարձաւ տուն անակընկալ բաղդաւորութեան կատարեալ ցնծութեամբ։

Ինդիանայից մինչև նոր-Օրլէան բաւական ճանապարհ է։ Միստիսիալան՝ Հիւսիսալին Ամե-

ըիկալի այս գետերի հական, ընկած է անթիւ
ճիւղերով մի կողմից Կենտուկկա, Տենեսսա և
Միսսիսիպա նահանգների մէջ և միւս կողմից
Իլինօյս, Միսսուրա, Արկանզաս և Լուիզիանա
նահանգների մինչև Մեքսիկեան ծոցը, որի մէջ
և նա թափվում է: Իլինօյսի հարաւային սահմանի
մօտերքը նա ընդունում է իւր մէջ և
0հէօ գետը և միացնում է Միսսիսիպա և
Ինդիանա նահանգները միմեանց հետ: Նոր-
Օրլէանը գտնվում է Միսսիսիպայի բերանից
մի քանի մղոն հեռաւորութեան վրայ:

Միսսիսիպայի նաւագնացութիւնը, մանաւանդ այդ ժամանակ, չի կարելի համեմատել մեր Եւրոպական գետերի նաւագնացութեան հետ: Նրանց աւազոտութիւնը, սրբնթացու-
թիւնը, ժայռոտութիւնը, ջրի տակի քարերը
ինչքան էլ արագաշարժութիւն և գգուշու-
թիւն չպահանջն, այսուամենայնիւ այնքան
արգելք չեն լինի, ինչքան որ սպատակում է
Միսսիսիպայի վրայ: Մանաւանդ վատանգաւոր
են այս փայտի գերանները, որոնք տեղ տեղ
տնկած են գետի մէջ և որոնցից նաւերն աւելի շուռ կարող են վնասուիլ: նոյնպէս կարող
են վնասել և այս փայտերի կտորները, որոնք
լողութ են ջրի մէջ: Այն տեղերը, որ

ջրապտոյտ է լինում, այդ կտորները հաւաք-
վում են և սյույն են գալիս մի զարմանալի
արագութեամբ, մինչև որ նրանցից մինը, կամ
միւսը զատվում է և հեռու շալտվում: Այս-
պիսի ջրապտոյտի մէջ ընկնող նաւակը, յայտ-
նի բան է: ինկոյն կը խորանուզուի:

Հասկանալի է, որ այդպիսի գետի վրայ
լաստ տանելը հանաք չէ: Արբահամին յանձ-
նուած լաստը, որ շինած էր երկայն և հաստ
փայտերից, թէպէտ ամուր էր, բայց և շատ
ծանը էր և իւր մեծութեանը չափ դժուարա-
շարժ, այսպէս որ քիչ վարպետութիւն էր
պահանջվում նրան անփորձ տեղ: հասցնելու:
Էրը և իւր բարեկամը լացողութեամբ պատ-
րաստուեցան: Խանալպահն ընկնելու: Նրանք
պամուը կերպով հագնուեցան և ճանապարհի
համար վերցրին: տաք բրդեայ վերմակներ,
որոնք նրանց համար անկողնի տեղ ևս պիտի
ծառայէին: Նրանք աւելի շատ հաց և միս
վերցրին իրանց հետ: որովհետեւ նաև ագնու-
թիւնը մի քանի որ անելու էր ուրաքանչիւ-
ութիւնը արդեօք մի հրացան: Վարցրեց
Եղիադարը: այսուհետեւ ուրաքանչիւ-
ութիւնը համար վերցրել: են կարծում եմ,
որ մեզ ոչինչ չի պատահի: իացագուցէ գու

մի վատ բան ես մտածել:

— Ես, գիցուք, ոչ. միայն շատ են պատմել, որ աւազակութիւններ են լինում, մանաւանդ գետի ներքին կողմերում:

— Ե՛հ, դատարկ խօսքեր են. միայն վախեցնում են: Հրացանը թանգագին բան է, կը ժանդոտուի մեզ մօտ, ինչպէս պահենք:

— Իրաւ, հարկաւոր չէ. ես խօսքիդ համաձայն եմ:

— Եթէ այդպիսի մի գէպք էլ պատահի, մենք ունինք ուժեղ ձեռներ. կը գնանք Սատուծոյ ողորմութեամբ:

Գեղեցիկ դիտաւորութեամբ երիտասարդ լողագնացները «մնաք բարեաւ» ասելով իւրակիններին՝ ափից տախտակի վրայով գետը մտան: Նրանց այս ճանապարհորդութիւնը քաղցը էր բոլոր հարևաններին անգամ:

Նաւագնացութիւնն սկսուեց. ամեն բան լաւ էր անցնում: Նրանք մտան Միսսիսիպան և անտրտունջ անցան: Աստը գեղեցիկ կերպով և բոլոր արգելքներից զգուշ անցնում էր. միայն երբեմն օգնում էին նրան թիվալիները: Երկինքը պարզ էր, օդը հանդարտ, ամենուրեք նոր բան տեսնել, նորութիւններ լսել, չորս կողմը հետաքրքրական—ահա ինչպէս էր անց-

նում մեր ճանապարհորդների տիրուր ժամանակը գետի վրայ:

Երեկոյեան նրանք դուրս եկան գետի ափը, կանգնեցրին լաստի գնացքը և փաթաթուելով վերմակների մէջ՝ քնեցին բաց երկնքի տակ: Երեկոյեան զրոյցի ժամանակ էքը լիշելով՝ թէ ինչպէս ինքը տանը կտրում էր ծառերը և տաշում սլատրաստում նրանցից չափարի ցըցեր՝ չէր կարող չխոստավանուիլ, որ այս ճանապարհորդութիւնը ինքնըստինքեան, մի տըխուր գործ է: Տիրութիւնը գետի վրայ երբեմն էր լինում, և երբ անձրևից լետոյ արեգակը փայլում էր, այն ժամանակ հակառակն էր լինում: Մի անգամ սաստիկ անձրեախառն քամի փչեց. քամին շուտով հանդարտեց, իսկ անձրեք շարունակեց տեղալ այնպէս, ինչպէս ամանից ջուրը կը թափեն: Դրա համար էլ լաստը դանդաղ կերպով շարժուեց, որովհետեւ տեղը լաւ չէր հարթացրած: Հարկաւոր էր ոչ միայն թրջուիլ, այլ և անել ամեն բան, ինչ քան ոլժ կալ: Աերմակները ևս չօգնեցին—և ջուրը ծծեց երկու ընկերների մինչեւ սակորները:

— Ինչպէս է, Ե՛ր, ժպտալով հարցը եց Եղիագարը. լաւ չէր լինիլ, որ այժմ անտառում

լինէինք և ծառի տակ ծածկուէինք։ Տեսած
— Բոնիր ձախ կողմից, ասաց Եթը, այստեղ
ծառից խօսելու տեղը չէ։ Համար ճամփանց
— Ես քաշում եմ, ինչքան որժ ունիմ։ Բայց
եթէ ալդ ծառը լինէր հաստ, շատ ճիւղերով
և խիտ տերեներով, այն ժամանակ վատ չէր
լինիլ, այնպէս չէ։ Ազգութ զման զգաց արդիուն
— Թո՛ղ հանգստանամ, ախ սէր Աստուծոյ,
վրաս չոր թել անդամ չկայ։ Իսկ լաստը բու-
լորովին թրջուելու չափանիք առաջին զայտուն
— Այս ինչպէս պէտք է քննենք։ Երանի թէ
մինչեւ երեկոյ գործ դայնալիր, Ե՞թ, այն ժա-
մանակ դուք ովելի երգեր կ'երգէիր. ակ'երգէ-
իր և մեղղողալը աս նորմա վ Ս և առաջ զ
այս լեզուդապահնիր, թէ չէ քեղ հետ կը վա-
րուիմ այնպէս, ինչպէս գործի հետեւ կը ձգեմ
քեզ ջուրը։ այս մանաւի զի զայտ սփառու-
մա։ — Մի վախիր, կրկին կը ճհանես։ այս զայտ
— Այսուամենայնիւ գետիան մէջ լողալն ու-
րախութիւն է։ ո յան մ զայտ այս զայտ
— Ինձարկէ։ ամ զգանձնանց մայտ են մայ
Երկինքը միախնչէր կամենալ, որ ճանա-
պարհորդներն ալդքան նեղութիւն կը են։ Արե-
գակը վայլում էր և, դեռ մայր չմտած կար-
ծես աշխատում էր չորացնել մեր բարեկամնե-

ը շորերը։ Աակայն նրանց առաջ սրանից ա-
ւելի վատ արկած էր սպասում, նրանք արդէն
անցել էին գետի երեք քառորդ մասը, երբ մի
գեղեցիկ գիշեր— Լուկիզիանա նահանգում—
անհոգ պառկել էին քնելու, ամրացնելով լաս-
տը ափի մօտ։ Եթը երկար ժամանակ չէր քը-
նում. մինչդեռ նրա ընկերն արդէն խռըմ-
փացնում էր խոր քնի մէջ։ Լուսինը երկնքից
սփռում էր իւր աղօտ լոյսը գեղեցիկ դաշտա-
վայրի վրայ։ Եթը մտածում էր կրայինների
համար, որոնք հեռու հալրենական անտառի
մէջ էին. . . Յանկարծնա իրանից մի քիչ հեռու
մի բարակ ձախն է լսում, և թէպէտ տեղից
չէ շարժվում, բայց ականջները պղշում է.
ձախը նրան կարծիքական է թւռում։ Մի թե-
թէկա հարստածից զարթնում է նրա ընկերը;
— Ի՞նչ է պատահել. հարցնում է նա ապ-
շած։ զայտի զանձն այս չ նայու զայտ ծափ
զայտ— Լսիր, ըասում է նրան Եթը։ բայց ցըլը
Եղիազարն աչքերը լայտում է և ոչչ միայն
լսում, այլև նայում չորս կողմը։ զայտ մի
զայտ նեղըներեն. վերջապէս լայտում է նա:
— Եթը վագում է ուղիղ միտեղիւ վրայ։ այս
— Ո՞վ է ալդտեղ, հարցնում է նաև հաստ
ձախնով։ մայր զի ու մային խոյնուր մայում

Պատասխան չկար. Նրա առաջին անգամ լը-
սած ձայնը կտրուելու էր: զշ ճախա տակ դժու
— Ո՞վ է այդտեղ. ոգոզով է միւս կողմից
Եղիազարը: առ ամամբ ու լուսքը պահպակ
Յանկարծ երևում են չըս սեղէմքեր և
սկսում են մօտ գալ: այս պահ պահ զա
— Կանգնեցէք. կանչում են նրանց մեր հքա-
ջերը: լուսաւմ: զին մզգ դու դշ նույնափ
— Խեղճ նեգրներ. ձայն են հանում կար-
ծիքական դէմքերը, այնպիսի դէմքեր, ինչպէս
օրինակ աղքատը, եթէ մահակով մարդու վը-
րայ յարձակուի և ողորմութիւն խնդրէ:
Աբրահամը և իւր ընկերները պաշտպա-
նողական դիրք են բռնում: Նեգրները նոյն
Ժամայն ձգում են մուրացկանի ընդունած
դերը, մեկը յարձակում է Եղիազարի վրայ և
խփում մահակով նրա գլխին թէ չէ: յան-
կարծ էր խում է նրա ձեռքի փայտը և փո-
ղիցը պինդ բռնում: Կարծ կռուից լետոյ մեր
կտրիճը իւր հակառակորդինքաշ է տալիս դէ-
պի լաստը և ձգում է նրան ջուրը: Մնացած
երեքն այդ տեսնելով գարհուրում են: Նրանք
երկու անգամ շըշապատում են Եղիազարին,
բայց նա, թէ լուսահատուած, գիմադրում է
նրանց գաշոյնով, մինչեւ որ էր նրան օդնու-

թեան է գալիս: Այս ժամանակ նեգրները նը-
րան թողնում են և դառնում միւսի դէմ. նրան-
ցից մէկն այնպիսի մի ուժով բռնում է: Երի
աջ ձեռքից, որ ձեռքը թուլանում է. Երը ձախ
ձեռքով աշխատում է բռնել հակառակորդի
փողից: Աւազակը ձգում է մահակը և դաշոյնը
վերցնելով խփում: Երի ճակատին, հարուածը
կէս մատնաչափ դէպի աջ կողմը լինելով՝ տշ-
քըն ազատ է մնում վէրքից: Բարեբաղդաբար
դաշոյնը ասհում է ոսկորի վրայով, արիւնը
հոսում է վէրքից, բայց Երը չէ հանգարտվում,
մինչեւ որ հակառակորդին չէ բռնում: Նեգրը
փախչում է. նրան հետևում են և ընկերները:
— Այսպիսի սատանաներ կը լինին... սկսում
է հայկոյել Եղիազարը. ախ, եթէ մեզ մօտ
մի հրացան լինէր, այսպէս չէր լինի:
— Ի՞չ է, բարեկամ, սաստիկ վիրաւորուած
ես. այդպէս էլ կը լինի: միայն այս պահը
— Արիւնը հոսում է, բայց ոչինչ, աշքերս
ողջ են. գու ճակատս խնամիր:
— Որտեղից եկան այդ անպիտանները. գո-
նէ մի կերպ հեռացըինք մեղանից:
— Թըջիր թաշկինակս ջրի մէջ և կապիր
ճակատս, ես չեմ կարողանում ձեռքս բարձ-
րացնել:

Զեռքդես. Աս. շնորհաւորում եմ. Հապան
մենք քնչպէս կը հասնենք նոր Օրլէան:
Մի կերպ, կուղղաւինք, ոչինչ. վերքիս
մէջ զէպի, վատը փոփխութիւնը չկայ: Ա
նրանք կը կին պառկեցին քնելու, թէ և այդ
գիշերաքնել բոլորովին չկար: Երկուսն էլլուռ
մտածում էին: իրանց համար: Վերջապէս Եղի-
ազարը կիսեց: Այս ամսութիւնը առաջ եղաւ առաջաւուն ան-
դես: հետաքրքիր եմ իմանալ, թէ արդեօք
դու կը դադարի՞ս և խեղճ: Ա և մարդկանց
սլաշտպանելուց: Ես միշտ ասել եմ, որ այդ-
պիսի: մի սինլոր: և անպիտան չեղ ոչ մի տեղ
չկայ: ինկ դու այդ մասին նախատում ես սինձ
և քարոզ: կարդում գլխիս, թէ հարկաւոր է
նրանց գրութիւնը մտնել, հարկաւոր է նրանց
խղճալ: Այդպիսի ապիրատներին ամեն մտրակ
դեռքիչ է:

— Ես բոլորովին պատճառ չեմ գտնում: դրան-
ցից երես գարձնելու:

— Իրաւ որ այդպէս է: իհարկէ գայլերին
հէնց որ շարժեցիր՝ ոչխարի վրալ կը թափուին:

— Եթէ ես կարողանալի, ալսօր իսկ ստուկ-
ներին կազատէի:

— Իհարկէ. որպէս զի նրանք վաղը մեղծեծեն:
Ես, ճշմարիտ, զարմանում եմ թէ ինչպէս այս

ծեր սատանալին ջուրը ձգեցիր: Դուք ոիրաւ,
դրանում պիտակել ես, որի համար և ամբողջ
կեանքիդ մէջ պիտի զղջատ: և մի անգամ մաս
— Եթէ նա ընկղմուէր: ինձ ջատ յաւալի
կը լինէր: այս է այս ու այս պարունակութիւնը
— Դէքապւականէ, գաղարիր խնդրեմ, եթէ
ոչ կը զայրանամ:

— Եւ գոնէ այն էլ զայրանալու լաւէ: լսիր
ինձ և կիմանասը որևէս ճշմարիտ եմ սիօնում:

— Նատ հետաքրքիր են, գիշէ խնդրեմ յասահ:
— Դու իհարկէ վիճել չես կարող, թէ սպի-
տակների մէջ աւագակներ են անպիտաններ
չկան:

— Իհարկէ:

— Մէթէ դրանից հետեւում ուէ, որ բոլոր
սպիտակները վատ են:

— Ոչ: ամեն դէպքում մենք քեզ հետ բառ-
ցարութիւն ենք կազմում ու այսուհետ անուն:

— Ահա տեսնում ես որ, ինչպէս դու յետ
կարծում: մեր այս գիշերուայ աւազակները
պիտի սկսէին յափշտակել իրանց համագովիննեւ-
ըինց և առաջը և պատմութիւնները մայրէ Արքունիք:

— Չեմ կարծում: նրանք միշտ հետամուռ
են լինում սպիտակներին: և այս մարդուն:

— Հէնց այդպէս է: բայց ինչո՞ւ համար նրա

Համար որ նրանք սպիտակներին ատում են, որովհետև տեսնում են նրանց մէջ իրանց տանջողներին և դրա համար նրանց սպանելը ու կողոպտելը մեղք չեն համարում:

— Սուրբ մարդը ևս կարող է սխալուիլ: Գունէքով կերպերութեամբ այդ մարդիկը սաստիկ սխալուել են:

— Այդ բոլորովին չէր լինի, եթէ նրանք առիթ ունենային նայելու սպիտակներին՝ իբրև հարազատ եղբայրների վրայ:

— Եատ շնորհակալ եմ այդպիսի եղբայրսիթութեան համար. բայց այստեղ ոչինչ չասես, որովհետև նեգը խիստ նենդոտ է:

— Դարձեալ դու քոնը:

— Դէհ, շարունակի՛ր, չեմ նեղանալ:

— Դիցուք թէ սպիտակները մի քանի բնական գերազանցութիւններ ունին սևերի առաջ, բայց և այնպէս կարծիք չկայ, որ ամեն մարդ անբունադատ իրաւունք ունի իւր սեպհական աշխատանքի պառուղը վայելելու: Միւնոյն ժամանակ պէտք է նկատել, թէ նեգը ինչ պիսի՞ ջերմեռանդութեամբ է աշխատում դորձելու ժամանակ: Նա շատ լաւ է իմանում, որ մարդուն կերակրողը աշխատանքն է:

— Այդ սև սատանաները, որոնք մեզ այցե-

լեցին, իրանց համար չէին գործել, և այդ է սպատճառը, որ այնպէս շուտ են ծերացել: յան
— Իրանց վրայ հարկաւոր էլ չէ խօսելը:
— Նրանք միանգամայն ազատ են:

— Բայց ինչպէս են ազատ. նրանք ազատութիւն չեն վայելում — նրանք փախստական են, և դրա համար չեն կարող արդար և օրինաւոր աշխատանք ունենալ. կամ թէ դու ինքըդ նրանց գործ կը տան:

— Այն, ինչպէս չէ. հարուստ վաճառական կը դառնամ և նրանց ինձ մօտ հաշուանդահ կը հրաւիրեմ:

— Քեզ հետ խօսել անհնար է, որովհետև հէնց ինձ վրայ ես բարկանում:

— Ոչ մի ժամանակ քեզ վրայ չեմ բարկանալ. ընդհակառակը զարմանում եմ քեզանից, որ դու քով կեանքիդ սպառնացողներին ալաշտպանում ես. և նրանք որ մեզ չեն սպանել, այդ ոչ մի կերպ իրանց մեզքը չէ. իսկ այն, որ դու ցանկանում ես նրանց համար — գեղեցիկ է, միայն թէ գեռ լոկ երևակալութեան ցնորք է, որին նշանակութիւն տալ չի կարելի:

— Ժամանակը կը գայ՝ կը տեսնենք:
Մի առաւօտ օգնութեան անհրաժեշտ գեալ-

Քըն եկաւ: — Սէն-Լուից ցած գետի վրայով անց-
նող նաւակը նրանց երկու մարդ տուաւ մին-
չև Նոր-Օրլէան տանելու, որովհետեւ Աբ-
րահամն առանց օգնականի չէր. կարող գնալ
կատաղի գետովը:

Նրանց ալլ ևս աւագակներ չհանդիպե-
ցին միայն եղանակը բոլորովին վատացաւ:
Քիչ չանցած, քանի որ նրանք իրանց լողագ-
նացութիւնը վերջացնելու վրայ էին, կրկին
փոթորիկ արաւ՝ հետնէլ հողմախառն անձրւ:
Մի քիչ լառաջ — և ահա երկու կողմից
կրապին ժայռեր հանդիպեցին: Եթէ նրանց
երկու օգնականները չլինէին, անպատճառ մեծ
նեղութիւններ կը կրէին նրանք: Սակայն այս
վտանգը ևս անցաւ և նրանք լաջողու ան-
վնաս Նոր-Օրլէան հասին:

Աբրահամը կտրգագրեց ապրանքը վաճառ
հանելու և գործը կատարեալ լաջողութեան
հասցը:

Երիտասարդները բաղդ ունեցան ալդ բադ-
մամարդ, սքանչելի քաղաքին ի մօտոյ ծանօ-
թանալու. նրանք իսկոյն փողոցներն ընկան
և սկսեցին գործի լաջողութեան համար հնար-
ներ մտածել:

Յանկարծ հասին մի մեծ դռան: Պատերից
կպցըած ահագին յայտարարութիւններից, ո-
րոնք տալած էին աչքի ընկնող խոշոր տառե-
րով, նրանք իմացան, որ այնտեղ նոյն իսկ ժա-
մում աճուրդով ստրուկների մի քանի խումբ
պիտի վաճառուի: Դռան առաջ կանգնած էր
մի մարդ, և ուժգին հարում էր զանգակը ցան-
կացողներին հրաւիրելու: Մեր նորեկները ներս
մտան խուռն բազմութեան հետ:

Ա.հագին դահլիճում, մեծ սեղանի վրայ
կանգնեցրած էր մի չափահաս խափշիկուհի
(սեղըուհի). և անհաղորդ կերպով նայում էր
մարդկանց, որոնք խիտ առ խիտ տեղաւորու-
ած էին սեղանի շուրջը: Նրա դէմքը ցաւակ-
ցական արտայալտութիւն ունէր: Յափակի վը-
րայ սեղանի առաջ կանգնած էին երկու երե-
խաներ, մէկը տասն և միւսը տասներեք տա-
րեկան:

Ա.ճուրդն սկսուեց: Երկար ժամանակ ցան-
կացող չեղաւալա խեղճ կնոջնոառնելու, ո-
րովհետեւ նրա վատառողճ լինելը պարզ երե-
ւում էր: Վերջապէս նրան գնեց ահագին
յարգեալ գլխարկ կրող մի պարոն երկու հա-
րիւր գոլլարի, չնայելով որ նրան սկզբում
չորս հարիւր էին գնահատել:

ու մղմմանի ելացման ճապի ընտայք զմազմ ոգիմ
զբրագ դաշոց ըլառ, մարտառե խուռաց վարձակի
միջաման նզան և մ հմարի մի ցոյծան ոչ ելացաւարս
յամպատափ նայի մամ ելացարանցարանամաս և այլ
ըմայն մայթի ու քախ VII մաշ և մ ոչ ելատաւար
ոց յանձնուք ընտայք

ԾԱՆՐ ՀՐԱՋԵՇՏ.

Նոր-Օրլէան ճանապարհորդելուց յետոյ Եբը
կարծում էր՝ թէ այլ ևս չէ կարող ծառեր
կտրել. իսկ պարապուիլ ուրիշ աւելի լաւ
գործով նա գեռ չէր որոշել: Սակայն և մի-
անգամայն ձեռք վերցնել իւր նախկին գործից
— ծառեր կտրելուց, նա չխուսափեց, այլ
առաջուայ պէս սրտով ձեռք զարկեց գործին՝
պատրաստելով ծառերից ցանկերի համար ցը-
ցեր և ուրիշ բաներ:

Նա մտածեց կրկին անգամ Նոր-Օրլէան ճա-
նապարհորդելու, բայց այդ միտքը չերագոր-
ծուեց, որովհետեւ պարոն Պիտուր վճռել էր
այդ խուլ երկրից հեռանալ և գնալ մի աւե-
լի մարդաշատ երկրից: Սլստեղ նա ժամանա-
կաւոր էր ասլրում, այն էլ գործի համար:
Յայտնի է, որ գաղթականների համար երկիւղը

փոփոխական մի բան էր: Լինկօլնեան ընտա-
նիքը նոյնպէս կամենում էր շարժուել դէպի
մի տեղ, և այդ մասին մի անգամ արդէն յայտ-
նուել էր Ալբրահամի խորթ մօրը:

Ինդիանայի սահմանը կազմում է Խլինօյս.
այս նահանգը նշանաւոր էր իւր պաղաքերու-
թեամբ և լիրաւի այդ համեմատովիւնը գե-
րազանցում էր մնացեալ նահանգներին: Խլի-
նօյտում ոչ միայն անտառներ կային, ծաղը և
գեղեցիկ մարգագետիններ և սեահող դաշտեր:
Անտառալին ծանը աշխատովիւնները ձանձ-
րացիել էին Թովմաս Լինկօլնին, նա կամենում
էր լաւ տեղ փոխադրուիլ, և այդ արդէն յա-
ջողուել էլ նրան: — Նա իւր կնոջ եղբօրն ու-
ղարկեց Խլինօյս անձամբ տեսնելու և հաւա-
նելու տեղին, որ և գնաց ուղարկեց վերադաշտ
միանգամայն ուրախ գէմքով և միանգամայն
հաւանելով նոր երկրին: Բանն արդէն վճռու-
ած էր. նրանք պէտք է փոխադրուեին ան-
պատճառ, միայն երկար ժամանակ ցանկացող
չէր լինում նրանց հին բնակավալը գնելու:
Միանգամից ծաղկեցնել մի անմշակ երկիր,
այն էլ անտառալին, և այնպիսի մի դժուար
գործ էր, որ հարևաններից շատերը՝ նկատե-
լով այդ՝ ցանկացան նրանց այդ փոքրիկ գաս-

տակերտը գնելու, մանաւանդ որ ոչ միայն փողով էր վաճառվում, այլ և եզներով, որ գաղթականներին շատ ձեռնտու էր թէ անտին կահկարասիքը և թէ իրանց գործիքները բեռնելու համար:

Ամբողջ տասն և չորս տարի Ախնօլնեան ընտանիքը ընակվում էր Խնդիանայի կուսական անդրտուններում։ Երբ որ այդ հայրենիք դարձած էրկրից հրաժեշտ ամառն ժամանակը մօտեցաւ, նրանց շատ ձանը թուաց։ Տասն և չորս տարի առաջ նրանք չորս հոգի էին բնկ այժմ այդ չորս հոգուց մնացել էին երկուսը՝ հայրը և սորդին։ Այս այդ անդամությունը պահ ունի Մայրը և աղջիկը հանգչում էին ցուրտ շերմի տակ, եղևնի ծառի մօտ, որտեղ փոքրիկ երը սիրում էր անցկացնել իւր պազատ ժամերը։ Տասն տարի առաջ հայրը մի գագաղ էր շինել կնոջ համար, ինկ երեք տարի առաջ որդին մի ուրիշը շինեց քրոջ համար. այժմ երկուսը միասին խաչեր զինեցին և իրանց սիրելիների գերեզմանների վրայ կանգնեցրին։ Աւերջացնելով այս տիրութը գործը նրանք խուզ հասացան քներով, հրաժեշտի համբարյան առն ին այդ թանգարին չիրմներին, և ինքան շատ, ինչքան անվերջապահի խօսքեր պատճին

միմեանց այդ լուռ և անմռունց հրաժեշտով։ Ծերունու համար ծանր էր թողնել այն բլբակը, որի տակ հանգչում էին նրա վաղաթառամ ընկերակիցը և սիրասուն դստրիկը։ Նրա քնտանիքն ալժմ աւելի մեծ էր, քան առաջ—երկրորդ կինը չորս որդի էր ծնել։ Բայց և այնպէս, երբ նա կանգնում էր այդ գերեզմանների մօտ՝ ինքն իրան միայնակ էր գգում և նմանվում էր այն մեծածառերից մէկին, որի կատարը կոտրուած է փոթորկից։

Մնաք բարեաւ ասելով իրանց սիրելիների միմեներին՝ գաղթականները տասն և չորս հոգու ճանապարհ ընկան և երկու շաբթից լի՛ տոյ հասին մի նոր տեղ՝ Թեկատուր քաղաքից երկու և կէս մզոն հեռու։ Սանգամօն գետի մօտ՝ Պլինօս նահանգում։

Տեղի գիրքը մեծ առաւելութիւն էր խօսուանում, բայց ո՞ւր էին նրանց տունը, բակը և բանջարանոցը։ Հարկաւոր էր կրկին շինել այդ ամենը, և այս անգամ Աբրահամը կարույ էր օգնել իւր հօրն աւելի քան տասն և չորս տարի առաջ։ Կարճ միջոցում նա պատրաստեց երեք հազարի չափ ցցեր՝ նոր կալուածը ցանկապատելու համար։ Այդ ցցերից մէկն էր, որ պատիւ ունեցաւ յետոյ ազգային դրօշակի

տեղ ծառայելու։ Այս համառօտ տեսութիւնից երևում է, թէ ին' չպէս բարձր է գնահատվում աշխատանքն Ամերիկայում, ինչքան էլ աշխատողն ստորին դասակարգից լինի։

Ամբողջ ամառը և հետեւեալ ձմեռն Աբրահամը մնաց տանը։ Թէպէտե նա ամերիկական օրէնքի համաձայն չափահասութեան էր հասել, բայց չէր կամենում իւր հօրը թողնել և ինքն ուրիշ տեղ գնալ, քանի որ հայրը դեռ վերջնականապէս չէր հաստատել իւր բնակութիւնը նոր երկրում։

Ձմեռն անսովոր կերպով երկարատեւ էր և խիստ ցուրտ։ Քանի ամիս շարունակ երեք ոտնաշափ բարձրութեամբ ձիւնը ծածկել էր գետինը, այնպէս որ երկար ժամանակ լիշվում էր այդ ձմեռը ձեան չափազանց սաստկութեան պատճառով։

Այդ ձմեռն Աբրահամին անվեհեր որսորդ շինեց։ Մեզ մօտ հարուստ մարդիկ որսորդութեան վրայ նայում են մեծ աչքով, այնէ եթէ որսն ընկնում է—լաւ է, չի ընկնում դըժքաղդութիւն էլ չէ։ Այստեղ այդպէս չէր. էր համար որսորդութիւնը գործ էր, այն էլ դըժուար գործ. նա պիտի անպատճառ որս բերէր տուն, որովհետեւ ուրիշ ուտելու բան չկար։

Վերջապէս պէտք է ասել և այն, որ Հիւսիսային Ամերիկայի հեռու արևմտեան անպատներում կամ մարգագետիններում որսն այնքան շատ չէ, ինչքան մեզ մօտ. այնտեղ եղջերուների, նապաստակների, կաքաւների և վայրենի հնդկահաւերի պակասութիւն չկալ. բայց այդ կենդանիները երկչոտ և խորամանկ են և գիտեն որսորդից թագ կենալ, կամ փախչել։ Խոկ երբ գործը հասնում է հրացանաձրգութեան, այն ժամանակ պէտք է ամուր ձեռներ և ուղիղ հայեացք ունենալ, որպէս զի զուր տեղը վառուս չփչանալ։ Այդտեղի մարդիկ սովորութիւն արած են որսորդութիւնը, բայց էր սովոր չէր հրացանի, որովհետեւ սկզբեց շատ զէնք չէր գործ ածել։ Սակայն կարեքն ինչ չէ սովորցնում. Աբրահամը երեւելի զինավարժ դարձաւ—և քի՞չ էր արգեօք, որ զէնքն ասլագալում նրան գործել։ տուաւ։

առն որ մաս և յան և զույց ու խաղաքի և
առն մասնելու առն պատճենն այսուհետ
այս և առաջնամաքարդուն և առն և առաջնամաք
բառի և առն ընդուն ու ու առն մասն և
և պատճենագով պատճենագով պատճենագով
ՎIII առաջնամաքարդուն պատճենագով պատճենագով
պատճենագով պատճենագով պատճենագով պատճենագով
էին Ս. Ն. Կ. Ա. Խ. Ո. Ւ. Թ. Ի. Խ. Ն. Ը.

1831 թ. Փետրվարի 12-ին լրացաւ էր Ք.
քսան երկու տարին:

Գարունը մօտեցաւ, և նա լիշեց, որ ժա-
մանակ է մտածել իւր ապագայի Համար: Նա
պէտք է ընտրեր երկուսից մէկը—կամ մնալ
հօր մօտ մինչև նրա մահը և յետոյ տիրանալ
նրանից մնացած ժառանգութեան և կամ ու-
րիշ մարդկանց մօտ մտնել մի կտոր հաց վաս-
տակելու: Ընտանեկան հանգամանքներն ստի-
պում էին նրան մնալ տանը, քան մի ուրիշ
գործի գնալ: Նա չգիտէր որն անէր. այդ գէպ-
քում նրան օգնեց Հալրը:

— Ե՞ր, ասաց նա, մօտենում է այն ժամա-
նակը, երբ գործատէրերը լաւ գործակատար-
ներ են որոնում: Մինչև այժմ դու միայն ինձ
համար էիր աշխատում. ամբողջ ձմեռը մեզ

բոլորիս դու կերակրեցիր; և այդ միայն ինձ է
յալոնի:

— Հայր, ես միայն իմ պարտքս կատարեցի,
և այդ ինձ համար դժուար չէր:

— Ես գիտեմ քո համեստութիւնը, բայց
միշտ ալղպէս չի կարելի անել, որովհետեւ դո-
արգէն կատարեալ հասակդ ես մտել և հեռու չէ
քեզանից այն ժամը, երբ պէտք է մտածես
քո ընտանեկան վիճակի համար: Իրաւ,
դու օգնում ես ինձ քո գործով, բայց ես դըժ-
բաղդաբար քեզ վարձատել անկարող եմ:

— Ես չեմ պահանջում և չեմ պահանջիւ
այդ:

— Գիտեմ. բայց դու վերջապէս ապրուստ
պէտք է ունենաս և տուն պէտք է պահես: Ուստի ես քեզ խորհուրդ կը տալի մի մարդու
մօտ մտնել և քեզ համար աշխատել: Իմ մա-
սին անհոգ եղիր. ամենադժուար գործն ար-
գէն կարգի դրուած է և ես դեռ ոյժունիմ
գործելու, փառք Աստուծոյ:

— Հայր, եթէ կամենում ես, կ'երթամ:

— Զկարծես թէ ես քեզ հալածում եմ: Ո՛չ.
ես միայն քո օգուտն եմ ցանկանում: Եւ ին-
չու պիտի թոյլ տաս քեզ ինձ մօտ աշխատե-
լու, քանի որ այդ մասին կարիք չկայ: Մեր

գործը երկուսիս համար քիչ է, մեր հողը խիստ փոքր է։ Եթէ քեզ յաջողի փող վաստակել, մի քանի տարուց յետոյ կը վերադառնաս, ես քեզ կը տամ մի դաստակերտ և դու ամեն կերպ միջոց կ'ունենաս աւելի կատարեալ կերպով մշակելու նրան, քան թէ ես այժըմ մշակում եմ։ Իսկ եթէ քո գործերը վատ կ'երթան, հօրդ տան դուռը միշտ քեզ համար բաց կը լինի — միայն գնա՛։

«Դու ճշմարիտ ես ասում, հայր, բաղդ կ'որոնեմ» — ասելով Աբրահամը հօրիցը բաժանուեց։ Նա վճռեց գնալ այն ճանապարհով, որով գնում է ամեն մի աղքատ իւր կեանքը սովից ազատելու։ Մեզ մօտ՝ Եւրոպայում վատ գործից ամաչում են, որովհետև կարծում են թէ նրանից կարող են նախատինք ստանալ։ ընդհակառակն Ամերիկայում այդ ամօթը և նախատինքը չկայ։ Այստեղ չեն հարցնում վաստաբանին, նախագահին, զինուորականին, հարուստ վաճառականին թէ՝ «Ի՞նչ գործի տէր էիք դուք, առաջ»։ Մշակ է այս ինչ մարդը, թէ բեռնակիր, ատենի սպասաւոր է, թէ հիւսն, դերձակ է, թէ գրադիր, այդ նրանց գործը չէ։ բաւական է որ նա գործը լաւ է կատարում և միշտ պատուաւոր

մարդ է եղած։ Բայց պէտք է ասել, որ ընդհակառակն էլ է պատահում։ Հօր արժանաւորութիւնները և ծառայութիւններն ամենեին չեն օգնում որդուն աստիճանի և պատուի արժանանալու գործում, եթէ նա ինքնայդ յատկութիւնները չունի։ Լինկոլնի մասին նրա նախագահութեան ժամանակից մի բան ան պատմում, որը պարզում է այն, ինչ որ մենք այժմ կը պատմենք. —

Մի գերմանացի հին ազնուական տոհմից զանազան հանգամանքներից ստիպուած՝ վըճռում է միանգամայն գաղթել Ամերիկա և խնդրում է նախագահին, որ իրան բանակի մէջ սպայ ընդունէ։ Նրա խնդիրը կատարվում է և, բացի դրանից, նա նախագահի մօտ յարգանք և պատիւ է ունենում ու այնպէս գրաւում է նրան, որ նա ասում է թէ՝ իւր ծագումը հին և նշանաւոր գերմանական տոհմիցն է։ «Օ՛հ, մի վախէք, ասում է Լինկոլնը իւր քաղցր ընաւորութեան քաղցր ժակտով, — այդ ամենեին չի արգելում ձեզ մեզ մօտ մնալու»։

Երբ Լինկոլնը հօրից բաժանուեց, նա խեղճ դրութեան մէջ էր՝ բառի բուն նշանակութեամբ։ Բայց նա կարող էր իւր ձեռքի վաստա-

կըն ունենալ — աշխատանքի բոլոր դռները բաց
էին նրա առաջ։ Աբրահամը գործում էր որտեղ պատահում
էր։ Նա ընկաւ Պետերբուրգ, Խլինօսի Արմստ-
րոնդ անունով դաստակերտը և այնտեղ բան-
որ մտաւ։ Ծերունի և բարի գործատէրերը
նրան որդու պէս էին սիրում, առաւել նրա
համար, որ իրանց որդին՝ փոքրիկ Զօնը, իրանց
շատ չէր ուրախացրել։ Եւ երբ դաշտային գոր-
ծերը վերջացան ու ձմեռը հասաւ, այդ բարի
գործատէրերն էին իրանցից չբաժանեցին։
Յիշաւի նրանք այն յոյսն էին տածում թէ՝
այդպիսի կարգին և աշխատասէր մի տղամարդ
բարի օրինակ կարող է դառնալ իրանց որդուն։
Աբրահամը մօտիկ յարաբերութիւն ունեցաւ
ծերերի հետ և դրա համար չէր կարող չսիրել
Զօնին, որովհետեւ նա համոզուած էր, որ Զօ-
նը իւր բոլոր անառակութեան հետ չար սիրտ
չունի, միայն անզգուշ և թեթևամիտ մի տը-
ղայ է։ Զօնն այնպիսին էրից էր, որոնք շատ
բան սովորում են միայն փորձով։

Ձմեռուայ հետ միասին Աբրահամի համար
հասան և շատ ազատ ժամեր, որոնցից օդուտ
քաղել նա սովոր էր։ Նա սկսեց պարապուել
մայրենի լեզուի քերականութեամբ, նոյնպէս

և մի քանի ընտիր գրքերի ընթերցանու-
թեամբ։ Նա շատ էր ցանկանում, որ Զօնը իւր
հետ միասին պարապուեր, բայց ոչ մի կերպ
չէր կարողանում նրա մէջ այդ սէրը զարթեց-
նել. մի խօսքով նա չէր դադարում կարդա-
լուց և խօսք եղած ժամանակն ասում էր, որ
ինքն էլ չի հասկանում՝ թէ դրանից ի՞նչ օ-
գուտ պէտք է ունենալ — փաստաբան խօ չէ
դառնալու։

Աբրահամը իւր բարի գործատէրերի միջո-
ցով ծանօթացաւ Պանտէն-Օֆֆուլդ անունով
վաճառականի հետ և պատմեց նրան իւր՝ պա-
րոն Պիտտի լանձնարարութեամբ՝ դէպի Նոր-
Օրէան արած ճանապարհորդութիւնը։ Վա-
ճառականը նրան առաջարկեց իւր մօտ գոր-
ծակատար մտնել և գարնան սկսելուն պէս
երկրորդ անգամ ևս ճանապարհորդել միւնոյն
քաղաքը իւր գործերի համար։ Աբրահամը սի-
րով ընդունեց այդ առաջարկութիւնը։

Տխուր տպաւորութեան տակ նա շնորհա-
կալութիւն արաւ իւր թանգագին ծերունի
գործատէրերից և վերջին մնաս բարեաւը տա-
լու ժամանակ պինդ սեղմեց նրանց որդու
ձեռը։

Այս անգամ նա պէտք է տանէր հիւսիսա-

լին երկերների զանազան բերքերը հարաւային բերքերի հետ փոխելու։

Ճանապարհորդութիւնն այնքան դժուարութիւնների հանդիսաց, ինչքան առաջ, որովհետև նրան տուել էին միայն երկու օգնական, որոնցից պահանջվում էր ոչ այնքան Փիզիքական ոյժ, ինչքան մտաւոր։

Ինչ փոփոխութեան ենթարկուեց նրա կեանքը. — մինչև ձմեռ դաստակերտի բանուոր, իսկ ձմեռուանից յետոյ վաճառական։

Նոր-Օրլէանն ընկած է խիստ վատառողջ մի տեղ. անձրևային եղանակներից յետու նրա շուրջը միշտ ճահիճներ են դառնում։ Հարաւի տօթագին արեգակը չէ կարողանում չորացնել այդ տեղերը և ջերմութիւնն աւելի ևս վնասակար գոլորշիներ ու գարշահոտութիւններ է բարձրացնում։ Խմելու ջուրը վատ է և օդը վարակուած. այդ է պատճառը, որ ջերմախոր յաճախ հիւր է լինում այստեղ։ Մենք փորձով գիտենք, թէ ինչպէս զարհուրելի կերպով ներգործում է ժանտախտը (խօլերա) այստեղ և ինչպէս նա միանգամայն բուն դրաւ։ — Ասում են, որ ջերմախոր ներգործում է այստեղ աւելի ևս կործանիչ կերպով, մինչդեռ նա նոյնքան վարակիչ է, ինչքան և ժան-

տախտը։

Հենց այդ զարհուրելի ախտը Նոր-Օրլէանում գիպաւ Լինկոլնին աւելի սաստիկ կերպով։ Նրան էլ հարկ չկար հարցնելու իւր ինչ հիւանդութեամբ վարակուած լինելը. նա արդէն զգում էր այդ, նայելով մանաւանդ փողոյներում իրան հանդիսող մարդկանց երեսին։ Ամեն մարդ վարակուելու սարսափից փախչում էր միմեանց մօտով անցնելու ժամանակ, ամենքըն արագութեամբ և անձայն սահում էին միմեանց ետևից, ինչպէս ուրուականներ։

Քաղաքն աւելիչ ժանտախտի ժանիքներով պաշարուած՝ տխուր տսլաւորութիւն ուներ. ոչ զանգակների ձայներ էին լսվում, ոչ երաժշտութիւն, ոչ ուրախ ծիծաղ. — ամեն տեղ երևում էին դժնեայ և բազմահոգ դէմքեր։ Սակայն այդտեղ ճանաչում են թշնամուն, գիտեն՝ թէ որ կողմից է նա սպառնում և ինչպէս պէտք է պաշտպանուիլ նրանից։ Քաղաքի զարհուրելի դրութեանը լաւ վախճան չէր սպասում, որովհետև նրա մէջ չարաչար կերպով ներգործում են ժանտախտը և ջերմախտը։ Թշնամին ոչ այստեղ է, ոչ այստեղ — նա ամեն տեղ է և ոչ թէ մի տեղ։ Անա բարեկամիդ պատահելով՝ չես իմանում

որ նա ակամալից սաստիկ թշնամի է դարձել քեզ հետ։ Դրա համար ամենքի դէմքերի վը-
րայ երկիւղ, զարհուրանք և յուսահատութիւն
էք կարդում, իսկ պաշտպանութեան և ոչ մի
նշան։

Լինկօլնը իւր առաջին ճանապարհորդու-
թեան ժամանակ ինչքան բազմամարդ, շար-
ժուն և կենդանի դտաւ Նոր-Օրլէանի փողոց-
ները, այժմ ընդհակառակն է տեսնում. ամեն
տեղ լուռ, ամեն բան դատարկ։ Երբ նա մը-
տածում էր, որ ինքն արդէն թշնամուց յաղ-
թուելու ճակատագրին մօտ է, որի մասին և
շատ զարհուրելի բաներ է լսել, այնպէս դողում
էր, ինչպէս մարդ դողում է ցրտից։ Օրը մըթ-
նել էր. նա ուղևորուեց դէպի իւր բնակարա-
նը, ճանապարհին մի ինչ որ իբանի դիպաւ
և կարծես մի մարդու ուրուական նրա առաջ
պատկերացաւ։ Նա մտաւ մօտիկ գտնուող տու-
նը և ալդտեղից մի լապտեր խնդրեց։ Նրան
ուղեկցեց մի նեղը լապտերը ձեռին, նեղը
մի ձեռքանի էր։

— Ի՞նչպէս զրկուեցար ձեռքիցդ. հարցը նը-
նրան Լինկօլնը։

— Իմ առաջուայ տէրս կտրեց նրան։
— Ինչու համար։

— Որովհետեւ երբ նա անմեղ տեղից ինձ
ծեծում էր, ես կամեցայ սլաշտպանուիլ. . . .

— Բայց միթէ նա իրաւունք ունէր այդ ա-
նելու։

— Սպիտակների օրէնքին համեմատ ունէր։
Աբրահամը դողաց։

Բայց ինչպէս նկարագրել նրա զարհուրան-
քը, երբ նա լապտերի տակ լուսով ճանաչեց
այն բանը, որին ինքը դիպել էր մութ ժա-
մանակ։ Հինգ հատ դիպակներ ընկած էին մերկ
քարի վրայ, որոնցից քիչ հեռու, նոյնպէս
փողոցի մէջ, կային մի քանի դագաղներ։ Հա-
րևան փողոցով հանդիսաւոր, բայց անձայն կեր-
պով և հանդարտութեամբ անցնում էր տր-
խաւը կերպարանքների մի խումբ։ Դա Աստուա-
ծամօր վշտալի միաբանութեան անդամների
խումբն էր։ Խմբին հետեւում էր մի կոտրտու-
ած սալլակ դագաղները միջին։ Միաբաններն
այդ դագաղները ևս նրանց մէջ դրին և բո-
լորն ամրացրին սալլակի վրայ, որ յատուկ դրա
համար էր շինուած, և անհետացան ալնպէս
լուռ, ինչպէս երևացել էին։

Լինկօլնը շտապեց իւր բնակարանը և պառ-
կեց, բայց քնել չկարողացաւ։ Նրան շատ դը-
ժուար էր թւում այդ յանկարծահաս երկիւղի

Հետ հաշտուիլ, որովհետև այնպէս սաստիկ բռնել էր նրան, որ եթէ թոյլ տար՝ աւելի կուգէր հիւանդանալ, քան յանկարծամահ լինել: Վերջապէս նամի կերպ քնեց և հանգստացաւ: Առաւօտը զարժնելով քնից՝ շատ զարմացաւ, որ իրան բոլորովին առողջ գտաւ: Նա երազում իրան մեռած էր տեսել և լիշել էր մինչև անգամ, թէ ինչպէս մի ձեռքանի նեղը ոտով հրեց իրան սենեակի պատշգամբից: և ձգեց կամրջի վրայ: Նա ուղղեց զինքը, շարժեց բոլոր անդամները—և, փառք Աստուծոյ, բոլորովին առողջ էր....:

Թէև քաղաքի զարհուրելի դրութիւնը նրա վրայ առանձին տպաւորութիւն գործեց, բայց և այնպէս, համեմատաբար դա շատ օգտակար եղաւ նրա համար, որովհետև նա համարեած միակ ճանապարհորդ—վաճառականն էր: Քաղաքում գտնուող ապրանքների կոյտերի գները սարսափելի կերպով ընկել էին. նրանց վրայ ուշադրութիւն դարձնող չկար. իսկ նոր մտնող ապրանքները ընդհակառակն աւելի բարձր գին ունեին, որովհետև նրանց կարեռութիւնը շատ էր և բերող չկար: Աքրահամը չափից դուրս ուրախ էր, որ իրան յանձնուած գործը յաջողութեամբ կատարելով՝ կա-

րողացաւ Հիւսիս վերադառնալ: Նա Աստուծուն գոհութիւն վերառաքեց և երդուեց այլ ևս գէպի հարաւային նահանգները չճանապարհորդեց:

Պարոն Օֆֆուլդը իւր գործակատարի յաջող ճանապարհորդութեան համար աննկարագրելի ցնծութեան հասաւ: Նա յայտնեց, որ ոչ մի կերպ Աքրահամից չի բաժանուիլ և թախանձեց նրան ընդունել իւր նոր խանութիւն կառավարութիւնը, որ բացել էր Նիւ-Սալէմում: Աքրահամը միապատճառ չգտաւ չհամաձայնուելու և, ուղևորուելով՝ Նիւ-Սալէմ՝ ձեռք զարկեց նոր գործին՝ յատուկ ջերմեռանդութեամբ:

Սակայն նրան չէին տարել երկար ժամանակ: իսանութպան մնալու: Նախ քան նա կարող էր պատուով ձեռք բերել նախագահութեան աթոռը՝ դեռ երկար ժամանակ պէտք էր շատ բան սովորել: Իւր վիճակի փոփոխութեամբ նա պարտական էր հնդկական զօրագլխին՝ Սև—Բագէին:

IX

ԱԲՐԱՀՈՒՄԻ ՓԱՌԵՔԸ.

Երբ Աքրահամն արդէն նախագահ էր, այսինքն ժողովրդից ընտրուած կառավարիչ Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգների, մի անգամ նա իւր բարեկամների հետ խօսելու ժամանակ լիշեց իւր կեանքի անցած օրերը:

— Միայն այդ տարին — ասաց նա, — որի մասին է խօսքս, իմ մէջ տիրում էր հապարտութեան և անձնապատանութեան հոգին: Այն ժամանակ, ճշմարիտն ասած, ես շատ էի հըպարտանում իմ մեծամեծ ձեռնարկութիւններով, որոնց վրայ վերջին ժամանակներս բոլորովին ուրիշ աչքով էին նայում: Գլուխս դիտաւորութիւններով լցուել էր. բայց պէտք է ի նկատի ունենալ, որ այդ դիտաւորութեանց մէջ գլխաւոր գեր խաղացողն իմ ձեռներս են եղել: Գործակատարութիւնից ինձ

լաջողուեց վաճառական դառնալ — իբրև փայլուն պատկեր սնանկութեան նսեմ ցնորդով...:

Այդ պէտքում ես կրկին միխթարութիւն գտի իմ երկայն ուժեղ ձեռներից: «Սև-Բազէն» գործակատարութիւնից ինձ զօրապէտութեան աստիճանին հասցրեց: Թէկուզ ես անմիջապէս չստացայ նրանից իմ վկայականը, սակայն նրա ողորմութեամբ իմ կեանքը բոլորովին մի նոր շատղի մէջ մտաւ:

Այսպէս Սև-Բազէն Աքրահամին մարդկանց կարգը հասցրեց:

Պատմութեան հետ լաւ ծանօթանալու համար պէտք է մի քիչ հեռուից սկսենք:

Երբ որ Զենուացի Քրիստափոր Կօլօմբոսը 1494 թ. գտաւ Ամերիկան, նա կարծեց, որ իւր գտած երկիրը պատկանում է Հնդկաստանին (դրա համար անունը մնաց Արևելան Հնդկաստան:) Այդ պատճառով տեղացի քննկեներին նա հնդիկներ անունը պահեցին մինչեւ այսօր ամբողջ Մայր-Ամերիկայում: Այդ կարմրակաշիները, որ մեծ մասամբ անմօրում էին, պատերազմում էին քաջութեամբ և խորամանկութեամբ: Առաջ երկու կողմերն էլ իրար վրայ լաւ աչքով էին նայում, բայց լետոյ նը-

րանց մէջ տիրեց սարսափելի ատելութիւն մի-
մեանց դէմ։ Սալիտակներն սկսեցին աճել աւե-
լի հեռու կողմերում և նեղացնել տեղացի
կարմրակաշիներին և, երկիրն իրանց սեպհա-
կանելով՝ ընդարձակել նրա սահմաններն աւե-
լի քան առաջ հնդիկները որսորդութիւն էին
անում այդտեղ։ Նրանք՝ հնդիկները հաստա-
տուն բնակարաններ չունեին, երկրագործու-
թիւն չգիտէին և ապրում էին միայն որսոր-
դութեամբ։

Կարմրակաշիները թէպէտ և շատ լիմար
չէին, բայց և այնպէս ոչ մի կերպ չկարո-
ղացան հասկանալ թէ՝ սալիտակներն իրանց
հետ ինչ գործ ունին և ինչքո՞ ծագեց նրանց
մէջ թշնամութիւնը։ Նրանք չէին կամենում
հալածուիլ հալրենիքից և սկսեցին պաշտպանու-
թիւ բայց այդ պաշտպանութիւնը նրանց քիչ
օգնեց, ամենակատաղի թշնամութիւնը իւր
տարրական զէնքերով, այնէ՝ նիզակներով։ և
նետերով, ոչինչ չկարողացաւ անել սպիտակ
կոռուզների հրացանի դէմ։ ամենանուրը տե-
սողութիւնը և լսողութիւնն անգամ չօգ-
նեց նրանց։ Կարմրակաշիներն ստիպուած էին
օրէցօր հեռանալ, և այդպիսով միանգամայն
ժուլացաւ նրանց ոլժը։

Սպանացիների դէպի Ամերիկա արած արշա-
ւանքից յետոյ սպիտակների և հնդիկների մէջ
եղած սարսափելի պատերազմը չէր դադարում։
Վայրենիներն անարդարութեան և խստու-
թեան փոխարէն խստութեամբ հատուցին և որ-
տեղ միայն կարողացան՝ դարաններ լարեցին ու
սպիտակների վրայ յարձակուելով շատերին կո-
տորեցին։ Նրանք ամեն մի սպանուածի գլու-
խը մաշկում էին և չորս կողմն ուղիղ ջրջա-
նակ թողնում։ Այս նրանց յաղթութեան նը-
շանն էր և անուանվում էր սկալպայ, որ
դրվում էր նրանց գօտու վրայ, կամ կախիում
վրանների և բանակների մէջ ի ցոյց մարդկան։
Այս ամենն այսօր էլ կատարվում է։

Մի ժամանակ հնդիկներն սկսեցին նուազու-
իլ այն երկիրները, որտեղ նրանք որսորդու-
թիւն էին անում։ բաւականին փոքրանում
էր, այդ պատճառով սպիտակների դէմ ունե-
ցած ատելութիւնը սաստկացաւ և սերնդից
սերունդ անցաւ։

Այդ ատելութեան հետևանքն այն եղաւ,
որ կարմրակաշիները խաղաղ գաղթականների
հետ զուր տեղից թշնամացան։ Հնդիկների և
սպիտակների հողի մէջ սահման պէտք է որո-
շուէր՝ այն պայմանով, որ այդ որոշումը երկու

կողմից ևս հաստատուն լինի։ Այդ ժամանակ այդ սահմանը Միսսիսիլան էր. այդտեղից դեպի Արևելք գտնուած երկիրը պատկանում էր կարմրակաշիներին, իսկ դեպի Արևմուտք—սպիտակներին։ Կարմրակաշիներին արգելուած էր առանց հարեւան տէրութեան յատուկ թուլտուութեան անցնել այդ սահմանից. սպիտակներին—նոյնպէս։ Բայց այդ օրէնքն ալնքան տեսեց, ինչքան տեսում են առհասարակ աշխարհի բոլոր օրէնքները. նա ևս գործը դըրժեց, թէև մի քիչ ուշ։

Սպիտակ որսորդները և գագանորսները չեին մտածում թէ՝ իրանք ո՞ւմ երկրի վրայ են որս անում։ Ուր որ նրանց սիրոն ուզում էր, կամ որտեղ իմանում էին լաւ որս կայ, այնտեղ էլ գնում էին։ Նրանք ձեռք չէին տալիս այն մորթու կոյտերին, որոնք գտնվում էին հնդիկների հողի վրայ։

Այդ որսորդները շատ ժլատութեամբ են գործ դնում վառօտը և գնդակը, որովհետեւ դժուարութեամբ են ձեռք բերում։ Բայց հընդէկը։ Նրա մօտ բացի որսորդի երկալն դաշոյնից՝ գնդակը ևս միշտ պատրաստ է։ Երբ որ սպիտակ և կարմրակաշին որսորդները միմեանց պատահում են, այն ժամանակ միայն մէկն է

տեղից անցնում, ալսինքն նա, ով առաջին անգամ ճարպկութեամբ վերցնում է հրացանը և ուղիղ նշանում։ Այս կարգը նրանք շատ լաւ իմանում են. միշտ բաց երկնքի տակ լինելով՝ անտառների և անապատների սպիտակ բնակիչներն այնպէս վարժուել են յանկարծահաս և յաճախ դիպող վտանգին, որ շատ պակաս չեն կարմրակաշիներից, մանաւանդ որ նրանց հրացանն ամենից լաւն է։ Այդ պատճառով մի սպանուած սպիտակի փոխարէն տասսը հնդիկ է սպանվում։ Այն մի սպանուածին վրէժինդիր են լինում նրա ցեղակիցները, այնէ՝ հաւաքվում են բոլոր բարեկամները և միասին փչացնում սպիտակների դաստակերտները, կամ կարմրակաշիների գիւղերը։ Այսպիսով մշտնջենաւորվում են երկապակութիւններ, արիւնհեղութիւններ, յափշտակութիւններ և հրդեհաձգութիւններ և ոչ մի տէրութիւն չի կարողանում նրանց հաշտեցնել։

Այդ միջոցին, որի մասին մենք պատմում ենք, մի հնդկական զօրավար այնպէս հզօրացաւ, որ շատ ցեղերի գլուխն անցաւ, այնէ՝ Օսագների, Կոմանչների, Միուզների, Աղուների, Շնիկների և շատ ուրիշների։ Նրան անուանում էին «Աւ-Բազէ»։ Նրան հպատակ

էին շատ փոքրիկ գօրապետներ, որոնցից մի քանիսը օրինաւոր դաշինքով, առանց Սև-Բազէի համաձայնութեան, թողեցին Միացեալ նահանգների այն երկիրները, որոնք ընկած են Իլլինօյ և Ուփսկօնսին գետերի մէջ տեղը։ Ամերիկացիք տիրեցին այս թափուր երկիրներին աւելի առաջ քան հնդիկների մաքրելը և սկսեցին առանց երկիւղի հաստատել այնտեղ իրանց բնակութիւնը, չսպասելով այն պայմանին, որ պիտի հաստատուէր Սև-Բազէից։ Վերջինս նախ բողոքեց պետութեան առաջ, և ասլա տեսնելով որ ոչինչ չի օգնում՝ հաւաքեց իւր ցեղակիցներին և պատերազմ յայտնեց սպիտակների դէմ։ Նա ուղարկեց նրանց հետեւալ պատերազմական յայտարարութիւնը, իհարկէ ոչ դրաւոր կերպով, այլ բերանացի իւր սուրհանգակներից մէկի միջոցով։ —

«Սւազակները, և ոչ զինուորները, ծախեցին մեր Իլլինօյսում և Միսսիսիպայում գըտնուած երկիրները Վաշինգթօնի սպիտակների հօր վրայ։ Մենք ոչինչ չասացինք և համբերեցինք։ Վաղ ուրեմն գաղանորաները Միսսիսիպայից անցան մեզ մօտ։ նրանք այնպէս սպանում էին մեր մարդկանց, կանանց և որդկանց, ինչպէս դաշտի դալերին։ Այժմ մեր

բնակարաններն ալրուած են. մեր կենդանիները մասամբ սպանուած և մասամբ ցիր և ցանեղած, իսկ մեր փոքրիկ երեխաններն այդ եղեռնագործների որսը դարձան։ Իմացած եղէք, որ Սև-Բազէն պէտք է անցնի մեծ գետից և ձեզ հետ վարուի այնպէս, ինչպէս դուք վարուեցիք նրա եղբարների հետ։

Բազէն զայրացաւ և խօսքի վրայ պինդ կանգնեց։ Նրա զինուորները գիշերն անցան Միսսիսիպայից այնպիսի թեթև մակովներով, ուրոնց կարելի էր ուսի վրայ ևս տանել։ Նրանք ընկան սպիտակների բնակարանները, ալրեցին դաստակերտները, կոտորեցին բնակիչներին, հալածական արին կենդանիներին և անհետացան այնպիսի արագութեամբ, ինչպէս երևացել էին։

Հարկն ստիպեց բնակիչներին թողնել այդ երկիրը և այդ մասին կանխաւ նահանգապետի օգնութեանը դիմել։ Նահանգապայետն իսկոյն զօրք ուղարկեց կարմրակաշիների դէմ՝ մի զօրավարի առաջնորդութեամբ, և հրովարտակ արձակեց նահանգի բոլոր երիտասարդներին առնել և հեծելազօր գունդ կազմել։ Թէպէտ Աբրահամ Լինկոլնի համար նիւ-

Սալէմն աւելի երջանիկ էր, սակայն այդ հրաւէրն առաջին անգամ ընդունողներից մէկն ինքը եղաւ։ Նա հեծելազօր գնդի մէջ հարիւրապետութեան հրովարտակ ստացաւ։ Առաջին տեսութեան մէջ նա զարմացու և ուրախացաւ, իրան յանձնուած խմբի մէջ տեսնելով իւր հին երկու բարեկամներին՝ Զօն-Արմստրօն-դին և Եղիազար Զօնսին։

Զինավարժութեան համար մտածելու կարիք չկար, որովհետեւ թշնամին ևս զինակրթութեամբ չէր պարապվում։ Լինկոլնը ընկերական սիրով վառուած՝ չէր գանդաղիլ թշնամու դէմ կանգնելու, եթէ ստացած հրովարտակի զօրութեամբ հարկադրուած չլինէր հնազանդուելու բանակի զօրավարին։ Վերջինիս ընտրութիւնն անաջող էր. որովհետեւ նա չէր կարող հաշտուիլ իւր խորամանկ հակառակորդի՝ Սւե-Բազէի հետ։ Նա ամեն տեղ երկար մնում էր, ամենուրեք գտնում էր թափուր տեղեր, բայց թշնամիների հետքը — և ոչ մի տեղ։ Նրա միլիցիան միայն հարկադրուեց շարունակել իւր ճանապարհը, դիմանալ սովին և լսել անվերջ բողոքներ, բայց այս անաջողութիւնը մինչեւ պատերազմ չտեսեց։ Կանոնաւոր հետևակ գունդն այս բանին մեծ մարդա-

սիրութեամբ վերաբերուեց. սակայն զինուորներն անհանգիստ էին լինում։ Վերջապէս յուս կար թշնամիներին պատերազմի հարկադրել։ Նրանք գտնվում էին Միսսիսիպայի փոքրիկ Վանդգրովիկ կղզու վրայ։ Հարկաւոր էր նրանց ճանապարհը կտրել։

Միլիցիանները ցանկացան այդ անելու, բայց զօրապետը չբարեհաճեց ընդունել այդ արձակուած կար ամ ի տ ն ե ր ի (չարախորհուրդ մարդիկ) ծառայութիւնը. նա ուղարկեց իւր հետևակներին, իսկ սրանք աւելի ևս ուշացըին գործը։ Երբ վերջապէս հրաման տրուեցաւ տեղից շարժուելու — փողով անգամ կարելի չեղաւ մի հնդիկ գոտնել։ Այդտեղ միլիցիաններն արգէն կորցրին իրանց յարգանքը զօրապետի մօտ։ Զօն Արմստրօնգն իհարկէ անբաւականների պարագլուխ յախոնուեց։ Հարկաւոր էր մի հնար գտնել, եթէ ոչ՝ ապագան վատ էր գուշակվում։

Լինկոլնը շտապեց զօրապետի մօտ և յայտնեց նրան գործի դրութիւնը։

Զօրապետն սկսեց հայհոյել. —

— Թո՛ղ կորչին նրանք, պատերազմական կրթութեան նշով անգամ չունին։
· Դժբաղդաբար չէր կարելի ո՛չ այսպէս և ո՛չ

այնպէս հալածել միլիցիաներին։ Աինկօլնը զօրապետին առաջարկեց բոլոր անբաւականութիւն յայտնողներից միարադ-ընթաց խումբ կազմել և փորձի զրկել։ Այդ առաջարկութեան հաւանեց բարձրաստիճան մեծաւորը, որովհետեւ այդպիսի մի առաջար-կութիւն ազատում էր նրան իւր հանգստու-թիւնը վրդովողներից։ Զօնը նշանակուեց այդ խմբի գլխաւոր և ուրախութեամբ բաժանու-եց գլխաւոր խմբից։ Աինկօլնը շատ ուրախ էր զօրապետից ազատուելու, որովհետեւ նրա ան-կշռադատ բնաւորութիւնից ոչինչ լաւ չէր սպասում։

Գլխաւոր խմբի մէջ, այնուամենալինիւ, գոր-ծերը շարունակվում էին առաջուալ պէս։ Աբ-րահամի ընկերութիւնն սկսեց հալուիլ ձեան նման և ինքը վերջապէս վճռեց հեռանալ ծա-ռայութիւնից, որպէս զի գունդը և հարլւրա-պետութիւնը միատեղ մի մարդու չյանձնուի։ Եթէ վերջապէս Սև-Բաղէի հետ խաղաղու-թեան դաշինք կապուեց, այդ գէպքում սպի-տակներն աւելի պարտական էին արագընթաց խմբին և ձմեռուայ մօտենալուն։ Այս դաշ-նագընթեամբ վճռուեց, որ մէջ տեղի սահ-մանը Միստիստան լինի և որ խոռվութիւն-

ներն այլ ևս չկրկնուին։

Արժանափառ ընկերութեան վերանալուց յե-տու Աինկօլնը էլի կարող էր ինքն իրան կա-ռավարութիւն։ Միան հարց էր, թէ արդեօք կը վերադառնամ նա Նիւ-Ա.ալէմ նորից խանութ-պանութիւնն անելու։ Զարմանալի բան, այս թեթև յեղափոխութիւնը միանգամայն խլեց նրանից խանութպանութեան սէրը և մտցրեց նրա մէջ փառասիրութիւնն։ Նա հաստատ հա-մոզմունքի տէր լինելով՝ այնպէս էր վճռած, որ ինքը գրչով կամ լեզուով աւելի առաջ կը գնալ, քան թէ ձեռքի ոյժով, մանաւանդ երբ տեսնում էր, որ իւր նախկին ընկերներից շա-տերը փառաքան են գարձել։

Նա երկար մտքի տակ տուաւ—և վճռեց բո-լորվին հեռու մնալ իւր հօր դաստակերտը վերադառնալու և նրա վերակացութիւնն ըն-դունելու մտքից, այլ թէ իւր համար ճանա-պարհ բանալ ոչ—Փիզիքական՝ մտաւոր աշ-խատութեամբ։ Նրա մտքին մօտ էր ձգտել գէպի բարձր կրթութիւն, գէպի գիտութեան շահերը։ Մի խօսքով, նա այժմ իւր գիտու-թեամբ հասաւ իւր պարզ նպատակին, որին մին-չեւ այդ ժամանակ ակամայ էր հետեւում։

Եթէ Աբրահամն այժմ ևս սկսէր պատուել

իւր ահագին ձեռներին այնպէս, ինչպէս առաջ էր, նա առաւել ևս կարևորութիւն կարող էր զգալ նրանց մէջ, մինչև անդամ և իւր երկայն ոտների մէջ, որովհետեւ Ամերիկայում միանգամից փաստաբան դառնալ անկարելի էր: Ենթադրենք թէ այնտեղ հարկաւոր է փաստաբանութեան համար աւարտել ճեմարանի կամ համալսարանի դասընթացը, բայց անպատճառ պէտք է ցոյց տալ թէ՝ գիտես և հասկանում ես արդեօք երկրի օրէնքն այնպէս, ինչպէս հարկաւոր է: Դրա համար պահանջվում է հիմնաւոր կերպով սովորել օրէնքները: Իսկ սովորելու համար հարկաւոր է և՛ փող և՛ ժամանակ—օդով ապրել չէ կարելի: Հարուստի համար այդ հեշտ է, միայն թէ պէտք է նստել և սովորել: Իսկ Լինկոլնին մնում էր մի բան, այնէ՛ կրկին գործ դտնել և գործից յետոյ՝ ազատ ժամերում սովորել:

Այդ ժամանակ Ամերիկա էին գաղթում իսումբ խումբ եւրոպացիներ, որոնց մեծամասնութիւնը գերմանացիներ էին: Նրանցից շատերը կամենալով պարապուիլ հողագործութեամբ՝ Զիկագօյում՝ Խլինօյսի նահանգում մի ընկերութիւն կազմեցին, տէրութիւնից անմշակ երկիրներ գնեցին, նրանց վրայ քաղաքների և

գիւղերի տեղեր գծեցին և գաղթականների վրայ վաճառեցին: Այդ ընկերութիւնն ալդպիսով մեծ վաստակ ունեցաւ. Նրա ծառայողներըն անգամ մեծ թոշակ էին ստանում: Լինկոլնը այդտեղ երկրաչափի պաշտօն ստացաւ: Թէպէտ նա չէր պարապուել զղթայով և աստղադիտակով, բայց իմանում էր, որ դրա մէջ մեծ գիտութիւն չէր պէտք և փորձով աւելի կարող էր ընդելանալ գործին: Նա չէր սըսալվում և հաշուի մէջ:

Երբ նա չափում էր մարդագետինները — prairie—, ամեն բան այնպէս կարգին էր անցնում, որ նրանից լաւը չէր կարող լինել: Երեկոյեանները գործից դառնալուց նա կրակ էր վառում և պառկում մօտը, յետոյ պայտակից հանում էր գիրքը և կարդում: Բայց երբ գործը դէպի անտառի խորքն ընկաւ, այն ժամանակ ամեն բան էլ դժուարացաւ: Նախ նա պէտք է կացնով իրան համար ճանապարհ բանար և ապա սկսէր գործը: Յերեկը նա թէելոգնում էր և երեկոյեան մոռանում իւր գրքերը, սակայն մի վայրկեան անգամ չէր հեռացնում իրանից իւր գիտաւորութիւնը:

Երբեմն խեղճ երկրաչափի համար շատ վատ էր անցնում, բայց ինչքան էլ վատ անցնէր,

ինչքան էլ նա նեղացած կամ յոդնած լինէր, այնուամենայնիւ գէթ միանգամալն չէր տըրտնջալ իւր բաղդից: Այդպիսի միջոցներում նա իրան համար մի փոքրիկ խրճիթ էր շինում և նրա մէջը մտնում: բայց որովհետեւ խրճիթ տանիքը բարակ ճիւղերով և տերեւներով էր ծածկում, ուստի անձրև եկած ժամանակ կաթում էր: Բացի գրանից նա հանգցնում էր կրակը, չնայելով որ նրա ծխից մարդ կարող է խեղդուիլ: Անձրևալին ժամանակ նա չէր կարողանում առաւօտները կրակ վառել և իրան համար սուրճ պատրաստել: Սովորաբար նա սուրճը պատրաստում էր հետեւեալ կերպով: մի ամուր փայտի կտորով նա ծեծում էր սուրճի հատիկները թանագեայ փոքրիկ կաթսայի մէջ, յետոյ վրան ջուր էր ածում, կախում կրակի վերևից և ջուտով սուրճը եռ էր գալիս: Իսկ անձրևալին ժամանակները նա պէտք է բաւականանար միայն սուրճի հատիկները ծամելով և վրան սառը ջուր խմելով: Այդպիսով Աբրահամը չէր վհատում, այլ ինքն իրան յոյս էր տալիս, որ շուտով դուրս կը գալ արեգակը և ամեն բան կրկին կարգի կ'ընկնի: Մի, անգամ ջուրը նրա հետ մի թեթև կատակ արաւ. մի պարզ երեկոյ աստղերը փայլում էին

երկնքի վրայ: Աբրահամն աչքերը յաճախ թըրոցնելով իւր իրաւաբանական գրքից՝ բարձրացնում էր գէպի վեր և ակամայ մտածում այն աշխարհի վրայ, որտեղ չար և վատ մարդկանց համար աւելի օրէնք չէր հարկաւոր: Նրա ոտների տակից կարկաչում էր առռն, որ լեռներից վազելով իւր մէջ ցոլացնում էր երկնքի անհամար աստղերը: Գեղեցկագիր վայրի և խաղաղ ու մեղմ գիշերուայ ազդեցութեան տակ նա շաւտով խոր քնի: մէջ մտաւ: Ցնորքներն ախորժելի երազների փոխուեցան: Յանկարծ մի գարհուրելի երևոյթ գարթեցրեց նրան քաղցր քնից և նա իրան կատաղի հեղեղի առաջ գտաւ: Զուրը նրա ոտի տակից փրփրած վշշում էր. հեռուից նրան հասնում էր մի ինչ որ չարագուշակ թնդիւն: Նա աչքերը տրորեց որ տեսնէ թէ ինչ է պատահել. յանկարծ ջուրը հասաւ նրա ոտներին: Նա աշխատեց փախչելու, բայց արդէն ուշ էր: Նա չկարողացաւ անգամ իւր շուրջը նայել. երբ արդէն ջուրը մինչև ծնկները և կուրծքը հասաւ, նա ամեն բան մոռացած՝ մտածում էր մի կերպ ազատուելու վերահաս վտանգից— ջրի ալիքնքներից: Չնայելով որ շղթան, աստղադիտակը և միւս երերն ուրախ ուրախ լո-

դում են ջրի մէջ՝ նա ձեռները դէպի վեր
բարձրացրեց և բարեբաղդաբար մի կախ ըն-
կած ծառի ճիւղ գտաւ, բռնեց նրանից և հան-
դարտութեամբ դէպի վեր սողաց: Այդպիսով
ազատուեց նրա կեանքը, բայց բոլոր հարստու-
թիւնն անդարձ կորաւ, բայց իրաւաբանական
գրքից, որ գտնվում էր նրա գրպանում: Այ-
նուամենայնիւ ջուրն այնպէս շուտ քաշուեց,
ինչպէս հասել էր և մի ժամից յետոյ առու-
ակն առաջուայ ալէս սկսեց կարկաչել խաղաղ
կերպով: Այս ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ՝ հե-
ռու մի տեղ ճեղքուել էր մի ջրի ամբարտակ
և յորդացրել ջուրը, բայց իսկոյն փակել էին:

այս ոյթ նազգայ ցիանման ոյլ ողջ միջ արքա
այսպիսայ մերքայի և միջ արքայի ոն այս ծայր
արքայի սկզբ առ այս ծայր ենից պատաս ոն
ու յայ այս ուղած և ծայր ամբ այս ուղած:

X ձեն մէքը ամ գորդ

ԼԻՆԿՈՂՆ — ՓՍ.ՍՏՍ.ԲԱՆ.

Ամերիկայում այսօր անգամ հասարակական
կարգերն ամենուրեք կանոնաւորուած չեն, իսկ
այն ժամանակ աւելի ևս քիչ: Այդ պատճա-
ռով փաստաբանները բաւականին գործ ունեին
և մեծ փող էին վաստակում: Բացի դրանից,
եթէ փաստաբանն ազնիւ և չկաշառուած մարդ
լինէր, ինչպէս մեր հերոսը, այն ժամանակ նա
շատ և շատ երեւելի մարդ կը դառնար: Լին-
կոլնը, իբրև փորձուած փաստաբան՝ կարճ մի-
ջոցում մեծ հոչակ ստացաւ: — մի դէպք, որ
շատ լուրեր հաղորդեց լրագիրների մէջ, ընդ-
հանուրի ուշադրութիւնը դարձրեց նրա վրայ:
Պետերբուրգում մի գեղեցիկ առաւօտ մեծ
յուզմունք ընկաւ, թէ գիշերը մի հարուստ
երիտասարդ կռուի ժամանակ սպանուել է:

Այդի կին Արմստրոնգը՝ Լինկոլնի նախկին

տիրուհին երբ իւր սենեակը սարքում էր, յանկարծ նրա մի դրացուհին և վաղեմի բարեկամը սաստիկ շփոթուած նրա մօտ ներս վագեց:

—Ախ՛, Աստուած իմ, ճչաց նա. լսել էք դուք... նա արդէն մեռաւ:

—Ո՞վ:

—Ախ՛, այն երիտասարդը, Ուկիամը. նա միայն մի քանի ժամ կենդանի մնաց:

—Բայց ինչ պատահեց նրան, կաթուած էր, ինչ էր, ինչ ձախորդութիւն էր:

—Ուրեմն դուք դեռ չեք իմանում: Ինչպէս ուրախ եմ, որ առաջ ես եմ եկել ձեզ մօտ և դուք դեռ ոչ ոքից այդ չեք լսել: Այն ինչպիսի մայր պէտք է լինէր, որ իւր որդուհամար ալդպիսի բան լսէր:

—Բայց վայ նրա խեղճ մօրը: Իմ Զօնը միշտ ճշմարտախօս է և հաստատակամ. միայն նրանք չեն համաձայնուել նրա հետ...: Այս պայմանը — Այդ է որ ձախորդութիւն է էն նաոսոյ

— Բայց ասացէք վերջապէս, անրան ինչ պատահել:

— Ախ՛, խեղճ և անբաղդութիւն: Պառաւ հասակումդ տեսնել ալդպիսի դժբաղդութիւն:

Նա ընկաւիւր բարեկամուհու շլինքովը և սկսեց հեկեկալ:

—Ի սէր Աստուծոյ, ինչ է պատահել ձեզ.

ինձ համար էք ալդպիս անում: Ճայ շաբաթ

նայեց նրան դէմքին: Հայութ այսամնա մասնի

— Բայց ինչու համար էք ալդպիս անում. ձեր որդին է նրան սպանել. 22նչաց նա: Այս

— Ի՞նձորդին: Հայութ նա մասնելոց նշանաւ չկա

նա տատանուեց, մի վայրկեան իրան զսպեց

մահճակալի առաջ, յետոյ ընկաւ նրա վրայ:

Բարի դրացուհին մտադիր էր այս զարհութելի անցքը հաղորդել նրան մեղմ սկեպով,

որքան կարելի էր նրան ինայելով: «Եւ յանկարծ նա միանգամից դաշոյնը նրա սիրտը խըրեց»: Դրացուհին սարսափից իսկոյն անհետացաւ:

Նրան հարկաւոր չէր բոլոր իրողութիւնը մօրն ալդ եղանակով պատմել. միայն կարող էր ասել թէ՝ մարդիկ ալսպէս են խօսումք և թէ ինքը չէ հաւատում:

Այլին Արմստրօնդնու անզգալ ընկածնէր, միայն նրա սիրտը սաստիկ բարախում էր և նա ուշաթափութեան մէջ էր: Բարեկամուհին կարծում էր, թէ նա կը շարժուի ծատղից, բայց իզուր: ճամբար ըմայու ու սմյան աճան

նա բոնեց նրա ձեռքից և բացագանչեց.

— Ուշին եկի ճշմարիտ եմ ասում սուտ է

Բոլորը նաև այսպիսի դէպքում սառը ջուրն օգնութեան ամենալաւ միջոցն է, և թրջած շորը վերցրեց քսել նրա երեսն ու գլուխը: Վերջապէս ալրին ուշքի եկաւ, աչքերը բացաւ, մի քիչ անշարժ դրութեան մէջ մնաց ու վեր կացաւ տեղից:

—Անցաւ, ասաց նա. — դէ հիմա նստեցէք մօտս և պատմեցէք ամեն բան, ինչ որ անցել է որդուս գլխովը: Ալդ իհարկէ սուտ դուրս եկաւ և նա չէ արել. միայն ժողովուրդը սովոր է միշտ ամեն բան նրա վրայ ձգել:

—Եւ իհարկէ, նա չափազանց շատ թշնամիներ ունի, որովհետեւ այնքան տաքարիւն է, որ եթէ այժմ ևս կոիւ պատահի՝ իսկոյն կը վագէ: Բայց արդէն ես հաւատացրի, որ նա չէ եղել սպանողը:

—Պատմեցէք ինձ բոլորը և ոչինչ մի ծածկէք:

Գուցէ դուք կարծէք, թէ այս բոլորը ես կը լինիմ յօրինած: Բայց այնպէս ճշմարիտ է ասածս, ինչպէս ես ալստեղ կանգնած եմ...:

—Ա՚խ, խնդրում եմ....:

—Դէհ, ես բոլորը ձեզ կասեմ, ինչպէս լսել

եմ: —Երեկ երեկոյեան ձեր որդին, ասում են, քաղաքից մօտիկ գիւղի պանդոկումն է եղել Ուիլիամի և ուրիշների հետ: Ուիլիամը կը ըկին հարց է բարձրացրել հնդիկների հետ պատերազմելու մասին: Ալդ ժամանակ Զօնն է լինում խմբի գլխաւոր նշանակուած, ինչպէս գիտէք, և ոչ թէ Ուիլիամը, թէպէտ ևս սախելօք է: Ուիլիամն ալդ մասին նրան չի լսում և յանդգնութիւն է ցոյց տալիս. դրա համար ձեր որդին հրամայում է կախել նրան ծառից մի ամբողջ օր:

—Բայց նա երեէք չէր կարող նրան սիրել. ուրեմն դրանից է կրկին ծագել կուիւը:

—Պարզ ասել. կախվում են և ուրիշները և յետոյ ամենքն էլ ազատվում ումիասին դուրս դալիս: Ճանապարհին կոիւ է ծագում և այնտեղ իբր թէ ձեր որդին դաշոյնով սպանումէ Ուիլիամին: Ահաւասիկ ձեզ բոլորը — այժմ իմացէք:

—Բայց իրան է, իմ որդին է սպանել:

—Ամենքն ալդպէս են ասում, իսկապէս այն պատճառով, որ նա նրան թշնամի է եղել. մի և նոյն ժամանակ նա այնախիսի տաք ընութիւն ունի, որ այս ըստէին ևս ձեռներին ազատութիւն կը տալ....: Բայց ու՞ր է նա այժմ:

ԱՅ-Գնացել է! դաշտիք մուկացնոյ պահմած ու առ
յալու եւ ձեզ ոչինչ ասելու թիւնուն ը ի պարագան
- յա Ո՛չ ու եւ ի մի խօսքը ան Միհայն եւ ան նկա-
խաճաշիկից յառաջ նկատելու եմ, ասոր նահայն չե՞
ինչ որ առանձին ժամանակ լինում է: առ այս ուղարկու
ա Այժմ խնձու ժամանակ է առաջարկու: Մի ներ-
դանակ, այդ են ձեզ մօտեկի և նկատմեցի անդ-
քը, ես ճեզ ջառ մի բան չե՞ք առ Մնաք պատ-
րեաւ այս ամենու ըրաց և առ ի առ քանչ ա նու և
ա Թրացով կին դուրս գնացաթէ չե՞ցայլին ձրա-
գեց բոլոր տնալին գործեցը և վազեց դաշտը
որպես մօտու նրա ասիրակի արա ա կա-
մենում: Երանց մարդու թիւնն իմանալ: Զօնի դէմ-
քը դրա կացաւ, երբ մօրթ տեսաւ: Մայրը սեղ-
մեց նրանք երինւ ձեռք լրաւ ի առ ամեն բառ
- Զօն, ա ասաց նա, ես քեզ կամար ջատ ար-
տասուք թափեցի: այսմ ժշմարիտն նասա: դժւ
ես սպանել Ուիլիամին, ասա ինձ բոլորը
— Ո՛չ, ես չեմ սպանել, երդ վում եմ քուա-
րեսով: Անսաս չ է ձրա նու և առ առ առան
— Բայց դու եղել ես սպանութեան: Ժամա-
նակը չ է պահանջ առ առ առ առ առ առ
- առ եղել եմ ու մասնաւ ու մասնաւ և այս և այս
— Հանդում մվան տպանեց այս ու այս անք
— Այդ ես չգիտեմ: Եւ այս ու այս անք

— Ամբողջ քաղաքը քեզ է ոճրագործ և առ
նուանում է ու անուանում է ան...
— Ես չեմ ոճրագործ է մայր, կարող էք մինչ
համարակի արքու մօհ առ առ առ ու ու ու
ա Այդ գու կարող է առ առ առ առ առ առ
— Ո՛չ, չեմ կարող բայց անոր չեմ:
— Այս, ևս անբաղդամայր եմ թէ կայրդմինա
չեալժմ կենդանի լինէ բան: ու ու ու ու
— Մայրիկ սիրելի մալրիկ, միամի տուեղէք
և հաւատացէք, որ ես չեմ: սպանելու ու ու
ա Մայրն արտասուալից աչքերով տուն դար-
ձաւ: Զօնը չու կեց նրան մենակ բայց թողնել:
հաւաքեց գործիքները և նրան ետևից պնաց:
Նա գնում: Երա արագ քայլերով: Երեխաներն
անդամ նրան մատով էին ցոյց տալիս: իսկ հա-
ստիկաւորները ըստունց քնները բարձրացրած տալ-
սափով նրա ետևիցն էին ընկել նաև: տեսաւ,
թէ ինչ չէն ամբոխը շրջապատել է իւր տու-
նը, և երկու աստիկան նրա առաջը կանդնած
լայտնում են, որ իրանց հրամայած է նրան
կալանաւորել: Զօնը բարկութեամբ նայեց նը-
րանց, նրա ճակատի երակները ցցուել էին:
— Ընդդիմութիւնը ոչինչ չի օգնի նաև
խազգուշացրեց նրան ստուկաններից մէկը և
կանեց ատրճանակը. իսկ միւսի ձեռքում նոյն

բոպէին երևաց երկաթէ շղթան: ինչ կալանաւորել. ինչպէս կը համարձակիք... այդ երեք չի լինիլ:

— Ի սէր Աստուծոյ, Զօն. վազեց դէպի նըրան մայրը, — ալգալիսով աւելի դժբաղդութիւն կը պատճառես քեզ. դու, յալտնի բան է, մեղաւոր չես. ուրեմն միամիտ եղիր և, գնա՛:

— Այո՛, ես կը գնամ, բայց իմ կամքով. յայտնեց նա: — Ես թոյլ չեմ տալ ինձ կալանաւորելու, որովհետեւ յանցաւոր չեմ:

— Ատրճանակը և շղթան յետ քաշուեցան և Զօնը Հնագանդուեց օրէնքին. նրանք գնում էին ոստիկանատուն, իսկ ամբոխը գոռում և պահանջում էր դատել ոճրադորձին:

« Հասէք նրան, շրջապատեցէք նիզակներով*) լսում էին ամեն կողմից: Զօնի բոլոր թշնամիները յարձակուեցան նրա վրայ:

Հարկաւոր էր մի քանի ոստիկաններ ևս կանչել, որպէս զի կալանաւորին ողջ և ան-

*) Այդ ժողովրդական գատառանը կայանում էր նըրանում, որ մարդու ամբողջ մարմինը քսում էն ձեւթով, յետոյ փաթաթում են նրան աղուամազի վետուըների մէջ և այդ դրութեամբ երկու հողակի վրայ բարձած տանում են փողներով Ամեն մարդ իրաւունք ունի նրա վրայ մի մի հոտած բան ձգել: Երբեմն պատահում է, որ այդ գատարանի վճռու լինում է ինեղ մեղապարտներին կախաղանի բարձր բացնել:

վնաս բանտը հասցնեն. իսկ բանտի դրանն արդէն պահապաններ կալին: Այդ նրա համար էր, որ ամբոխն սպառնում էր դուռը կոտրել և յանցաւորին իւր ուզածի պէս դատել:

Անցքը շուտով յայտնուեց լրագիրներում: Զօնն ուղղակի ոճրադորձ էր ճանաչուած, որի շուտափով դատավճիռն ամբոխը խստիւ պահանջում էր:

Դատաստանական քննչի առաջին հարցը նըրան մի փոքր յաջողութիւն էր խոստանում:

— Դուք վաղժուց ծանօթ էիք սպանուածի հետ, հարցընց քննիչը:

— Վաղուց:

— Դուք միասին կռուել էք Սև-Բազէի դէմ:

— Այո՛:

— Ճշմարիտ է, որ դուք այն ժամ անակից դէպի նա թշնամաբար էիք վերաբերվում:

— Ճշմարիտ է:

— Այն օրը, երբ սպանութիւնը պատահէլ է, դուք պանդոկումն էք եղել:

— Եղել եմ:

— Այնտեղ դուք նրա հետ կրկնն վիճել էք:

— Այո՛:

— Դուք մի՛ ժիտէք, արդեօք կռուի ժամանակ չէք բռնել սպանուածի ձեռքից և պահել նը-

բանադր հրամա քայլ ամենու պատու ուսման
— Աշխաչեմ ժխտում զամանակաշատ անդամ
առաջնուաքումի ժխտէք և այն թէ երբ զնրան
բաց թողեցիք, նա գլորուեցած միջաւագուշ և
— Աշխաչը ամ աւագայ խուս ու պայտի

Այս Զերն էք մանսազում այն արիւնոտ դաշ
շոնը, որ գտնուել է այնտեղ ուր գնաք կանդ-
նած էք եղել:

Այս ճամբաջումն եմ որ իմն է աւագուշ
Բայց այն, որ ձեզ մօտ է գտնուել, ըստ
մանուածի դաշոյնն է այս գործի պատճեն:

Այս:

Այդ ինչպէս է ձեր ձեռքն ընկել:

Խլերն մանրա ձեռից արանք գործ:

Որովհետեւ ձեր դաշոյնն արիւնոտ է, ու-
րեմն բայտն վում է, որ դուք էք ոճրագործը:

Աշխաչեմ չեմ զի պատու ուշ և ուշ:

Զեր ժխտումը ձեզ չի օգնիր Այս գոր-
ծը, որի համար դուք ինքներդ չէք կարող
վիճել, շատ պարզ է խօսում ձեր դէմը: ար-
դեօք կարող էք համառօտ կերպով պատմել
գործի եղելութիւնը: այս ու այս ռուանդ:

Զեմ կարող:

Կարող էք մի ուրիշին մատնացոյ անել,
թէ նա է ոճրագործը:

Այս Այդ և կարողաւու զի ու է արանք:
Այս Ուրեմն ձեր գործը վասնեց այս արանք:

Եւ հարցը տպուած էր լրագիրներում Զօնի
պատօնին անները յանձնառութեան նշաններ
Եին նաև պատօնին հօրու քարտ և անդին:

Արքահամ կինկոլնը ևս լրագիրներից իմա-
ցաւ, թէ ինչ նեղ գրութեան ամէջ է ընկել
իւրի քարտեկամի ողդին: «Զօնը ոճրագործ չէ.
ասում էր նրանք ներքին ձախնը—հարկաւոր է
նրան պաշտպանել»:

Հասաւ Զօնի վախճանական դատավճռի օրը,
երդուեալներին մասնակցութեամբ: Որովհետեւ
հասարակական խորհուրդն արդէն վճռել: Էր
այդ դժբաղդի գործը, ուստի եւս այսուհետեւ
այնինկոյս չէր կարող լինել նրանց վճռի մէջ:
Ժամանակ կորցնել: անկարելի աէր: կինկոլնը
շտագեց դատարան և բայտնեց, որ ինքը յան-

ցամորի: պաշտպանն է ու ժամանակ վինդըց:
Գործը փոխադրուած էր այն ահանգը (District),
ուր կատարուել: Էր սպանութիւնը: Նա հիմ-
նեց իւր ալաշտպանութիւնը նրան վրայ: որ
երդուեալներն իւրաւունք չողունին դատի դիմա-
ւորի կէտին անաշտութեան համելու, ուրովի-
կետեւ նրանց մէջ կան և սոլանուածի և պան-
ցաւորի բարեկամներ: ալդ դէպօւմ նրանց:

դիտողութիւնը հասարակական խորհրդի մէջ չափազանց շեղած էր, որին համաձայնութիւն անհնարի էր:

Գործի լեռաձգութեան ժամանակամիջոցում կինկօլնը կարդաց գործի հարկաւոր արձանագրութիւնները: Նա պիտի պնդէր, որ Զօնը կարող էր ինքնապաշտպանութեան համար շատ բան անել, եթէ միայն նա ներկայ էր եղել անցքին: Զօնի հակիրճ պատասխաններն այն օգուտն էին խոստանում, որ նա գոնէ իւր խօսքը չէր փոփոխել:

Կինկօլնը գործի բոլոր հանգամանքին լաւ տեղեկանալով համոզուեց, որ Զօնն արգար կարող է համարուել, որովհետև գլխաւոր վկայից ուցմունքը մեծ հակասութուն ունէր: Հէնց որ նա արաւ ար գիւտը՝ էլ ուրախութիւնից ոչ ոքի բան չասաց:

Վերջապէս հասաւ դատաստանի օրը: Աինկօլնը անցաւ ամբոխի մէջ, որպէս զի մինչեւ նիստը բացուիլը ոչ ոք իրան չնկատէ:

Նախ վկաների ժւում ներկայացան կոռուին մասնակցողներից նրանք, որոնց դատաստանի կանչելը յաջողութել էր: Նրանց մէջ կային յանցաւորի և բարեկամներ և թշնամիներ: Նրանց ցուցմունքը վկայում էին անցքի մինչեւ անցամ:

Վերջին գործողութիւնը, կամ աւելի ուղիղն ասած անցքի կատարելը: Ամենքը ցոյց տուին, թէ կոռուին շատերն են մասնակցել, բայց թէ նրան քունել է Զօն: Արմստրօնդը, իբրև Ուկիլիամի գլխաւոր հակառակորդ: Թէ գէպքը զարհուրելի էր. թէ յանկարծ Զօնը բաց թողնեց Ուկիլիամին և նա գլորուեց՝ դաշոյնովից բաւորուելով ուսի ոսկրից, ինչպէս յետոյ երեւաց. Թէ վիրաւորուածը կորցնելով իւր ուշքը մինչեւ մի քանի ժամը մեռաւ, և թէ սպանութեան տեղը մի դաշոյն է գտնուել, որը յետոյ լայտնուել է որ Զօնինն է: Այս ամենից նրա թշնամիները եզրակացնում էին, որ նա է ոճրագործը. իսկ բարեկամները պնդում էին, որ այդուք չի տեսել և չի էլ կարող հաստատել: Ամեն բան բաւականին փոխուած էր:

Դատարանի առաջ կանչուեց գլխաւոր վկան և սկսեց հանդարտ կերպով պատմել բոլոր եղելութիւնը:

Պարոններ, ասաց նա, այն, ինչ ոք գործին մասնակցողները չէին կարող տեսնել, որովհետև նրանք շատ մօտիկ և խառնուած են եղել, ես տեսի կեռուից, լուսինն այնպէս պայծառ փայլում էր, որ ես կարող էի ամենքին ճանաչել: Ես տեսի, թէ

ինչպէս Զօնն աջ ձեռը բարձրացրեց և հարու-
ածեց այդ ժամանակ վիրտւորն ընկալու Յար-
դէն ճշմարտութիւնը վկայելու երդումն ըն-
դունեցի և այժմ պատրաստեմ ամեն մի խօս-
քը երդմամբ հաստատելու առաջը անունը
Դատարանի նախագահն աւելորդ համա-
րեց պաշտպանի համար խօսք լինելը որովհե-
տեւ նա բաւական պարզ տեղեկացաւ անցքին:
Նա միայն կարճ խօսքով դարձագիշտիքի պաշտ-
պանները և առաջարկեց նրանց կ պ տ ա ր ե լ
օ ր ի ն ա կ ա ն պ ա ր տ ք ը:

Սյուժ ժամանակ ամբոխի միջից վերա կացաւ
մի բարձրահասակ մարդ՝ ահարկութէմքով և
կնճռոտ ճակատով. սա Սբրահամ Լինկօլննէր:
Ամենքի հայեացքը նրա վրայ դարձան, և եղբ
նա մօտեցաւ վանդակին ու առ առ առանու
և ես յանցաւորի պաշտպանն եմ, ի վաստա-
բան Աբրահամ Լինկօլն Սպրինգֆիլդցի, յայտ-
նեց նա, — և խնդրում եմ մեծարգնէն հատա-
ւորներին և յարդելի Հանդիսականներին լսել
ինձ: Հանդիսականներին առ առ առանու
և լսուեցէք, ակամայից առաջարկեց նրան
նախագահը, որովհետեւ աւելորդէր համարում
զուր տեղից ժամանակ կորցնել: Լինկօլնը ըս-
կեց:

Պայտրններ, յանցաւորն անմեղ է ես այս
բանում կատարեալ համոզուած եմ քանի ու ու-
թատարանի դսհիճում խոնվում էր աղմուկ
կարարանցում: Եւ այս աղմուկը ու ամենը այ-
ս կամաց անունը կամացացած էմ, որ դուք ինձ հետ
անպատճառ կը համաձայնուիք, երբ ես իմ
ապացուցութիւնները կ'առաջարկեմ: Ի՞նչ այս?

Ենորհ արէք ինդրէց նախադահըւառած ամ:
Սյուն անձանց ցնուցմունքին, տրոնք մաս-
նակցութիւն ունին գործի մէջ, կարելի է շատ
քիչ հաստ ընծայել որովհետեւ նրանք ամեն-
քըն էլ անցքի պատահած ըսպէսմ սաստիկ կա-
րուած դրութեան մէջ են եղել շատ խմբչք
գործածելուց և անընդհատ վիճելուց: Մի-
ևնոյնաժամանակ ոչ ոք չէ ապացուցանամ
ինկապէս, ոչոյն իսկ մեղապարտուածի թշնա-
միներն անգամ թէ արգանքն նաև է սպանողը:
նրանք այդ յականում են միայն իբրև կարծիք:
Հաւատացէք պարունների նրանք կարողեն կար-
ծել ամեն բան, ինչ ով իրանց օգուտնէ: Կարծիքը
ոչինչ պարզել չի կարող: Հասարակ կարծիքը
անցքի ամեն մի մասնակցողին կարելի է յան-
ցաւորի նստարանի վրայ նստեցնել: Ու այս
Բայց արիւնոտ գաշոյնը վրայ բերեց նա-
խագահը:

— Շատ գեղեցիկ։ Արիւնուն դաշոյնը և այն հանգամանքը, թէ հանգուցեալը գլորուել է, երբ մեղապարտը նրան բաց է, թողել, ապացուցանում են իրը թէ նա է կատարել անցքը, Բայց, պարոններ, դուք իրականութիւնից ձգել էք մի աւելի պարզ հանգամանք, այսինքն որ հանգուցեալի դաշոյնը մեղապարտի ձեռքումն է գտնուել։ Այդ փաստը, միացնելով երկու ուրիշ զօրեղ փաստերի հետ՝ ապացուցանում է, որ Զօնը մեղաւոր չէ։

— Այդ բնչեղանակով է ապացուցանում. անկարելի քան է լսուեց հանդիսականների միջից։

— ծշմարիտ է այն, որ մեղապարտը հանգուցեալին բռնել է մինչև մահկուան հարուած հասնելը։ Այդ ժամանակ նա ո՞չ մի կերպ չէր կարող դաշոյնը բռնել, որովհետեւ նա նրան բռնած է եղել երկու ձեռքով։ Ուստի այս դաստիարակութեան մեջ ապացուցանում է անհանդաց ապացուցանում։

— Մի ուրիշը վերցրել է դէն ձգած դաշոյնը և նրան գործի մէջ մտցրել։ Հակառակորդին բռնելով և պահելով՝ մեղապարտը ո՞չ մի կերպ չէր կարող նրան հարուած տալ. նախ որ նրա ձեռքին դաշոյն չի եղել—սպանուածի դաշոյնը գործ չէ ունեցել. երկրորդ՝ որ

նրա աջ ձեռքն աղատ չի եղել, որով նա կարողանար բռնել հակառակորդի զինուած ձեռքը և նրան սպանել։

Դահլիճում այնպիսի աղմուկա, բարձրացաւ, որ նախագահն ստիպուած էր զանգահարելու։

— Երբ հանգուցեալը վէրք առանալով միւս ձեռքից՝ ալլ ևս չէ կարողացել դիմադրել, նրա դաշոյնը մնացել է մեղապարտուածի ձեռքում։

—Պարսն փաստաբան, չմոռանաք գլխաւոր վկայի ցուցմունքը, անաց նախագահը այս։

— Նրան իսկ չեմ մոռանալ, պարուններ, միամիտ եղէք։ Առաջ նրա անձնաւորութեան մասին մի քանի խօսք կասեմ։ Նրա ևս մեղապարտուածի մէջ սաստիկ թշնամութիւն կար աւելի քան վերջինս և սպանուածի մէջ։ Նա կամենում է նրան ճանապարհից հանել։ որ պէս զի իրան աղատ պահէ մի քանի թեկնածութիւններից, որոնց մասին ես ազնւութիւնից ստիպուած մանրամասն խօսել չեմ կարող—մի ընդհանուրի լարգանաց արժանի օրիորդի պատճառով։

— Ես ձեր դէմը կը բողոքեմ, միջամտեց գըլխաւոր վկան։

Սպասեցէք, մինչև որ ձեզ կը հարցնեն. ասաց նրան նախագահը։

— Իսկ ինչ վերաբերում է նրա ցուցմունքին, որ նա այսպէս միամտօրէն տալիս էր, այդ պարզ խարէութիւն է և թշնամական կըրքի ծնունդ, լայտնեց Լինկոլնը:

— Անխիղճ, ու՞ր է քո ապացուցութիւնը. կրկին գոչեց վկան:

— Լուցէք, եթէ չէ կը հրամայեմ ձեզ ալստեղից գուրս կանեն. բարձրածայն սաստեց նախագահը:

Աբրահամը շարունակեց.

— Պահանջում էք ապացուցութիւններ: Ապացուցութիւնները ևս կը լինին: Ես հարցնում եմ գլխաւոր վկային. . . պատրաստ է նա երդմամբ հաստատել, որ բոլորը տեսնել է լուսնի տակ:

— Այո, լուսինը պայծառ լուսաւորում էր:

— Սպանութիւնը ո՞ր ժամին է պատահել:

— Երեկոյեան տասը ժամին, պատասխանեց նախագահը:

— Խնդրում եմ ինձ մի օրացոյց տաք:

Օրացոյցը նոյն ըոպէին պատրաստ էր:

— Լուսինն այդ գիշեր ո՞ր ժամին է դուրս եկել. հարցընց Լինկոլնը:

Նախագահն սկսեց թերթել օրացոյցը:

— Տասն և մէկ ժամին, լայտնեց նա:

Դահլիճում տիրեց մեռելային լոռութիւն, որը վերջապէս ընդհատուեց Լինկոլնի բարձր ձայնով՝ կեղծեալ գլխաւոր վկայի դէմ:

— Հապա ինչու չէք երդվում: Այս ձեր առաջին անգամը չէ, որ անսատուած և սուտ երդումներ էք անում: Յոյս ունիմ, որ երբ դուք կախաղանի տակ կը կանգնէք: Աստուծոյ ողորմութիւնն աւելի պարզ կը լուսաւորէ, քան որ լուսինն այն գիշերը լուսաւորում էր....:

Ամենքնառաւանց ձայն-ծալտուն հանելու, լոռութիւնը պահելով՝ լսում և նայում էին այս մարդուն, որ բարձր հասակով՝ ահարկուդէմ՝ քով և վառվուուն աչքերով կանգնած էր նրանց առաջ՝ իբրև արդարադատութեան թագաւորող հոգի:

Գլխաւոր վկանցատկեց և վագեց հանդիսականների միջովի:

— Բոնեցէք նրան, Հասէք. լսվում էր ամեն կողմից:

Բայց նա արդէն լուսամտից դուրս էր թըռուել և փախել:

Երբ խաղաղութիւնը վերականգնեց, Լինկոլնը սկսեց շարունակել.

— Պարոններ. ինձ մնում է մի քան ևս առ

սել. քանի որ արեգակը դեռ չէ թագ կացել. հորիզոնի առակ, նա պիտի իւր լոյսն ազատուած մարդուն վրայ ձգէ:

Երդուեալներն առանձնացան դահլճին կը ցուած առանձնասեւեակը և մինչեւ մի քանի բոպէն դուրս գալով հետեւեալ վճիռը լայտ նեցին: « յանցաւոր չէ: »

Ազատուածն արագութեամբ վեր, թուաւ տեղից և գոչեց:

— Ու՞ր է իմ փրկիչը.....:

Նա այս չկարողացաւ մի բառ անգամ խօսել: ուրախութեան արտանուքն իրան խեղդել էր, երբ նա փաթաթուեց իւր քարերարի շը լինքովք: Աինկօլնը քաշեց նրան լուսամտի առաջ և ցոյց տուաւ այնտեղից մայր մանող արեգակը.....:

— Տես. արեգակը դեռ թագ չէ կացել — և դու ազատ ես:

Այն խուռն բազմութեան միջից, որ ուրախութեամբ մօտենում էր ազատչին և շնորհաւորում ողջոյններով, երկու անձնաւորութիւններ անցան: Զօն Արմստրօնգի մայրը և Աբրահամ Աինկօլնի հայրը: Աբրահամն անձամբ տուեց մօրը որդու ձեռքը: մայրն ու բախութիւնից խօսք չէր գտնում նրան շնոր-

հակալութիւն անելու:

— Ես շատ քիչ բան արի. ասաց պաշտպանը. եթէ նա յանցաւոր լինէր, ես երբէք չէի կարող նրա յանցանքը ծածկել: Բայց իմ արածը, համեմատելով այն բոլոր բարիքների հետ, որ ես վայելել եմ ձեր տանը, դեռ շատ քիչ է:

Հայրը կարօտագին սիրով սեղմեց պրտին իւր ամենքից գովուած որդուն և մի ամբողջ օր նրա հետ միասին Արմստրօնգի տանը մնաց: Այնտեղ կար և բարի գրացուհին, որ Հէնց սկզբից ասում էր, թէ Զօնը մեղաւոր չէ:

Ահա ինչպէս Աբրահամն՝ առաջին անգամ լաջողութեամբ պաշտպանեց մի ծանր գործ, որին լոյս չունէր ոչ ոք:

— Ես այս գործը անձնաւոր անձնաւոր է:

Հայութ մայելի այս աշխատանքուն
պահանջանք բառու պահ անց առաջ առ ան-
դառան մէջ գծող ու զանձի պահանջան առ անց-
ան աշխատանք պահ այս աշխատան առ անց
առ անց այս աշխատան պահ անց անց անց անց
XI

ՀԻՆԿՈԼՆ—ՍՏՐՈՒԿՎԵՐԻ ԱԶԱՏՈՂԸ.

այս զանձի մի մարդու ճանախը պահանջան
քանի մասն զանձի պահանջան անց անց անց

Դատարանի անսպասելի ելքը, որ իշտուեց
նախընթաց գլխում, սաստիկ յուզմունք պատ-
ճառեց: Կըագիրները լսելով այս կատարեալ
հակադրական ելքը՝ չէին կարող լուել իրանց
առաջին սխալի համար: Այդպէս ահա Լինկոլ-
նի անունը լսվում էր ժողովրդեան բարձր խա-
ւերում:

Լինկոլնը այժմ ինչ որ դարձաւ, դարձաւ
առանձնապէս իւր բոլոր ոյժերով, իւր իսելքով:
Նա իւր գիւրընտիր աշխատութեամբ բարձր
անուն ստացաւ հասարակութեան լուսաւոր
դասին մէջ և պատուաւոր տեղ բռնեց: Նրա
կարծիքով աշխատութիւնը, հեշտութեամբ
ձեռք բերած աշխատութիւնը բարձր էր աւե-
լի քան մի պատուաւոր ծագում, մի ահագին
ժառանգական կարողութիւն: Նա արհամար-

հում էր այն մարդուն, որ չէր ուզում գոր-
ծել—սարկատիրոջ, և սաստիկ խղճում էր նը-
րան, ով չէր կարողանում գործել իւր ուզա-
ծին պէս, իւր կարողութեան չափ, իւր օգտի
համար—ստրկին: Ստրկութեան անունը լսելիս
նա բորբոքվում էր գեռ այն ժամանակից, երբ
նա ենթագրութիւններ էր անում այդ մասին:
Այժմ նա իբրև կատարեալ մարդ և իսելօք
իրաւաբան՝ խօսում և գործում էր խելքով ու
հանձարով: Այն, ինչ որ խօսում էր հանձարը,
շատ մխիթարական էր. նա ասում էր. «Եթէ
բոլորովին մի նկատելի բան չլինի, անհնար
է օգնել ձախորդութեան, քանի որ ստրկու-
թիւնը թուլատրուած է օրէնքով»:
Մինչև անգամ բարձրագոյն կառավարու-
թիւնը, իւր այն ժամանակուալ տիրող կանոն-
ներով ոչինչ չկարողացաւ անել: Երբ Հիւս.
Ամերիկայի գաղթականներն Անգլիայից բա-
ժանուեցան և սկսեցին բոլոր նահանգներում
ստրուկներ պահել, այդ ժամանակ Օրինաց ժո-
ղովածուի մի հատուածն այսպէս ձայն տուաւ.
«Միացեալ նահանգների կառավարութիւնն
իրաւունք չունի հանել կամ մտցնել ստրկու-
թիւնը, բայց պարտաւոր է իւրաքանչիւր նա-
հանգին իրաւունք տալ, որ ինչպէս ուզէ,

այնպէս վարուի, որովհետև ստրկութիւնը ընտանեկան հարց է»:

Օրէնքը փոխել անկարելի էր, և այդ սպառագով ստրուկների ազատութեան համար մըտածող չկար:

Հիւսիսալին Միացեալ Ս.մերիկայի իւրաքանչիւր նահանգը մի առանձին հասարակապետութիւն է, այսինքն նրանց մէջ թագաւոր չկալ. միայն բնակիչներն իրանք իրանց միջից կառավարիչ են ընտրում: Իւրաքանչիւր նահանգ իւր առանձին կառավարութիւնն ունի: Բայց որովհետև բոլոր նահանգները միացել և դաշինք են կապել, դրա համար ընդհանուր միացեալ կառավարութիւն կալ, որի գլուխը նախագահն է: Այս բարձրագոյն կառավարութեան ստորագրուած են բոլոր Միացեալ նահանգների կառավարութիւնները: Բարձր կառավարութիւնը գտնվում է Մ. Ն. մալաքաղաք Վաշինգտօնում: Նահանգներն այդտեղ են զրկում իրանց ներկայացուցիչներին կամ պատգամաւորներին: Պատգամաւորների թիւը, որոնք ուղարկվում են իւրաքանչիւր նահանգից, կազմվում է նրա բնակիչների թուրի համեմատ: Մինչեւ վերջին պատերազմը իւրաքանչիւր սպիտակ համարվում էր մի մարդի փո-

խարէն, իւրաքանչիւր և և կամ կ արմ ը ական ի երեք հինգ մարդի փոխարէն, այսինքն հինգ ստրուկը երեք ձայն միայն ունէր: Եւդեռ այդ ձայները տալիս էին ոչ թէ իրանք ստրուկները. այլ նրանց տէրերը՝ նրանց տեղ: Դրա համար ստրուկների շատ լինելը ոչ միայն մեծ արդիւնք էր տալիս, այլ և քաղաքական մեծ ոյժ:

Մի ժամանակ հիւսիսալին նահանգները վերացրին իրանց միջից ստրկութիւնը, նախ՝ նրա համար, որ այդ օրէնքը նրանք համարում էին տարօրինակ և տմարդի մի բան, և երկրորդ՝ առանձնապէս վնասներ էին կրում նրանք ըստրուկների պահպանութեան մէջ: Իսկ հարաւային նահանգներն ընդհակառակը՝ շատ ըստրուկներ էին պահում, որովհետև նրանք միշտ հարկաւոր էին գալիս իրանց շաքարի, բրդի և ծխախոտի գործարաններում բանելու համար և աւելի ձեռնտու էին քան սպիտակ, ազատ բանւորները: Ինչպէս առհասարակ ասում են, հիւս, նահանգների բնակիչներն իրանց ճակատի քրտինքովն էին հաց ուտում. իսկ հարաւանանգների բնակիչները գիրանում էին ըստրուկների քրտինքով:

Վերը յադաց բերած հանգամանքին նայե-

լով՝ հարաւային նահանգների ներկայացուցիչ՝
ները միշտ շատ էին լինում կօնդը էսի մէջ
քան հիւսիսայինները։ Հետեաբար հարաւային
նահանգները միշտ կարող էին իրանց կամքն
առաջ տանել, երբ նոր նախագահ ընտրելու,
կամ նոր օրէնք սահմանելու կարերութիւն
լինէր, և հիւսիսային նահանգները, եթէ բա-
ցարձակ պատերազմ չցանկալին՝ չէին կարող ոչ
մի կերպ նրանց հակառակել։ Նախագահի ըն-
տրութեան ժամանակ մանաւանդ՝ ստրկութեան
թշնամիները դէս ու դէն էին ընկնում։

Ժամանակով բոլոր նահանգներն էլ լուսա-
ւորուեցան և Միացեալ նահանգների կարգը
մտին։ Այդ մասին ամեն անգամ հարց էր լի-
նում թէ՝ նոր նահանգը հարկաւո՞ր է որ ստր-
կութեան նահանգ լինի, թէ ո՞չ։ Հարաւային
պատգամաւորները նախագահի հետ ձայն էին
տալիս «ալ՛», իսկ հիւսիսայինները՝ «ո՛չ»։ և
հարաւայինները միշտ իրանց խօսքն էին պըն-
դում։ Եթէ հիւսիսայինները յամառվում էին և
ոչ մի կերպ չէին համաձայնվում, այն ժամա-
նակ հարաւայիններն ասում էին՝ «շատ լաւ,
եթէ այդպէս է, մենք կը բաժանուինք Միա-
ցեալ նահանգներից»։ Այս հակառակութիւնն
առանց պատերազմի չէր վերջանալ, եթէ հիւ-

սիս. նահանգները միշտ չզիջանէին։ Մի ան-
գամ պատահել է մինչև անգամ, որ նոր նա-
հանգն ինքը չի կամեցել ստրկութիւնը իւր
մէջ մտցնել։ Այդ ժամանակ հարեան նահան-
գի ստրկատէրերը զինուորուած թափուել են
այդտեղ և ստիպել են իրանց այդ «ընտանե-
կան կարգը» բռնութեամբ մտցնել այդտեղ։
Նրանք միանդամայն հալածել են այն ագարակա-
տէրերին, որոնք բաց է ի բաց մերժելիս են
եղել ստրկութիւնը, և մինչ անգամ սպանե-
լիս ընդդիմացողներին, իսկ նրանց կանանց
և որդիանց հետ վարուելիս անամօթ և ան-
մարդավայել կերպով։ Այստեղ՝ ստրկութեան
թշնամիններին՝ աբօլիցիօնիստներին^{*)} նոյնպէս անտանելի է լինում այս, ուստի և նրանք
նոր նահանգին օգնութեան գալով՝ հալածում
են այնտեղից ստրկութեան չարագործներին։

Այսպէս ահա ստրկութեան հարցի վճիռն
առաջին կարգի մէջ մտաւ։ Վերջապէս բոլոր
Մ. նահանգների մէջ միայն երկու կուսակցու-
թիւն մնացին՝ կողմնակիներ և ստրկութեան
հակառակորդներ։ Աբրահամ Լինկոլնը, իհար-
է, պատկանում էր վերջին կուսակցութեան։

Մինչև նրա փաստաբանութեան մէջ ընդե-
*) Նեղբներել վաճառքի հակառակութեան

շանալը՝ նա Ֆլինոյսի Օրէնսդրական ժողովի
անդամ ընտրուեց։ Իւրաքանչիւր անդամ, երբ
դէպք էր լինում պատգամաւորներ ուղարկել
Վաշինգթոն նոր Նախագահի ընտրութեանը
մասնակցելու, որ սովորաբար լինում էր չորս
տարին մի անդամ, կամ թէ վեհաժողով ու-
ղարկել պատգամաւորներ, — նա շրջում էր ա-
մեն տեղ և ժողովրդին քարոզում ու համո-
զում ընտրել այնպիսի մարդիկ, որոնք կարող
լինէին գործելու ոչ թէ ստրկութիւնը աճե-
լուն ի նպաստ, այլ նրա հակառակ։ Նրա այս
քարոզները միշտ ազգեցութիւն էին ունենում
ժողովրդի վրայ, որովհետեւ նա առանց բառե-
րի պերճ դասաւորութեան և ամենքին հասկա-
նալի լեզուով ապացուցանում էր, որ ստրկու-
թիւնն ընդդէմ Աստուծոյ և վնասակար հա-
նուր մարդկացին ազգի մի գործ է։ Աւելի պար-
զելու համար նա անում էր. «Երբ որ մարդ
իւր մերձաւորի հետ վարփում է ինչպէս անա-
սունի հետ, երկու կողմն էլ տմարդանում են, և
տմարդութիւնն առիթ է լինում ստիպելու ժո-
ղովրդին թափել իւր վրայ բոլոր լուսաւոր ազգե-
րի արհամարհանքը։ Այն երկրում, ուր ստրկու-
թիւնը գոյութիւն ունի, երբէք հաշտութիւն
չի կարող լինել, որովհետեւ ճնշուողը միշտ

մարդէպք է որոնում վրէժինդիր ալինելու
ճնշողին և, եթէ գալիս է ցանկացած դէպքը,
ամեհի գազանից էլ խիստ է վարփում։ Նրա
հետ նակ այն երկրում, ուր հաշտութիւն,
համերաշխութիւն չկայ, չկայ և բարօրութիւն։
Վերջապէս նեգրները կարող են ամենադժու-
ար անդամ գործեր կատարել։ իսկ ուրիշ բան
անել, օրինակ ուսումնարանն բանալ, նրանք
իրաւունք չունին. և եթէ ազգատ ժամանակ
ունենալին անտարակոյս կարող էին ազգատ
բանւորների նման մեր ամեն միշտ գործին էլ
օգնութիւն հանցնել։
Լինկոլնը երբէք չէր քարոզում ստրկու-
թիւնը ստրկապահների նահանգներից ստիպ-
մամբ հանել, որովհետեւ նա բոլոր օրէնքները
սուբը էր համարում. միայն պարզապէս խո-
չընդուտ էր լինում, արգելում էր այդ օրէնքը
նոր նահանգների մէջ մտցնելու։
Նա իհարկէ իւր կուսակցութեան միակ գոր-
ծողը և հրապարակախօսը չէր։ Շատերը յա-
ճախ այս միտքն էին տածում. թէ. «նա ու-
զում է պատգամաւոր ընտրուիլ, և դրա հա-
մարէ, որ այդպէս վառուած խօսում է, ուրիշ
ոչինչ»։ Եւ յայտնի բան է, այդպիսի մարդիկ
ժողովրդի աչքում միշտ հաւատարիմ էին երե-

ւում: Իսկ Լինկոլնը փառասիրութեան յետադէմ կարծիքի մարդ չէր. Երբ նրան առաջին անգամ վեհաժողովի պատգամաւոր ընտրեցին, նա հրաժարուեց այդ պատուից, յայտնելով որ իրանից յարմարագոյնները շատ կան այդ պաշտօնի համար:

Նրա խրատներն ու քարոզները անօգուտ չէին անցնում. ստրկութեան դէմ գործողների թիւը տարեցտարի աւելանում էր: Հարաւայիններն իմանում էին, որ այդ ում բարութիւնն է և դրանով ում են պարտական հիւսիսայիները. նրանք այժմ ճանաչում էին ճշմարիտ մարդուն: Լինկոլնը վերջապէս հարկադրուած էր զիջանել իւր մտերիմների թախանձանաց և Վաշինգտոն պատգամաւոր գնալ:

Ով նրան տեսնէր վեհաժողովում լուռ նըստած և միւսներին լսելիս՝ չէր հաւատալ թէ նա երեելի մարդ է, որովհետև միշտ թմրածի նման էր ձեւացնում իրան: Նա մի ոտը միւսովը գցած, գլուխը կոր, նստում էր և միայն երեմն կրծում իւր եղունգները: Բայց երբ ընդդէմ օրէնքի և արդարագատութեան միխօսք էր լինում, նա բարձրանում էր տեղից և ուղիղ կանգնելով՝ պատասխանում էր խօսողին կարճ, բայց ազդու և կատարեալ խօսքերով:

Դրա համար իւրաքանչիւր ատենաբան, մանաւանդ եթէ բոլորովին համոզուած չէր լինում խօսքի մէջ, առանց ուշադրութեան չէր թողնում այդ անխօս անձնաւորութեան, որ միայն իւր եղունգներով էր զբաղուած:

Պատգամաւոր ընտրուելով՝ Լինկոլնը պարտական էր ոչ միայն իւր Ամերիկացի բարեկամներին, այլ և առաւելապէս այն գերմանացիներին, որոնք բնակվում էին հիւսիսային նահանգներում: Իւրաքանչիւր տարի աւելանում էր Գերմանիայի գաղթականների թիւը և պանդուխտ գերմանացիները բնակվում էին հիւսիսային Ամերիկայի արևմտեան և հիւսիսարևմտեան կողմերում: Լինկոլնը օգտվում էր նրանց կատարեալ զգացմունքներով, իբրև պատուաւոր, գիմացկուն, գործող՝ թէպէտ և դանդաղ, բայց ճշմարիտ մարդ՝ առանց շտապելու, առանց դէս ու դէն ընկնելու և առանց մի սխալ քայլ անելու: Ստրկութեան վերաբերեալ տաք վիճաբանութեան ժամանակ նրանք վճռական կերպով նրա կողմն էին անցնում: Այդ բոլորովին բնական էր, որովհետև նրանցից շատերը յատկապէս նրա համար էին գաղթում հայրենի երկրից, որ այնտեղ նրանց հետ ստրկաբար էին վարվում: Լինկոլնը առանձ-

նասլէս իրանց յարգում էր նրանց աղատասիրութեան համար:

Գերմանացիներից շատերն ունեին բամբակի և ծխախոտի ցանքեր. նրանք հէնց իրանք առանց ստրուկների աշխատութեան էին մշակում իրանց ցանքերը և աւելի օգուտ ունենում, քան ստրկապահները: Լինկոլնը այս գըլխաւոր փաստով օգտուելու չէր դանդաղում. իւրաքանչիւր անգամ, հէնց որ Հարաւի պատգամաւորները պնդում էին, թէ ստրուկներ պահելը, իբրև մի նախասահմանուած օրէնք, անհրաժեշտ է ստրկապահներին աղատ և հանգիստ կեանք վայելելու համար մասնաւորապէս, նա միշտ մատնացուց էր անում հիւսիսալին ցանքսատէրերին և աղացուցանում էր, թէ նրանք ինչպէս վայելուչ կերպով կառավարվում են առանց ստրուկների և թէ ինչքան շատ օգուտ են ստանում, քան ստրկապահները: Նրանք հարկադրուած չեն լինում կերակրելու ստրուկների հիւսնդներին, երեխաներին և գործի անընդունակ ծերերին, այլ վճարում են միայն այն բանորին, որը իւր աղատ կամքով գործում է նրանց համար:

Չոյլ և քնափ իսպանական և ֆրանսիական գաղթականների սերունդները չկարողացան և

չկամեցան Լինկոլնի հետ հաշտուել և նրա անհաշտ թշնամիները դարձան. միայն իբրև ողատ նահանգներ հաստատվումէին նրա անմիջական իշխանութիւնից, առանց որևէ պայմանի:

1860 թ. լրացաւ նախագահի չորսամեայ ժամանակը: Ալդ նախագահը հարաւացի լինելով՝ ինքը ևս ստրուկներ էր պահում և հետևաբար պաշտպանում էր ստրկատէրերին: Նա միայն այնպիսի մարդկանց էր նախարար նշանակում, որոնք իւր կամքով էին գործում: Բայց հարց էր, թէնա երկրորդ անգամ նախագահ կընտրութիւն արգեօք... այդ հարցը տակն ու վրայ էր անում ամբողջ Մ. Նահանգներին: Հարաւալիններն առաջարկեցին իրանց ընտրելին, իսկ հիւսիսալիններն իրանցը: Վերջինս Սբրահամ Լինկոլնն էր — և սա ընտրուեցաւ նախագահ: Հիւսիսն ուրախ էր, իսկ Հարաւը չարամտութեամբ աղմկվում էր: Նախկին նախագահը դեռ կէս տարի ժամանակ ունէր գործելու և հարաւալիններն այդ միջոցում կատարեցին իրանց սպառնալիքը. նրանք յայտնեցին Մ. Նահանգներից բաժանուելու միտքը, իսկ նոր նախագահը ոչ մի խօսք չասաց նրանց դէմ: Վեց հարաւալին նահանգներ՝ Կարոլինան Ալբաման, Ֆլորիդան, Միսիսի-

սպան, Լուիզիանան և Տեխասը բաժանուեցան Մ. Նահանգներից և այդ պետական լեզափոխութեան դէմ նախագահը ոչ մի միջոց չձեռնարկեց և յայտնի էր թէ ինչո՞ւ. իսկ Լինկոլնը դեռ ևս իրաւունք չունէր գործելու: Այս ապստամբութիւնն անխուսափելի պատերազմի դուռ բացաւ:

Եւ այժմ նեղըների ազատութիւնը կարելի դարձաւ, որովհետեւ եթէ մէկը տէրութեան հակառակ կանգնէր և յայտնէր թէ ստրկապահութիւնն ընտանեկան օրէնք է և չի պատկանում բարձր կառավարութեան միջամտութեանը, պաշտպանութիւն չէր կարող գտնել. մանաւանդ որ հարաւայիններն իրանց ընդդիմութեամբ այդ օրէնքի և միւս բոլոր կանոնների ոչնչացնելու առիթ եղան:

Առաջին անգամ հիւսիսայինների դրութիւնը աննախանձելի էր. դրա համար նախագահը պատուիրեց շատ զէնքեր և ռազմամթերք հասցնել Հարաւ, այնպէս որ Հիւսիսի զինատները բոլորովին դատարկուեցտն: Աբրահամ Լինկոլնը հազեւ 1861-ի Մարտի 5-ին բարձրացաւ նախագահական աթոռը: Նրա թշնամիններն արդէն պատրաստ էին առանձին նախագահ ընտրելու իրանց համար—ընտրեցին

Զեֆֆերսօն Դէվիսին և չյապաղեցան յարձակուելու Մ. Նահանգների այն բերդերի վրայ, որոնք գտնվում էին Հարաւի մօտ:

Պատերազմը չորս տարի տևեց: Լինկոլնը շուարած էր մնացել և չգիտէր թէ մըտեղից պէտք է հարիւր հազար մարդու կերակուր և հագուստ հասցնել, բայց հիւսիսային նահանգներն ամեն բան հասցնում էին անձնագոհութեամբ, համբերութեամբ և առատութեամբ և ամեն անգամ գործում էին անվեհեր կերպով՝ գործի յաջողութեան համար:

Լինկոլնի նախագահութեան ժամանակը լրացաւ, բայց դեռ Հարաւը չյաղթուեց. այդ, ի-հարկէ, նրա համար կուսահատական փող էր: Այժմ հարկ է իմանալ թէ՝ արդեօք նրա մըտերիմները հաւատարէմ մնացին իրան, թէ ոչ, կամ թէ մի քիչ տատանուեցան արած զոհութիւնների ծանրութիւնից: Լինկոլնը երկրորդ անգամ ընտրուեցաւ: Ժողովուրդն ի-հարկէ համակրում էր նրա բոլոր արածներին:

Աբրահամի վերջին ընտրութիւնը հարաւայինների համար սարսափելի մի հարուած էր. նրանք նախատեսնում էին իրանց կանխահաս կործանումը և պատերազմում էին յուսահատութեամբ: Նրանք խոլս չէին տալիս ամեն


տեսակ չարագործութիւնից և անամօթութիւնից, բայց միշտ անաջող էր լինում նրանց գործը: Արդէն Լինկոլնի վերջին ընտրութիւնից անցել էր չորս ամիս, երբ նրանք սպասում էին վեցշին հարուածին և — ստրուկտուն ազատ մարդիկ դառնան...:

Նշմարտութիւնը պահանջում էր լիշել, որ ստրուկները ակնկառուց սպասում էին իրանց վիճակի վճռին և ինչքան ուրախ էին, երբ Լինկոլնը նրանց զէնքի հրաւիրեց: Իրանց ազատութեան համար նրանք պատերազմում էին քաջաբար: Բայց նրանց՝ բացի ստրկութիւնից ազատելուց՝ դեռ շատ բան կար անելու: Հարկանքը էր մտածել նրանց մտաւոր զարգացման համար ևս. — մուցնել նրանց մէջ ուսում, արհեստ, գիտութիւն ևն ևն. այդ էր Աբրահամ Լինկոլնի նպատակը: Դժբաղդաբար նրան վիճակուած էր այդ բաղդը, այդ ցանկութիւնը: Մենք սկզբում տեսանք թէ ինչ չպէս նա սպանուեց — զոհ գնաց ստրկատէրերի փոքրոգութեան և ապիրատութեան՝ «ազատութեան մարտիրոս» բառերի բռն մտքով:

Այս, ինչու բարի մարդկանց գործելու ապարագ զնամքամատչափ փշոտ է լինում...:

Վ Ռ Ի Պ Ա Կ,

Եր.	Տող	Սիալ	Ուղիղ
10	15	Երիդասարդը	Երիտասարդը
19	3	ուշին	ունշին
30	21	անցել	անցնել
37	11	տուք	դուք
45	23	ուրախութիւց	ուրախութիւնից
103	5	Նիւ-Աալէմ	Նիւ-Աալէմ
140	24	Չոյլ	Ծոյլ



Ապահովագործութեան
Հայաստանի Հանրապետութեան

11. 9. 11.

11. 9. 11.

11. 9. 11.

11. 9. 11.

11. 9. 11.

11. 9. 11.

11. 9. 11.

11. 9. 11.

11. 9. 11.

11. 9. 11.

11. 9. 11.

11. 9. 11.

2013

«Ազգային գրադարան



NL0057220

2/266

«Ազգային գրադարան



NL0057219

2/2 65

